ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

THIS PUBLICATION IS SPONSORED
BY THE MINISTRY OF DIASPORA
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ
ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ.
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
Լուսակն
2011

INSTITUTE OF ORIENTAL STUDIES
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA

MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC
OF ARMENIA

ARAKS PASHAYAN
LILIT HARUTYUNYAN

THE ARMENIAN COMMUNITY OF SYRIA.
ACTUAL ISSUES

The book is recommended for publication
by the Scientific Council of the
Institute of Oriental Studies, National
Academy of Sciences, Republic of Armenia

YEREVAN
Lusakn
2011

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5
Փ 220

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Գիտական խմբագիր՝
Արամ Գասպարյան
պատմական գիտությունների թեկնածու

Ա. Փաշայան, Լ. Հարությունյան
Փ 220 Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ: Արաքս Փաշայան */պ.գ.թ., դոցենտ/*, Լիլիթ Հարությունյան */պ.գ.թ., դոցենտ/* - Եր.: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2011թ.- 154 էջ:

Աշխատությունում ուսումնասիրվել են Սիրիայի հայ համայնքի պատմական զարգացման որոշ առանձնահատկություններ ու արդի հիմնախնդիրներ: Հետազոտվել են սիրիահայ համայնքում հայկական կրոնական և աշխարհիկ մի շարք կառույցների, հայկական միությունների, հայապահպանության, ինքնության, ինտեգրման, խառնամուսնությունների, հայ համայնքների միջև փոխադարձ ընկալումների, հայկական կրթության և դպրոցների, համայնքի ներուժի, համայնք–Սիրիա պետություն հարաբերությունների, համայնք-Հայաստան կապերի, Սիրիայում արդի ներքաղաքական անկայունության համատեքստում համայնքի հեռանկարի հետ կապված հիմնահարցեր և այլն:

Գիրքը նախատեսված է վերլուծական հանրության և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5

ISBN 978-9939-834-23-8

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2011
© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2011
© «Լուսակն» հրատ., 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 9

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱԼ–ԱՍԱԴՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ /1971-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ/ 24
ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ 34
ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ 34

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ /ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ/ 39
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՍԻՐԻԱՅՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆԻ ՀԵՏ 39
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐՄԱՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԵՏ 44
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍԱՐԳԻՍ ՔԵՇԻՇՅԱՆԻ ՀԵՏ 50
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ 2005-2010թթ. ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀՈՎԻՎ ՊԱՏՎԵԼԻ ՏԱԹԵՎ ԲԱՍՄԱՃՅԱՆԻ ՀԵՏ 56
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԲԸՄ ԿՎ ԱՆԴԱՄ, ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԵԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՎԱՉԳԵՆ ՅԱԿՈՒԲՅԱՆԻ ՀԵՏ ... 61
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ 65
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ՀՄՄ) «ՍԱՐԳԻՍ ՏԽՐՈՒՆԻ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆԱՁԱՐԵԹ ԷԼՄԱՋՅԱՆԻ ՀԵՏ 69
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՈԱԿ ԵՎ ՀԲԸՄ ԱՆԴԱՄ ԴՐ. ՋՈՐՋ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՀԵՏ 73
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍ, ՍԻՐԻԱՅԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴՐ. ՆՈՐԱ ԱՐԻՍՅԱՆԻ ՀԵՏ 80

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՍԻՐԻԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ, ՔԱՐԵՆ ԵՓՓԵ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ԴՐ. ՀԱԿՈԲ ՉՈԼԱՔՅԱՆԻ ՀԵՏ 88
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱԼԵՊԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՀԵՏ 106
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱԼԵՊԱՀԱՅ ԱԶԱՏ ԼՐԱԳՐՈՂ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆ ՀԱՐՈՒԹ ԷՄԱՆՅԱՆԻ ՀԵՏ 109
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՍԻՐԻԱՅԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ, ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ «ԱԶԱՏ-ՀԱՅ» ԿԱՅՔԷՋԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀՐԱՉ ՔԱԼՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ 112
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԻՋԻԳԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԴԻՐԲՈՌՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՐԻՉ, ԱՐԵՎԵԼԱԳԵՏ, ՊՐՈՖ. ԱՐԱ ՍԱՆՃՅԱՆԻ ՀԵՏ 115

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 127
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 130
ՎԵՐՋԱԲԱՆ 132
ЗАКЛЮЧЕНИЕ 136
SUMMARY 140
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 144
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 150

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրիայի հայ համայնքը Մերձավոր Արևելքի ամենահին ու ավանդական համայնքներից մեկն է, որին շատ հաճախ անվանում են նաև Սփյուռքի մայր համայնք: Այն վերակազմավորվեց Հայոց ցեղասպանությունից և Կիլիկիայի հայաթափումից հետո: Եվ չնայած սկզբնական փուլի բազմաթիվ դժվարություններին՝ հայ տարագիրներին, այնուամենայնիվ, հաջողվեց ժամանակի ընթացքում հարմարվել հյուրընկալ երկրի քաղաքակրթական յուրահատկություններին: 1924թ. Սիրիայի քաղաքացիություն ստանալը կարևորագույն նշանակություն ունեցավ սիրիական հասարակության մեջ հայերի ինտեգրման համար: Հայերն աստիճանաբար սկսեցին մասնակից դառնալ երկրի քաղաքական, ռազմական, տնտեսական, հասարակական ու մշակութային զարգացումներին:

Միևնույն ժամանակ արաբական աշխարհը՝ ի դեմս Սիրիայի, դարձավ այն նպաստավոր միջավայրը, որտեղ հնարավոր եղավ պահպանել հայկական ինքնությունն ու ինստիտուցիոնալացնել համայնքային կառույցները: Սիրիայի, մասնավորապես Հալեպի հայ համայնքը, դարձավ արևմտահայերենի և արևմտահայ մշակույթի պահպանման ու զարգացման ամենակարևոր ու բացառիկ օջախներից մեկը ողջ Սփյուռքում:

Սիրիայում հայերն իրավունք ստացան կազմակերպելու իրենց ազգային կյանքը, ազատորեն դավանելու սեփական կրոնը, սովորելու մայրենի լեզուն, զարգացնելու հայկական մշակույթը: Մասնավորապես Հաֆեզ Ալ-Ասադի /1971-2000թթ./ իշխանության գալուց հետո հայերին տրված իրավունքները, այդ թվում՝ կրթության ոլորտում, պետականորեն ամրագրվեցին: Հայերը Սիրիայի զարգացման հարցում ունեցած ներդրման և բարի անվան շնորհիվ՝ կարողացան վայելել թե՛ իշխանությունների և թե՛ հասարակության համակրանքը: Որպես երկրի լիիրավ քաղաքացիներ՝ նրանք էապես նպաստեցին Սիրիայի՝ մասնավորապես սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի աշխուժացմանը:

Սիրիայի հայ համայնքի ազգային կյանքը կազմակերպվեց հայկական կազմակերպությունների և միությունների աշխույժ գործունեության հետևանքով: Սիրիայի երեք հայկական համայնքներն էլ՝ առաքելական, կաթոլիկ և ավետարանական, իրենց կրոնական ու աշխարհիկ կառույցների միջոցով զգալի դեր կատարեցին հայկական հոգևոր ու նյութական արժեքների ստեղծման ու պահպանման, ինչպես նաև համայնքային խնդիրների կարգավորման գործում: Համայնքային տարբեր կառույցների միջոցով սիրիահայերը

մշտապես ամուր կապեր պահպանեցին Հայրենիքի հետ, որը դարձավ ազգային գոյության կարևոր հենասյուներից մեկը:

Սիրիահայ համայնքում առկա հիմնախնդիրների՝ ինքնության, հայապահպանության, հայկական կրթության և դպրոցների, խառնամուսնությունների, ներհամայնքային խնդիրների, փոխադարձ ընկալումների, հայ եկեղեցու, համայնք–պետություն հարաբերությունների, ինտեգրման, և, վերջապես, համայնքի հեռանկարի հետ կապված հարցերի ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական ու գործնական նշանակություն: Առանց նշված խնդիրների քննության՝ անհնար կլինի ամբողջական պատկերացում կազմել սիրիահայ արդի համայնքի և նրանում ընթացող զարգացումների մասին:

Ընդհանրապես, արաբական աշխարհի, այդ թվում, Սիրիայի, հայ համայնքների ուսումնասիրությունն ավելի քան արդիական է՝ մասնավորապես Մերձավոր Արևելքում ընթացող հասարակական-քաղաքական ներկա բարդ ու խրթին գործընթացների համատեքստում: Սիրիայի հայ համայքն այսօր կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Ինչպես երկրի մնացած քաղաքացիները, հայերը նույնպես մտահոգված են Սիրիայում 2011թ. մարտ ամսից սկսված ներքաղաքական ճգնաժամով, ինչն էապես կապված է Մերձավոր Արևելքում «արաբական գարնան» արդյունքում ձևավորված նոր իրավիճակի հետ: Այս տեսանկյունից սիրիահայ համայնքի ներկա ու ապագա շատ իրողություններ պայմանավորված են սիրիական պետականության կայունության և առաջընթացի հետո:

Հիշյալ հետազոտությամբ, որն իրականացվել է Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի համատեղ ջանքերով, մասնավորապես դաշտային հետազոտությունների միջոցով, փորձ է արվում ուրվագծել սիրիահայ համայնքում առկա խնդիրները՝ դրանք դիտարկելով համայնքի հեռանկարի համատեքստում:

Հարկ է նշել, որ հետազոտությունն իրականացնելու շրջանում Սիրիայում ներքաղաքական անկայուն իրավիճակով պայմանավորված, ցավոք, գրքում հնարավոր չեղավ ներառել սիրիահայ հոգևոր և աշխարհիկ բոլոր կառույցներն ու նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև խոսել Սիրիայի՝ հայերով բնակեցված բոլոր շրջանների մասին: Սակայն, այնուամենայնիվ, հաջողվեց ուրվագծել հարցերի հիմնական շրջանակը՝ հնարավորություն ստեղծելով ընդհանուր գծերով պատկերացում կազմել սիրիահայ համայնքի արդի հիմնախնդիրների և հեռանկարի մասին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայերը Սիրիայում (Ասորիքում) բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից: Տիգրան Բ Մեծի օրոք Ասորիքի զգալի մասը որոշակի ժամանակահատված (մ.թ.ա. 80-60-ական թթ.) ընդգրկվել է հայկական տերության կազմում: Հայկական աղբյուրները հիշատակում են, որ այդ ժամանակ հայերի մեծ գաղթ է տեղի ունեցել դեպի Սիրիայի հյուսիսային շրջաններ[1]: Սիրիայում բնակություն հաստատած հայերի թիվը ստվարացել է VIIդ. արաբական տիրապետության հաստատումից հետո: Մեծ թվով հայեր ծառայության են անցել արաբական արքունիքում և բանակում: Հայերի թիվը Սիրիայում մեծացել է մասնավորապես Հայաստանում Բագրատունիների թագավորության անկման /1064թ./, սելջուկյան թուրքերի /1064-1220թթ./ ասպատակությունների, մոնղոլ-թաթարական /1220-1468թթ./ բազմամյա տիրապետության, իսկ հետագայում նաև Կիլիկյան հայկական պետության անկման /1375թ./ հետևանքով: Հայկական տարրը նշված շրջանից ի վեր սկսել է բնակություն հաստատել Դամասկոսում, Փայասում, Ալեքսանդրետում, Հալեպում և այլուր[2]: Սիրիահայ համայնքը մեծապես համալրվել է 1915թ. Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականներով: Սկզբնական շրջանում Սիրիայում հայ գաղթականներն ապրել են ծանրագույն պայմաններում՝ հիմնականում վրանային ճամբարներում: Հատկանշական է, որ սկզբնական փուլում հայերը մտադրություն չունեին վերջնականորեն հաստատվել Սիրիայում, որտեղ նրանք հայտնվել էին միանգամայն նոր, ինչ-որ իմաստով խորթ մի միջավայրում, որն ուներ տարբերակիչ մի շարք գործոններ՝ էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլն: Սակայն հետագայում նրանք հաշտվեցին Սիրիայում հաստատվելու իրականության հետ, իսկ նշված գործոնները պարզապես նպաստեցին հայ տարագիրների էթնիկ և մշակութային ինքնության պահպանմանը[3]:

---

[1] Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Եր., 1964, էջ 428:

[2] Սիրիայում հայերի հնագույն ներկայության մասին մանրամասն տե՛ս Ազէզեան Հ., Հայերի հնագոյն ներկայութիւնը Սուրիոյ մէջ, Տաթեւ հայագիտական տարեգիրք, 1, Հալէպ, 2008, էջ 207-257:

[3] Гриншилдс Х., Т., Поселение армяснких беженцев в Сирии и Ливана в 1915-1939гг., Ереван, 1982/2, стр. 10.

Հայերը ժամանակի ընթացքում սկսեցին ինքնակազմակերպվել որպես համայնք, ցուցաբերեցին քաղաքական կազմակերպվածություն՝ ինտեգրվելով նաև Սիրիայի հասարակական կյանքում: Աստիճանաբար տարագիրների զանգվածը վերաճեց կազմակերպված ու կենսունակ համայնքի, որը ձգտում էր ամեն կերպ պահպանել ազգային ինքնությունը: Այս գործընթացում զգալի ներդրում ունեցավ Հայ առաքելական եկեղեցին, որը, իր բուն գործառույթներին զուգահեռ, բացառիկ դեր խաղաց տարագիրների, այդ թվում, հայ որբերի և կանանց հավաքագրման, նրանց օգնություն տրամադրելու գործում: Հայ առաքելական եկեղեցու հովանու ներքո էր գործում Աղքատախնամ հանձնախումբը, որը համակարգում էր տարագիրներին տրամադրվող օժանդակությունը: Հայերի շրջանում ակտիվ գործունություն էին ծավալում նաև հայկական հայրենակցական, մշակութային ու բարեգործական միություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև ազգային քաղաքական կուսակցությունները /Սոցիալ-դեմոկրատ հնչակյան /ՍԴՀԿ/, Ռամկավար ազատական /ՌԱԿ/ և Հայ հեղափոխական դաշնակցություն /ՀՅԴ//, որոնք համայնքային խնդիրների լուծման նպատակով համագործակցում էին եկեղեցու հետ[4]:

Նշենք, որ կուսակցությունների շուրջ ձևավորվեցին որոշակի գործառույցներ ունեցող ներհամայնքային կառույցներ, որոնք աստիճանաբար ձեռք բերեցին իշխանության որոշակի լծակներ: Հատկանշական է, որ Սիրիայում հայ համայնքի ձևավորման ամենավաղ շրջանից ի վեր հայկական ազգային կուսակցությունները սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել, որոնք, սակայն, ի սկզբանե ունեին որոշ տարակարծություններ[5]:

Փաստորեն, Սիրիայում հաստատված հայ համայնքն ինչպես քաղաքական, այնպես էլ ներհամայնքային խնդիրներներին առնչ-

---

[4] Дятлов В., Мелконян Э., Очерки социокультурной типологии. Армянская диаспора, Ер., Институт Кавказа, 2009, стр. 112.

[5] Այս մասին մանրամասն տե՛ս Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947, էջ 204, Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը. անցեալին եւ ներկայիս, Պէյրութ, 1964, էջ 264, Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Եր., 1986, էջ 209, Մարգարյան Ն., Հայ տարագիրները Սիրիայում և հայ-արաբական հարաբերությունները 1915-1922թթ. /ատենախոսություն/, Եր., 2011, էջ 151, Косач Г., Красный флаг над Ближним Востоком?, М., 2001, сс. 309-322.

վող հարցերում այնքան էլ միատարր չէր[6]: Եվ չնայած առկա տարաձայնություններին՝ հայ համայնքն իր օրակարգում ուներ խնդիրներ, որոնց շուրջ դրսևորում էր միասնականություն:

Սիրիայում հայերի սոցիալ-քաղաքական կյանքում նոր առաջընթաց սկսվեց նրանց՝ 1924թ. հունիսի 12-ին Ազգերի լիգայի կողմից տրամադրված ինքնության վկայագրերի[7], և ապա նույն թվականի ամռանը Սիրիայի քաղաքացիություն ստանալուց հետո: Հայերին թույլատրվեց մասնակցել ընտրություններին, ինչն արաբների կողմից միանշանակ չընդունվեց, քանի որ ֆրանսիական մանդատային իշխանությունները հայերի հետ համագործակցությունը կարող էին պաշտոնապես տեղափոխել քաղաքական ոլորտ:

Այսպիսով՝ քաղաքացիություն ստանալը նշանակալի իրադարձություն էր հայ համայնքի՝ ոչ միայն որպես ինստիտուցիոնալ կառույցի ձևավորման, այլ նաև հայ-արաբական հարաբերությունների զարգացման տեսանկյունից: Հետագա տարիներին, արդեն որպես քաղաքացի, հայերն ակտիվորեն մասնակցում էին Սիրիայում ազգային-ազատագրական շարժումներին[8], նաև՝ արաբ-իսրայելական պատերազմներին: 1940-ականների վերջին և 1950-ականներին Սիրիայում տեղի ունեցած բազմաթիվ հեղաշրջումները, այնուհետև 1958-1961 թթ. Սիրիայի և Եգիպտոսի միավորումը որոշակի բացասական ազդեցություն ունեցան ողջ երկրի, այդ թվում՝ հայերի համար: Սակայն արդեն 1967 թ. հայ համայնքը պատմական ձեռքբերում ունեցավ: Նրան հաջողվեց սիրիական պետության հետ ձեռք բերել կարևորագույն մի փոխզիջում: Հայերին Սիրիա-

---

[6] Migliorino N., (Re) constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, New York, Oxford, 2008, p. 55-56.

[7] Մեծ Եղեռնից փրկված շուրջ 320 հազար հայ տարագիրների, այդ թվում՝ Սիրիայում, ստացան «Նանսենյան անձնագրեր»: Մանրամասն տե՛ս Հայ դատի նվիրյալը. Ֆրիտյոֆ Նանսեն, Փաստաթղթերի ժողովածու, Եր., 2005, էջ 22-23:

[8] Նշենք, որ դրանից տասնամյակներ առաջ՝ Սիրիայում ազգային-մշակութային և ազգային-քաղաքական զարթոնքի (Նահդայի) շրջանում, ծագումով հայ գործիչները մեծ դեր են խաղացել: Նրանցից են արաբական պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիրներից մեկը՝ նահդայական գործիչ Ադիբ Իսհակն (1856-1882) ու արաբական հրապարակախոսության նույնպես հիմնադիր համարվող Ռզկալլահ Հասունը (1823-1880): Այս մասին տե՛ս Ե.Նաջարյան, Արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդան, Եր., 1988:

յում թույլատրվեց հայկական /սակայն պետական համարվող/ դպրոցներում չորս ժամ ազգային լեզու՝ հայերեն և երկու ժամ հայերենով կրոն դասավանդել[9]:

Հայ համայնքի համար ազգային գործունեություն ծավալելու էլ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, երբ իշխանության եկավ Հաֆեզ Ալ-Ասադը /1971-2000 թթ./: Թե՛ վերջինիս և թե՛ Բաշարի Ալ-Ասադի օրոք հանդուրժողական քաղաքականություն տարվեց փոքրամասնությունների նկատմամբ: Հաֆեզ Ալ-Ասադի օրոք պետության հետ հայերի ձեռք բերված պայմանավորվածությունները վերջնականորեն ամրագրվեցին: էլ ավելի նպաստավոր պայմաններում շարունակեցին գործել հայկական տասնյակ մարզական և մշակութային միությունները, բարեգործական հաստատությունները և, վերջապես, վարժարանները: Ավելի սերտացան կապերը Հայաստանի հետ: Այս ամենին զուգահեռ՝ հայերը կարողացան ակտիվ դերակատարություն ստանձնել Սիրիայի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում[10] :

Սիրիայում Հայաստանյայց առաքելական եկեղեցին ունի երկու թեմ՝ Բերիո (առաջնորդանիստը՝ Հալեպի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցի), որ ենթակա է Անթիլիասին և Դամասկոսի (առաջնորդանիստը՝ Դամասկոսի Ս.Սարգիս եկեղեցի), որ ենթակա է էջմիածնին[11]:

Ներկայումս Բերիո թեմի առաջնորդն է Գերշ. Տեր Շահան եպիսկոպոս Սարգսյանը, իսկ Դամասկոսի թեմի առաջնորդն է Գերշ. Տեր Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը: Շահան եպս. Սարգսյանը սիրիահայ համայնքում, բացի հոգևոր-կրոնական գործունեությունից, իրականացնում է նաև մշակութային և հայագիտական ակտիվ գործունեություն: Նրա աջակցությամբ են հրատարկվում գրական-գեղարվեստական «Երթ» և «Տաթև» հայագիտական տա-

---

[9] Չնայած հայ ժողովրդի պատմություն առարկայի արգելքին՝ պետության հետ ներքին պայմանավորվածության արդյունքում, իրականում շաբաթը վեց ժամ հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն և քրիստոնեական կրոն է դասավանդվում հայկական դպրոցներում:

[10] Ներկայումս Սիրիայի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորը հայազգի Միսակ Բաղբուդարյանն է՝ Դամասկոսից: Սիրիայի գրողների միությունն ունի երեք հայ անդամ /Ա. Քեշիշյանը և Հ. Քալսահակյանը՝ Հալեպից և Ն. Արիսյանը՝ Դամասկոսից:/ Բացի այդ, Սիրիայում կան բազմաթիվ հայ բժիշկներ, ճարտարապետներ, ուսուցիչներ, երաժիշտներ, մեդիայի ոլորտի աշխատողներ:

[11] էջմիածնական թեմին է պատկանում նաև Հոմսի հայկական եկեղեցին:

ռեգրքերը, թեմի պաշտոնաթերթ համարվող «Գանձասարը»[12], հայոց լեզվի դասագրքեր և այլն: Սիրիայում Բերիո թեմի առաջնորդարանի հովանավորությամբ գործում է Սիրիահայ գրողների միությունը:

Սիրիահայ համայնքի հիմնական մասը Հայ առաքելական եկեղեցու հետևորդներն են, կան նաև հայ կաթոլիկներ[13] և հայ ավետարանականներ: Հայ կաթոլիկներն ունեն առաջնորդարաններ Դամասկոսում և Հալեպում[14], իսկ հայ ավետարանականները՝ համայնքապետություն Հալեպում[15]: Ներկայումս սիրիահայ համայնքը պաշտոնապես հաշվվում է 100.000: Համայնքի թվաքանակի վերաբերյալ շրջանառվում են ավելի նվազ տվյալներ՝ 50.000-80.000-ի շրջանակներում:

Պետության կողմից սիրիահայ առաքելական համայնքը (ինչպես նաև այլ քրիստոնեական համայնքները) դիտարկվում է որպես կրոնական փոքրամասնություն: Համայնքը ղեկավարվում է հոգևոր-կրոնական իշխանության կողմից, որն ունի դատական և իրավական գործառույթներ, ինչն ամրագրված է Սիրիայի Արդարադատության նախարարության կողմից: Եկեցեղին պետության մոտ իր համայնքի ներկայացուցիչն է, իսկ համայնքի մոտ՝ պետության:

Փաստորեն, Սիրիայում դեռևս որոշ չափով պահպանված է միլլեթի ինստիտուտը, որը ձևավորվել է Օսմանյան կայսրության շրջանում: Հայտնի է, որ օսմանյան նվաճողները, գրավելով Կ.Պոլիսը, ոչ մուսուլմաններին բաժանեցին երեք՝ հունական, հայկական և հրեական միլլեթների կամ կրոնադավանական համայնքների[16]:

---

[12] http://www.kantsasar.com/

[13] Հայ կաթոլիկների մասին մանրամասն տե՛ս նաև Atamian P., Histoire de la communauté Arménienne catholique de Damas, Beyrouth 1964, նաև՝ Դամասկոսի հայ կաթողիկե բարեսիրական միության տարեկան տեղեկագրերը:

[14] Դամասկոսի կաթոլիկ հայերի առաջնորդը Հովսեփ եպիսկոպոս Արնաուտյանն է, իսկ Հալեպի հայ կաթոլիկ համայնքի առաջնորդը՝ Պետրոս Արք. Միրաթյանն է:

[15] Սիրիայի հայ ավետարանական համայնքի համայնքապետը Հարություն Սելիմյանն է: Սիրիայի հայ ավետարանականների մասին տե՛ս նաև՝ Հովյան Վ., Սիրիայի հայ ավետարանական համայնքը, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5027

[16] Մանրամասն տե՛ս՝ Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Անթիլիաս, 1954, էջ 102-103:

Սիրիահայ համայնքներում գործում են տեղական ազգային իշխանություններ: Այս ինստիտուտը գործում է դեռևս 1853թ. կազմված և 1863-ին սուլթանական կառավարության կողմից վավերացված ազգային սահմանադրության հիման վրա: Համայնքի ներքին գործերը վարում է համայնքային ընտրություններով ձևավորվող օրենսդիր մարմինը՝ Գավառական ժողովը: Իսկ համայնքի գործադիր մարմինը՝ Քաղաքական ժողովը, ընտրվում է Գավառական ժողովի կողմից:

Չնայած արդեն Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներից հայերը գրեթե չեն մասնակցել երկրի քաղաքական զարգացումներին՝ կենտրոնանալով հայապահպանության խնդիրների վրա, սակայն նրանք ներգրավված են Սիրիայի սոցիալական և մշակութային գործընթացներում, գիտակցվում են որպես Սիրիայի լիիրավ ու արժանավոր քաղաքացիներ:

Սիրիայում հայկական կուսակցությունները գործում են սահմանափակ ձևով՝ հասարակական, մշակութային և մարզական կազմակերպությունների կամ միությունների (*ակումբների)* շրջանակներում: Սիրիահայ համայնքն, ըստ էության, ցանցային կառույց է (network), քանի որ բոլոր միությունները և կրոնադավանական ուղղություններն ունեն իրենց ենթակառույցները կամ մասնաճյուղերը Սիրիայի գրեթե բոլոր հայաշատ շրջաններում՝ Հալեպում, Դամասկոսում, Քեսաբում, Կամիշլիում, Լաթաքիայում, Հոմսում, և այդ ճանապարհով յուրաքանչյուր շրջանակ սերտորեն կապված է իր մասնաճյուղերի հետ: Ակումբներում կազմակերպվում են մշակութային և մարզական տարբեր միջոցառումներ: Շատ հաճախ Հայաստանից, ինչպես նաև Սփյուռքի տարբեր շրջաններից և արտերկրից հրավիրվում են մշակութային և հասարակական-քաղաքական գործիչներ: Սիրիայում գործող միությունները պաշտոնապես արտոնված են գործում, գրանցված են Սիրիայի Սոցիալական և աշխատանքի նախարարությունում և ունեն իրենց ներքին կանոնադրությունը: Սիրիայում գործում են Համազգայինի հայ կրթական և մշակութային միության, Նոր սերունդ մշակութային միության, Հայկական բարեգործական ընդհանուր միության, Թեքեյան մշակութային միության մասնաճյուղերը, Հայ կաթողիկե միությունը և այլն:

Սիրիայում գործունեություն ծավալող միությունների շարքում իր ուրույն տեղն ունի Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) սիրիական մասնաճյուղը, որը հիմանդրվել է 1910թ.

Հալեպում[17]: Հայոց ցեղասպանությունից հետո ՀԲԸՄ-ն իր 40 մասնաճյուղերն է հիմնել Սիրիայի տարբեր բնակավայրերում: 1939թ. Ալեքսանդրետի սանջակը Թուրքիային հանձնելուց և 1946-1948թթ. սիրիահայերի՝ Հայաստան ներգաղթից հետո, միության մասնաճյուղերի թիվը նվազեց: 1975թ. Սիրիայում գործում էր 6 մասնաճյուղ՝ 1430 անդամներով[18]: Ներկայումս Սիրիայում ՀԲԸՄ կենտրոնը Հալեպն է, գործում են նաև Դամասկոսի, Լաթաքիայի (1927թ.-ից), Կամիշլիի (1932 թ.-ից), Յակուբիեի (1935 թ.-ից) և Քեսաբ-Քարադուրանի (1931թ.-ից) մասնաճյուղերը[19]:

Հայ բարեգործական ընդհանուր միության մարզական և մշակութային կազմակերպությունը Հայ երիտասարդաց ընկերակցությունն /ՀԵԸ/ է, որը հիմնվել է 1931թ. Բեյրութում: ՀԵԸ-ն ունի «Ադամյան» թատերախումբը /Հալեպ/: Հալեպում ՀԵԸ մասնաճյուղը հիմնվել է 1932-ին, իսկ Դամասկոսում՝ 1938-ին[20]:

Սիրիայի ՀԲԸՄ շրջանային հանձնաժողովին ենթական են երկրի բոլոր մասնաճյուղերն ու օժանդակ մարմինները՝ կրթական, առողջապահական, շինարարական, մատենագիտական և այլ հանձնախմբերը: Կրթական հանձնախումբը հիմնել է «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամը, որը նպաստներ է տրամադրում հանգստի անցած ուսուցիչներին և վաստակավոր մտավորականներին, նյութապես օգնում է Հալեպի համալսարանում սովորող հայ ուսանողներին: ՀԲԸՄ հովանավորությամբ են գործում Հալեպի Լազար Նաճարյան–Գալուստ Կյուլպենկյան, Դամասկոսի Կյուլլապի–Կյուլպենկյան վարժարանները:

Ի դեպ, Հալեպի ՀԲԸ Միության մատենագիտական հանձնախմբի հովանավորությամբ է հրատարկվում «Գեղարդ» սիրիահայ տարեգիրքը: Հալեպում ՀԲԸՄ հովանու ներքո է գործում նաև «Սարյան ակադեմիան»:

Բավական ակտիվ գործունեություն է իրականացնում նաև Համազգային հայ կրթական և մշակութային միությունը, որը հիմնադրվել է 1930թ., Հալեպում: Այն ենթակա է կենտրոնական վարչությանը, որը գործում է Բեյրութում: Միությունը մասնաճյուղեր ունի Դամասկոսում՝ «Լևոն Շանթ», Լաթաքիայում՝ «Վահան Նավասար-

---

[17] ՀԲԸՄ կազմավորման մասին մանրամասն տե՛ս AGBU, A Brief Overview of AGBU in Lebanon, 2001, pp. 3-7, Մելքոնյան է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:

[18] «Գեղարդ», Սուրիահայ տերեգիրք, Ա գիրք, Հալեպ, էջ 481-482:

[19] Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 527:

[20] Սարգսյան Ա., Հայ երիտասարդաց ընկերակցություն, Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 669:

դյան», Կամիշլիում՝ «Ավետիս Ահարոնյան», Հալեպում՝ «Նիկոլ Աղաբալյան», «Հայ երիտասարդաց միություն», Քեսաբում՝ «Համո Օհանջանյան»[21]:

Հալեպի «Նիկոլ Աղբալյան» մասնաճյուղն ունի թատերախումբ՝ «Լևոն Շանթ», պարախումբ՝ «Սարդարապատ», նկարչական արվեստանոց՝ «Արշիլ Գորկի», թատերական, հայագիտական դասընթացներ, երգչախմբեր՝ «Բարսեղ Կանաչյան», «Զվարթնոց»: Ինչ վերաբերում է Դամասկոսի «Լևոն Շանթ» մասնաճյուղին, ապա այն ունի թատերական, երիտասարդական, համալսարանական և այլ հանձնախմբեր[22]:

Ակտիվ գործունեություն է իրականացնում նաև Թեքեյան մշակութային միության Սիրիայի մասնաճյուղը, որը հիմնվել է 1955թ. Հալեպում: Միության հիմնադիր անդամներն էին Խաչիկ Պողոսյանը, Գուրգեն Համալյանը, Նուբար Հակոբյանը, Մկրտիչ Ղազարյանը: Դրա հիմնական նպատակն է հայ մշակույթի զարգացումը, հայապահպանությունը և այլն: Միությունն ունի «Ռուբեն Հերյան» և «Էոժեն Բաբազյան» ակումբերի վարչություններ, տիկնանց վարչություն, երիտասարդաց, ընկերային, թատերական, երաժշտական և այլ հանձնախմբեր[23]:

Սոցիալ–դեմոկրատ հնչակյան կուսակցության հովանու ներքո է գործում «Նոր սերունդ» մշակութային միության Սիրիայի մասնաճյուղը, որը հիմնվել է 1958թ. Հալեպում: Սիրիայում գործում են միության «Անդրանիկ» թատերախումբը (1923թ.-ից), որը մեծ համբավ է վայելում համայնքում, «Ազատ Ղարիբյան» պարախումբը, երգչախումբ, գրական գեղարվեստական հանձնախումբ, տիկնանց օժանդակ մարմինը:

Հայ Կաթողիկե համայնքի պատրիարքարանի հովանու ներքո է գործում Հայ կաթողիկե միությունը, որը հիմնվել է Հայր Գաբրիել Վարդապետ Շատարևյանի նախաձեռնությամբ[24]: Քանի որ նախաձեռնությունը նպատակ ուներ Հայ կաթողիկե եկեղեցու շուրջ համախմբել համայնքի երիտասարդությանը, միությունը սկզբնական շրջանում կոչվեց Հայ կաթողիկե երիտասարդական միություն /Հ-

---

[21] Նույն տեղում, էջ 705:

[22] Սիրիայի Համազգայինի կառույցների մասին մանրամասն տե՛ս http://www.hamazkasyr.com

[23] Սարգսյան Ա., Թեքեյան մշակութային միություն, Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 663:

[24] Տե՛ս Տարեկան տեղեկագիր Դամասկոսի հայ կաթողիկէ բարեսիրական միութեան, 2006, էջ 60:

ԿԵՄ/, իսկ 1972թ., ավելի ընդլայնելով գործունեության շրջանակները, այն վերանվանվեց Հայ կաթողիկե միություն /ՀԿՄ/: Միությունն ունի պատանեկան, երիտասարդական և կանանց վարչություն: Միության գործունեությունը ղեկավարում է խորհրդի ժողովը: Հայ կաթողիկե միության մշակութային կառույցներից է «Քնար» երգչախումբը, որն իր ուրույն տեղն ունի սիրիահայ մշակութային կյանքում: Այն հիմնվել է 1960-ականների սկզբներին Անդրանիկ Վարդապետ Կռանյանի կողմից: Երգչախումբը, որն այժմ ղեկավարում է Շանթ Քեշիշյանը, գործում է Դամասկոսում և մասնակցել է բազմաթիվ տեղական և տարածաշրջանային փառատոների:

Սիրիահայ համայնքի բարեսիրական շրջանակներում գործում են «Հովարդ Կարագյոզյան» հաստատությունը, Ձինիշյան հիշատակի ծրագրի տեղական մարմինները, «Ալթունյան», «Մազլումյան», «Աստուրյան» հիվանդանոցները, «Ձեբեջյան» ակնաբուժարանը, «Կյուլպենկյան» ծննդատունը և այլն:

Համայնքում գործում են նաև մի շարք այլ կազմակերպություններ ու միություններ, որոնցից են Հայ մարմնամարզական միությունը /ՀՄՄ՝ հիմնադրվել է 1921թ./, Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը /ՀՄԸՄ/, Սիրիահայ օգնության խաչը /ՍՕԽ՝ հիմնվել է 1929թ./, «Տխրունի» ուսանողական–երիտասարդական միության Սիրիայի մասնաճյուղը /հիմնվել է 1969թ./ և այլն:

* * *

Սիրիայում գործող հայկական դպրոցների (թե՛ ամենօրյա, թե՛ կիրակնօրյա) թիվն այսօր անցնում է 30–ը[25]: Ամենահին դպրոցները՝ Ազգային Հայկազյան վարժարանի և Հայ ավետարանական Նահատակաց միացյալ վարժարանի, հիմնադրումները թվագրվում են 1850-ական թվականներին: Հայկազյան վարժարանը բացվել է Հալեպում Հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանի ջանքերով, իսկ Հայ ավետարանական Նահատակյաց միացյալ վարժարանը՝ Քեսաբում[26]՝ հայ ավետարանական համայքնի կողմից: Հաջորդ դպրոցը՝ Ս. Գր. Լուսավորիչ վարժարանը, հիմն-

[25] Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002, էջ 205:

[26] Այն հիմնադրվել է 1848թ. Քեսաբում և կոչվել է Հայ ավետարանական երկսեռ վարժարան: 1959թ. դառնալով նախակրթարան՝ կոչվել է Հայ ավետարանական նահատակաց վարժարան: 1981-1982 ուսումնական տարում վարժարանին են միացել Քյորքյունեի, Էքիզ–օլուքի և Քարադուրանի դպրոցները, իսկ վարժարանը ստացել է Հայ ավետարանական նահատակաց միացյալ վարժարան անվանումը:

վել է 1907թ.՝ Հայ կաթոլիկ եկեղեցու հավանավորությամբ /վերաբացվել է 1973թ./, դարձյալ Հալեպ քաղաքում, Հայ քույրերի Անարատ հղության վարժարանը /հիմնվել է 1899թ., Հալեպ, վերաբացվել է 1973թ./, Կիլիկյան ճեմարանը /1921թ., Հալեպ/, Ազգային Նահատակաց վարժարանը /1932թ. Ռաս ալ–Այնում/, Հայ ավետարանական /Բեթել/ վարժարանը /1922թ., Հալեպ/, Ազգային Սահակյան վարժարանը /1927թ. Հալեպ/, Մխիթարյան վարժարանը /1936թ., Հալեպ, վերաբացվել է 1973թ./, Քարեն Եփփե ճեմարանը /1947թ., Հալեպ/, Նաճարյան–Կյուլպենկյան երկրորդական վարժարանը /ՀԲԸՄ, 1954թ., Հալեպ/, Կրթասիրաց վարժարանը /1924թ., Հալեպ/, Ազգային Մեսրոպյան երկսեռ վարժարանը /1923թ., Հալեպ/, Ազգային Զավարյան վարժարանը /1929թ., Հալեպ, սկզբնապես կոչվել է Ներսեսյան վարժարան/, Ազգային վարժարանը /1932թ., Կամիշլի/, Ազգային Միացյալ վարժարանը /1929թ., Դամասկոս/, Կյուլլապի–Կյուլպենկյան վարժարանը /1929թ., Դամասկոս/, Ազգային Թարգմանչաց ճեմարանը /1898թ., Դամասկոս/ և այլ դպրոցներ Սիրիայի տարբեր քաղաքներում, ուր ապրում է հայություն[27]:

Բոլոր դպրոցները Սիրիայի կրթական համակարգի կազմի մեջ են և պարտադիր իրականացնում են պետական կրթական ծրագիրը: Բոլոր հայկական դպրոցները Սիրիայում վճարովի են, սակայն սոցիալապես անապահով և ոչ վճարունակ ընտանքիների երեխաներին ուսման հարցում միանշանակ աջակցում են եկեղեցին և հայկական միությունները:

Մինչև 1950-1960–ական թթ. Սիրիայի հայկական դպրոցներն ազատ էին իրենց գործունեության մեջ: Չկային որոշակի սահմանափակումներ հայագիտական առարկարների՝ հայոց լեզվի, հայ գականության, հայ ժողովրդի պատմության և կրոնի ուսուցման հարցում: Ավելին, բոլոր հայկական դպրոցների տարրական դասարաններում /նախակրթարաններում/ բոլոր առարկաների ուսուցումը տարվում էր հայերենով՝ ներառյալ արաբերենը և թվաբանությունը:

Սիրիայում հայկական տարրական դպրոցներում շաբաթական դասավանդվող առարկաների ցանկն ու դրանց ժամաքանակը 1960-1961թթ.[28]

---

[27] Հարությունյան Ն., նշվ. աշխ., էջ 205-206:

[28] Bedian A.N., A Study of Elementary Schools in Syria, Related to their History, Background and Teacher's Belief's, MA Thesis, Beirut: American University of Beirut, 1961, p. 47: Ըստ Migliorino Nicola, նշվ. աշխ., էջ 119:

Առարկաներ	I Դասա-րան	II Դասա-րան	III Դասա-րան	IV Դասա-րան	V Դասա-րան	VI Դասա-րան
Արաբերեն	12	11	10	10	8	8
Թվաբանու-թյուն /արաբե-րեն/	3	3	3	5	5	5
Հասարակա-կան գիտություններ /արաբերեն/	-	-	1	2	5	5
Գիտություն /արաբերեն/	1	1	1	3	3	3
Անգլերեն	-	-	-	3	3	3
Երգեցողություն	2	2	2	1	1	1
Նկարչություն և ձեռքի աշխա-տանք	4	4	4	3	3	3
Ֆիզկուլտուրա	2	2	2	2	2	2
Հայերեն լեզու	8	9	9	8	7	7
Թվաբանու-թյուն /հայերեն/	3	3	3	-	-	-
Գիտություն /հայերեն/	1	1	1	-	-	-
Կրոն	2	2	2	3	3	3
Շաբաթվա ամբողջական ժամաքանակը	38	38	38	40	40	40

Սիրիայում հայկական դպրոցները, աշակերներն ու ուսուցիչ-ներն՝ ըստ կրոնական պատկանելության, 1958-1959թթ.[29]

Դպրոցների կրոն. պատ-կանելություն	Դպրոցների թվաքանակը	Աշակերների թվաքանակը	Ուսուցիչների թվաքանակը
Հայ առաքե-լականներ	41	8,734	531

[29] Նույն տեղում, էջ 21: Ըստ Migliorino N., նշվ. աշխ., էջ 120:

Հայ կաթո-լիկներ	15	5,744	231
Հայ ավետա-րանական	12	1,456	104
Ամբողջը	68	15,934	866

Սիրիայում հայկական դպրոցների աշխարհագրական տեղա-բաշխվածությունը 1958-1959թթ.[30]

Վայրը	Դպրոցների թվաքանակը	Աշակերտու-թյան թվաքա-նակը	Ուսուցիչների Թվաքանակը
Հալեպ	29	11,263	559
Դամասկոս	7	1,113	74
Լաթաքիա	1	187	12
Հոմս	1	124	8
Քեսաբ	3	240	25
Քարադու-ման	3	82	7
Քյորքյունե	1	24	3
Էքիզ-Օլուք	1	10	1
Բաղջաղազ	1	6	1
Այն Ալ–Արաբ	2	253	15
Դերիկ	1	85	3
Կամիշլի	3	1,764	78
Ամուդա	1	41	4
Հասաքե	2	628	20
Դերբեսի	3	215	16
Ռաս Ալ–Այն	1	84	5
Աֆրին	1	15	2
Յակուբիե	1	50	5
Ազազ	1	62	5
Թել Աբիադ	1	110	4
Ռաքքա	1	135	7
Դեյր Ալ–Զոր	1	30	3
Զարաբլուս	2	163	9

[30] Նույն տեղում, էջ 119-123:

Սակայն հատկապես 1963թ. Սիրիայում բաասականների իշխանության գալուց հետո[31] արգելքներ և սահմանափակումներ մտցվեցին նաև կրթության ոլորտում, որոնք ուղղակիորեն ազդեցին հատկապես ազգային փոքրամասնություններին պատկանող դպրոցների կրթական ծրագրերի վրա: Սիրիահայերը տագնապալից օրեր ապրեցին: Վտանգի էր ենթարկված հայկական դպրոցների գոյությունը: 1965թ. երկրի արաբականացման քաղաքականության համատեքստում կրկին մի շարք սահմանափակումներ մտցվեցին կրթության ոլորտում: Արդյունքում բոլոր դպրոցներն անցան պետության ենթակայության ներքո՝ արաբերեն անվանումներով[32]: 1967թ. սեպտեմբերի 9–ին հրապարակվեց օրենք: Ըստ այդմ՝ երկրի բոլոր դպրոցներում պետք է /այդ թվում նաև փոքրամասնություններին պատկանող/ նշանակվեին արաբ տնօրեններ, հայկական դպրոցներում արգելվեցին հայագիտական բոլոր առարկաների /հայոց լեզու, հայ գրականություն, հայ ժողովրդի պատմություն/ դասավանդումը, բացի կրոնից, արգելվեց տարրական դասարաններում հայերենով ուսուցման կազմակերպումը, պարտադրվեց առաջինից 12–րդ դասարան ուսուցումը կազմակերպել արաբերեն, ընդհուպ մինչև կրոնի /քրիստոնեություն/ պատմության ուսուցումը 9–րդ դասարանում /որն ավարտվում է պետական քննությամբ/, պետականորեն սահմանվեց աշակերտների ուսման վճար, բոլոր դպրոցները պետությունից ստանում էին որոշակի ֆինանսավորում, ուսուցիչների վարձատրության չափը նույնպես որոշում էր պետությունը, բոլոր դպրոցներին պարտադրվեց պետական կրթական ծրագրերի անխափան կատարում[33]:

Հայկական շատ դպրոցների տնօրենություններ պարզապես չցանկացան ենթարկվել վերոնշյալ սահմանափակումներին և նախընտրեցին փակել դպրոցները որոշ ժամանակով: Տվյալ ժամանակաշրջանում անհրաժեշտ էր վարել ճկուն քաղաքականություն՝ իրավիճակից նվազագույն կորուստներով դուրս գալու համար: Մշակվեցին նոր մոտեցումներ և ժամանակի ոգուն համապատասխան գործելակերպ՝ հիմք ընդունելով «որոշ մասը կորցնելով՝ ամբողջը պահպանելու» սկզբունքը: Այս ռազմավարությունն առաջի-

---

[31] Այս մասին մանրամասն տե՛ս Seale P., The Struggle for Syria: A Study of Post-War Arab Politics, Oxford, New York, Toronto, 1965, p. 121. Petran T., Syria: A Modern History, London and Tonbridge, 1972, p. 103.

[32] Հարությունյան Ն., նշվ. աշխ., էջ 208:

[33] Middle East Journal, Chronology, Syrian Arab Republic, 22 (1), Winter 1968, 1969.

նը կիրառեցին ազգային վարժարանները՝ կտրականապես մերժելով դպրոցները փակելու վտանգավոր գաղափարը:

Իշխանությունների հետ երկարատև բանակցությունների արդյունքում, որոնք ընթանում էին Սիրիայի կրթության նախարարի և իրավաբան Գրիգոր Էպլիղաթյանի միջև /ով տվյալ դեպքում ներկայացնում էր հայ առաքելական եկեղեցին/, հնարավոր եղավ ձեռք բերել հայկական դպրոցներում մայրենի լեզվով ուսուցման թույլտվություն[34]: Այս անգամ կրթության բովանդակության մեջ այն ընդգրկվեց որպես ծիսական լեզու, այսինքն՝ լեզու, որով կատարվում են կրոնական ծիսակատարությունները, աղոթքներն ու երգերը: Ծիսական լեզվի ուսուցմանը տրամադրվեց 4 ժամ, ևս 2 ժամ՝ կրոնի համար: Սա առկա իրավիճակում բավական առաջխաղացում էր[35]:

Կարճատև դադարից հետո հայկական փակված դպրոցները ևս վերաբացվեցին՝ եղած հնարավորությունների սահմաններում իրականացնելով իրենց կրթադաստիարակչական և մշակութային գործունեությունը[36]:

* * *

Նշենք, որ սիրիահայերը ներգրավված են հիմնականում արհեստների և գործարարության ոլորտում: Ներկայում զինվորականության մեջ և պետական ապարատում հայեր գրեթե չկան: Մտավորականները միայն մի փոքր մաս են կազմում: Տարբեր մասնագիտություններ ունեցողների մեջ քիչ չեն Հայաստանում կամ արտերկրում ուսանածները: Ակադեմիական գիտությամբ զբաղվողները եզակի անհատներ են:

Հատկանշական է, որ Սիրիայում վերջին քսան տարիներին հայ երիտասարդները կրթության նկատմամբ շատ ավելի մեծ հակում ունեն, և ավելի շատերն են բարձրագույն կրթություն ստանում, քան 1970-80-ականներին էր, ինչը տրամաբանական գործընթաց է: Խնդիրն այն է, որ նախկինում հայերն ավելի էին հակված դեպի արհեստները: Համայնքի հաստատման սկզբնական և հետագա շրջանում առկա նյութական խնդիրները, բնականաբար, ավելի էին կարևորվում, քան ուսումը:

---

[34] Հարցազրույց իրավաբան Գրիգոր Էպլիղաթյանի հետ, Հալեպ, 12 նոյեմբերի, 2003: Ըստ Migliorino N., նշվ. աշխ., էջ 143:

[35] Հարությունյան Ն., նշվ. աշխ., էջ 213:

[36] Ragland J.K, The Free Educational System of the Republic of Lebanon, PhD. Dissertation, University of Oklahoma, 1969, p. 3.

Վերջին տարիներին, կապված ժողովրդագրական գործոնի հետ, Սիրիայի խորհրդարանում (Մաջլիս Աշ-Շաաբ) կա միայն մեկ հայ պատգամավոր[37]: Հայ թեկնածուն Հալեպի (Բերիո) Հայոց թեմի առաջնորդարանի թեկնածուն է համարվում, ընտրվում է համամասնական ցուցակով: Վերջին խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել 2007թ. ապրիլին: Սիրիայի Ազգային ժողովի ներկայիս հայ պատգամավորը Հալեպից իրավաբան Սումբուլ Սումբուլյանն է, ով երկրորդ շրջանն է Խորհրդարանում: Նա Խորհրդարանի արտաքին կապերի հանձնաժողովի անդամ է և հայ-սիրիական բարեկամության խորհրդարանական հանձնաժողովի նախագահը[38]:

Սիրիահայերը քաղաքականությամբ գրեթե չեն զբաղվում, չնայած հայերի մեջ կան իշխող «Բաաս» կուսակցության անդամներ: Կարելի է ասել, որ հայերը երկրի ներքաղաքական անցուդարձերին նվազագույն մասնակցություն են ունենում:

---

[37] Նախկինում սիրիական պետությունը հայ համայնքին, որպես կանոն, Խորհրդարանում 1-2 տեղ է հատկացրել:

[38] Սիրիայի խորհրդարանականների մասին մանրամասն տե՛ս՝ Արիսյան Ն., Հայ պատգամավորները Սիրիայի Ազգային ժողովում 1928-2011, Դամասկոս, 2011 /արաբերեն/:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱԼ–ԱՍԱԴՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ /1971-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ/

1970թ. նոյեմբերին Հաֆեզ Ալ–Ասադն իրականացրեց «անարյուն հեղաշրջում» և իր ձեռքում կենտրոնացրեց իշխանությունը: Նա հայտարարեց «ուղղիչ շարժման» իրականացման մասին[39]: Վերնշյալ քաղաքականության համատեքստում հայ համայնքը հնարավորություն ունեցավ ձևափոխել իր հարաբերությունները սիրիական պետության հետ: Հաֆեզ Ալ-Ասադը, ով սերում էր փոքրամասնություն հանդիսացող ալավիական համայքնից, գիտակցում էր, որ վարչակարգը կարիք ունի ստանալու նաև երկրի կրոնական փոքրամասնությունների աջակցությունը, ինչը կնպաստեր հենց իր օրինակարգության ընդլայնմանը[40]:

Ոչ պաշտոնական մակարդակում փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողականությունը, այդ թվում նաև հայերի, դրվեց այլ հարթության վրա, որի նպատակն էր ապահովել Ալ-Ասադի վարչակարգի նկատմամբ համայնքների ղեկավար շրջանակների աջակցությունը:

1970–ականների սկզբին կարելի էր խոսել Սիրիայի հայ համայնքի և վարչակարգի միջև առկա «դաշինքի» մասին, որի համաձայն թուլացվեց համայնքի նկատմամբ պետական վերահսկողությունը՝ Ալ-Ասադի վարչակարգին ցուցաբերվող օժանդակությանը կամ իրականացվող քաղաքականության հետ լուռ համաձայնությանն ի պատասխան: Սակայն վարչակարգը հստակ հասկացնել տվեց, որ անհրաժեշտության դեպքում կարող էր սահմանափակել համայնքնային «ազատությունները»[41]:

Սիրիական պետության և հայ համայնքի միջև նոր համաձայնությունը լավագույնս դրսևորվեց հայկական դպրոցների պարագայում: Քանի որ համայնքի քաղաքական կյանքն ակտիվ չէր, նոր քաղաքական ուղեգիծը քիչ նկատելի էր այդ ոլորտում: «Տեսանելի» մակարդակում, այդուհանդերձ, Ալ-Ասադի ներկայացրած ինս-

---

[39] Hinnebusch R., Syria: Revolution from Above, London, New York, 2001, pp. 65-88.

[40] Valter S., La Construction Nationale Syrienne: Légitimation de la Nature Communautaire du Pouvoir par le Discours Historique, Paris, 2002, p. 65.

[41] Migliorino N., նշվ. աշխ., էջ 157:

տիտուցիոնալ բարեփոխումները հնարավորություն տվեցին հայերին պաշտոնապես մասնակցություն ունենալ Սիրիայի քաղաքական կյանքում: 1971թ. Գրիգոր Էպլիղաթյանը Ռուբեն Դիրարյանի հետ առաջադրվեց սահմանադրական խորհրդում ներգրավվելու համար, որը նպատակ ուներ մշակել նոր սահմանադրությունը: Բացի այդ՝ 1973թ. Ազգային ժողովի առաջին ընտրություններից սկսած՝ հայերը շարունակական ներկայություն ունեն Սիրիայի խորհրդարանում[42]:

Անկասկած, հայ թեկնածուների ընտրությունը, ովքեր հաղթանակ տարան ընտրություններում, առաջին հերթին վարչակարգի հավանությունը ստացածներն էին, որից հետո միայն նրանք ձեռք բերեցին նաև համայնքի աջակցությունը: Ընտրատարածքներն այնպես էին բաժանված, որ կառավարության աջակցություն վայելող թեկնածուները վստահաբար ընտրվեին: Հալեպում հայկական «ձայնը», անկախ այն բանից, թե հայկական կուսակցություններն ում էին ցանկանում տեսնել ընտրված, հավաքվում էր մեկ ընտրատարածքում, որ ներառում էր ամբողջ նահանգը: Հայ թեկնածուն Հալեպի նահանգի այլ թեկնածուների հետ ընտրվում էր միասնական համամասնական ցուցակով և բնականաբար պետք է վայելեր իշխանության աջակցությունը: Էական էր, որ նոր վարչակարգը պատրաստակամ էր ապահովել համայնքի ներկայացվածությունն Ազգային ժողովում:

1973թ. ընտրություններում Բաաս կուսակցությունն օժանդակում է Լևոն Վահիդ Ղազալին՝ առևտրական, սիրիաբնակ «հին հայերի» /արաբերեն՝ «արման կադիմ»/ ընտանիքից, ով ընտրվեց Հալեպից՝ քվոտայով, որը սահմանադրությամբ պատկանում էր բանվորներին և գյուղացիներին[43]:

Հաջորդ՝ 1977թ. ընտրություններում, Խորհրդարան վերադարձավ իրավաբան Գրիգոր Էպլիղաթյանը, ով վերընտրվեց 1981 և 1986թթ.: Ինչպես 1953թ., երբ նա առաջին անգամ Շիշեկլիի վարչակարգի օրոք դարձավ պատգամավոր, Էպլիղաթյանը վայելում էր իշխանության աջակցությունը: Երբ ընտրությունները մոտենում էին և պատրաստվում էին ընտրական ցուցակները, Էպլիղաթյա-

---

[42] Բացառությամբ 1990-1992թթ.:

[43] Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովի կեսն ընտրվում էր այդ քվոտայով: 1973թ. մարտի 13-ի Սիրիայի մշտական սահմանադրություն, 53–րդ հոդված:

նը՝ Ալ-Ասադի հանձնարարականով, ներառվում էր ընտրական ցուցակներում[44]:

1970-ականների կեսերին հայ համայնքը դարձավ կառավարության ամենավստահելի համայնքներից մեկը: Հայերը չունեին քաղաքական հավակնություններ Սիրիայում և խնդիրներ չէին ստեղծում վարչակարգի համար:

Լիբանանի Երկրորդ քաղաքացիական պատերազմը /1975-1990 թթ./ հնարավորություն ստեղծեց Սիրիայում իշխանության և հայերի միջև քաղաքական հարաբերությունների էլ ավելի սերտացման համար հատկապես ոչ պաշտոնական մակարդակում: Հայերն աջակցություն ցույց տվեցին Սիրիային, երբ սիրիական բանակն առաջին անգամ ներխուժեց Լիբանան 1976թ. ապրիլին: Սիրիական զորքերի սպայակույտի շենքը տեղակայվեց Բեքայի հովտում գտնվող հայկական Այնճար գյուղում: Սիրիական ներկայությունն Այնճարում ձեռնտու էր նաև հայերին, որոնք տվյալ փուլում պաշտպանության կարիք ունեին լիբանանյան աջ ուժերի զինված խմբավորումների հարձակումներից՝ հատկապես ՀՅԴ–ին, որն այդ փուլում ուներ սիրիամետ կողմնորոշում[45]: Սիրիացիներն, իրենց հերթին, շահագրգռված էին հայերին հետ համագործակցությամբ, ինչպես նաև լիբանանյան քաղաքական դերակատարներից գոնե մեկի՝ հայ համայնքի, չեզոքության պահպանմամբ: Բացի այդ՝ հայերի հետ համագործակցությունը ձեռնտու էր նաև այլ ոլորտներում, մասնավորապես՝ Սիրիա–Թուրքիա, ինչպես նաև ԽՍՀՄ–ի հետ հարաբերություններում:

Հայ պատգամավորները Սիրիայի խորհրդարանում 1971-1990թթ.

Ընտրությունների կամ առաջադրման տարեթիվը	Պատգամավորների անունները	Առաջադրման վայրը
1971	Գրիգոր էպլիղաթյան	–
1971	Ռուբեն Դիրարյան	–
1973	Լևոն Վահիդ Ղազալ	Հալեպ
1977	Գրիգոր էպլիղաթյան	Հալեպ
1981	Գրիգոր էպլիղաթյան	Հալեպ
1986	Գրիգոր էպլիղաթյան	Հալեպ

[44] էպլիղաթյանը մտերիմ հարաբերություններ ուներ փոխնախագահ Աբդ Ալ–Հալիմ Խադդամի հետ:
[45] Minassian G., Guerre et Terrorisme Arméniens, Paris, 2002, pp. 63-64.

Հաֆեզ Ալ–Ասադի նախագահության վերջին տասնամյակում, ինչպես նաև նրա որդու՝ Բաշար Ալ–Ասադի նախագահության շրջանում իշխանությունները երաշխավորում էին երկրի ավանդական կրոնական համայնքների ճանաչումը, սակայն, դրա հետ մեկտեղ, պարբերաբար կանխում էին համայնքային կամ էթնո–մշակութային ինքնության շուրջ որևէ շեշտադրում, ինչն ունակ էր, ըստ իշխանությունների, վնասել հասարակական անդորրը: Սիրացիները շատ լավ տեղեկացված են իրենց գյուղերի և քաղաքների բնակչության էթնիկ, մշակութային և կրոնական նկարագրին և գիտեն այն դերի մասին, որ խաղում է դավանական պատկանելությունը սիրիական քաղաքական կյանքում: Սակայն վարչակարգը «կարմիր գծով» սահմանափակում է վերոնշյալ թեմայով որևէ հասարակական քննարկում: Ե՛վ իշխանությունները, և՛ հասարակությունը լուռ համաձայնության են եկել այդ հարցում, և վերջինս դրսևորում է չեզոքություն և հավատարիմ է հետևյալ կարգախոսին. «Մենք սիրիացիներ ենք» /արաբերեն՝ «Քուլունա սուրիյյուն»/:

Հայկական համայնքը ևս բացառություն չէ. այն շարունակում է գոյություն ունենալ որպես քաղաքական սուբյեկտ և ոչ պաշտոնապես այդպիսին ընկալվում է իշխանության կողմից: Սիրիական բաասական վարչակարգում հայերը բավական քիչ են ներգրավված: 2000–ականների սկզբին միայն 400 հայ էր Բաաս կուսակցության անդամ[46]: Հայկական համայնքային համերաշխությունը շարունակում է բերել փոքր, բայց արժեքավոր քաղաքական կապիտալ: Ոչ պաշտոնական քաղաքական համաձայնությունը պետության և համայնքի միջև, որի մասին արդեն նշվել է, շարունակում է գործել նաև Բաշար Ալ–Ասադի նախագահության շրջանում: Հայկական համայնքն Ասադների իշխանության ներքո ունի կուռ, կայացած համայնքային ինստիտուտներ՝ եկեղեցիներ, ազգային իշխանություն, դպրոցներ, մարզական և մշակութային միություններ և այլն, որոնք էլ համակարգում են համայնքային կյանքն ու գործունեությունը: Միայն հայկական քաղաքական կուսակցությունների գործունեությունը շարունակում է մնալ ոչ արտոնված:

Սիրիայի հասարակական–քաղաքական կյանքում մասնակցության տեսանկյունից հայերին երաշխավորված էր /բացառությամբ երկու տարի ընդմիջման՝ 1990-1992 թթ./, խորհրդանշական ներկայություն սիրիական խորհրդարանում: 1994 թ. երկար տարիներ

---

[46] Sanjian A., “The Armenian Minority Experience in the Modern Arab World”, Bulletin of the Royal Institute for Inter-Faith Studies, 3 (1), 2001, pp. 149-179.

Սիրիայի Խորհրդարանում պատգամավոր լինելուց հետո դատավոր Էպլիղաթյանն անցավ թոշակի: Կասկած չկար, որ վարչակարգը շարունակելու էր վճռորոշ դեր խաղալ նոր հայ ներկայացուցչի ընտրության հարցում: 2003թ. խորհրդարանական ընտրություններում հաջողության հասավ իրավաբան Սումբուլ Սումբուլյանը, ում իրենց աջակցությունը հայտնեցին երեք հայկական եկեղեցիներն ու հայկական ասոցիացիաների ներկայացուցիչների համաժողովը[47]:

Հայերը նաև ներկայացված են Հալեպի տեղական վարչական մարմիններում. 2003թ. նոյեմբերին մեկ հայ տեղ զբաղեցրեց 50 անդամներից բաղկացած Հալեպ քաղաքի խորհրդում /արաբերեն՝ «Մաջլիս ալ–մադինա»/, իսկ մեկ այլ հայ էլ՝ Հալեպի նահանգային խորհրդում /արաբերեն՝ «Մաջլիս ալ–մուհաֆազա»/, որը կազմված է 99 անդամից: Հայերը ներկայացված են նաև Լաթաքիայի տեղական ինքնակառավարման մարմնում:

Հայ պատգամավորները, ովքեր ընտրվել են Սիրիայի խորհրդարանում 1992-2003թթ.

Ընտրության տարեթվեր	Պատգամավորների անունները	Ընտրվելու վայրը
1992	Գրիգոր Էպլիղաթյան	Հալեպ
1994	Սիմոն Լիբարյան*	Հալեպ
1998	Սիմոն Լիբարյան	Հալեպ
2003	Սումբուլ Սումբուլյան	Հալեպ

*Լիբարյանը, ով աշխատում էր տրակտորների գործարանում, ընտրվում էր քվոտայով, որը պատկանում էր «աշխատողներին ու գյուղացիներին»:

* * *

Սիրիական քաղաքական դաշտում, ֆրանսիական մանդատի շրջանից սկսած, կրոնի և պետության միջև հարաբերությունների

[47] Համաժողովը տեղի ունեցավ Հալեպի հայկական թատրոնում, որին մասնակցեց 500 պատվիրակ: Ս.Սումբուլյանն ընտրվեց Հալեպի Անկախ ազգային ցուցակով՝ մոտավորապես 86.000 ձայնով: Տե՛ս՝ Հարցազրույց Ս. Սումբուլյանի հետ, Հալեպ, 14, նոյեմբեր, 2003: Ըստ Migliorino N., նշվ. աշխ., էջ 192:

հարցը բանավեճերի, եթե ոչ զինված հակամարտության հարց էր: Հաֆեզ Ալ–Ասադի վարչակարգի օրոք նշված հարցը չկորցրեց իր արդիականությունը: Ալ-Ասադն անհանգստացած էր, որ սուննի համայնքի ղեկավար շրջանակներում Բաաս կուսակցության աշխարհիկ գաղափարախոսությունը կարող էր խոչընդոտ լինել վարչակարգի օրինականացման հարցում: Իր իշխանության ամրապնդման նպատակով՝ Ալ-Ասադը պատրաստ էր մեղմել կուսակցության աշխարհիկ դիրքորոշումը և գնալ փոխզիջման: Անձնական մակարդակում Ասադը փորձում էր հասարակության շրջանում ամրապնդել իր բարեպաշտ մուսուլմանի կերպարը և ապացույցներ գտնել հաստատելու, որ ալավիները ճշմարիտ մուսուլմաններ են, քանի որ սուննիները նրանց համարում էին անհավատներ և ոչ մուսուլմաններ[48]:

Այդուհանդերձ, Ալ-Ասադի կրոնական քաղաքականության առաջին դրսևորումը 1973թ. սահմանադրության մեջ այն հոդվածի ներգրավումն էր, որով երկրի նախագահ կարող էր լինել միայն մուսուլմանը: Բացի այդ՝ սահմանադրությամբ երկրի պետական կրոն հռչակվեց իսլամը: Այս քայլերն ուղղված էին՝ մեղմելու երկրի սուննի մեծամասնության դժգոհությունը[49]: Նոր սահմանադրության 35–րդ հոդվածը երաշխավորում էր «դավանանքի ազատությունը և պետությունը հարգում էր բոլոր դավանանքները: Պետությունը երաշխավորում էր կրոնական ազատությունները, քանի դեռ դրանք չէին խաթարում հասարակական կարգը»[50]:

Հայ համայնքի կարծիքով՝ նոր սահմանադրությամբ պաշտպանված էին իրենց կրոնական իրավունքները: Հոգևոր գործունեությանը զուգահեռ՝ Հայկական եկեղեցին կարևոր դերակատարում ուներ սիրիական նոր վարչակարգի և հայկական համայնքի միջև հարաբերություններում: Արաբական Միացյալ Հանրապետության գոյության շրջանում /1958-1961թթ./՝ Գամալ Աբդ Ալ–Նասերի ղեկավարությամբ, ինչպես նաև Բաասի կառավարման շրջանում՝ 1960–ականներին, հայկական եկեղեցիներն ապաստան էին տալիս նաև հայ այլախոհներին: Սիրիայի պայմաններում եկեղեցիները շատ ավելի կանոր գործառույթներ ունեին, քան կուսակցություններն ու ասոցիացիաները: Նրանք կապող օղակ էին պետության և

---

[48] Hinnebusch R., Syria: Revolution from Above, London, New York, 2001, pp. 66; Seale P., Asad of Syria: The Struggle for the Middle East, London, 1988, pp. 173.

[49] Hinnebusch R., նշվ. աշխ., էջ 66:

[50] 1973թ. մարտի 13-ի Սիրիայի Արաբական Հանրապետության սահմանադրություն, հոդված 35–րդ:

համայնքի միջև: Եկեղեցին ակտիվ մասնակցություն էր ունենում համայնքային գործունեության բոլոր ոլորտներում, ինչպես օրինակ՝ հայ սկաուտ տղաների ամառային դպրոցների բացումից մինչև համայնքային կենտրոնի բացում, ինչպես նաև հրատարակությունների թույլատրում: Սա հնարավորություն էր տալիս սիրիական ղեկավարությանն ավելի հեշտությամբ վերահսկել համայնքային գործունեությունը:

* * *

1970թ. Հաֆեզ Ալ–Ասադի իշխանության գալուց հետո հայկական դպրոցները Սիրիայում կարողացան մասնակիորեն դուրս գալ 1960-ականների վեջին ստեղծված ճգնաժամային վիճակից: Բարելավվեցին հարաբերությունները պետության և հայկական դպրոցների միջև: Հայկական կրթական համակարգը ոչ պաշտոնական համաձայնության եկավ իշխանությունների հետ և ստացավ որոշակի ինքնավարություն:

Իրավական շրջանակը, որում գործում էին հայկական դպրոցները, առանձնապես չէր տարբերվում 1960-ականների 2-րդ կեսին ընդունվածից: 1973թ. սահմանադրության 3–րդ գլխի 21–րդ հոդվածը սահմանում էր, որ ազգային կրթության համակարգը «պարտավոր է դաստիարակել արաբական, ազգային, սոցիալիստական սերունդ՝ գիտական ուսումնառությամբ, որը հպարտ կլինի իր հայրենիքով, ժառանգությամբ և պատրաստ՝ պայքարելու ազգային միասնության, ազատության և սոցիալիզմի նպատակների իրականացման համար»[51]: Ավելի ուշ հոդված 23 (1)–ում ավելացվեց, որ «Ազգային սոցիալիստական կրթությունն ընդգծում է միասնական արաբական սոցիալիստական հասարակության կազմավորումը: Այն շեշտում է բարոյական արժեքների համախմբումը և արաբական ազգի գերագույն նպատակների իրագործումը: Պետությունը աջակցում և պաշտպանում է կրթության այս համակարգը»[52]: Վերջապես 37 (4) հոդվածը սահմանում էր, որ պետությունը վերահսկում է կրթական համակարգը և ուղղորդում այնպես, որ այն ծառայի հասարակության կարիքներին ու արտադրությանը[53]:

Հայկական դպրոցները շարունակում էին գործել 1967թ. ձեռք բերված փոխզիջումային համաձայնության շրջանակներում:

---

[51] Սիրիայի Արաբական Հանրապետության սահմանադրություն, 1973թ.:
[52] Նույն տեղում:
[53] Նույն տեղում:

Այդուհանդերձ, առօրյա իրականությունում սահմանափակումները թուլացվեցին: Ծրագրով սահմանված էր, որ հայերեն պետք է դասավանդվեր շաբաթական 4 անգամ, իսկ կրոն՝ 2 անգամ, սակայն ժամանակի ընթացքում ուսուցիչները կարող էին փոփոխություններ մտցնել ծրագրում և կրոնին նախատեսված ժամերն օգտագործել լեզու դասավանդելու նպատակով: Հայկական մասնավոր դպրոցները պարտավոր էին հետևել պետական կրթական ծրագրին, ինչը նպատակ ուներ նվազագույնի հասցնել հայ «սեփականատիրոջ» միջամտությունը կրթական ծրագրերում: Սակայն կարճ ժամանակ անց կրթության նախարարության միջամտությունը թուլացավ, վերահսկողությունը՝ նույնպես, և կրթական ծրագիրը հիմնականում մշակում և իրականացնում էր դպրոցական խորհուրդն ու դպրոցի «սեփականատիրոջ» ներկայացուցիչը:

1990–ականների ընթացքում և 2000–ականների սկզբին սիրիական պետության և հայկական կրթական համակարգի միջև հարաբերությունները գրեթե չէին տարբերվում 1970-ականներին սահմանված կարգերից: Դպրոցները մասնավոր էին և հայկական սեփականություն էին համարվում և գործում էին մեծ մասամբ հայկական եկեղեցիների հովանու նորքո: Կրթության նախարարությունը շարունակում էր սահմանել պետական չափորոշիչներ, որոնք պարտադիր էին Սիրիայում գործող բոլոր՝ այդ թվում նաև հայկական դպրոցների համար: Կրթական ծրագիրը մինչ օրս էլ շարունակում է հաստատվել կրթության նախարարության կողմից: Հայկական դպրոցները պետք է ընդունեն պետական ծրագրի չափորոշիչները՝ արաբերեն դասավանդման հետ կապված: Նրանց թույլատրվում է շաբաթական երկու անգամ դասավանդել կրոն և չորս ժամ՝ հայոց լեզու /կրոնի լեզու/:

Պաշտոնապես հաստատված հարաբերությունների շրջանակներում պետության և հայկական դպրոցների հարաբերություններն ընդհանուր առմամբ բնորոշվում են որպես համագործակցային: Մի կողմից, կառավարությունը քաջալերում և նպաստում է հայկական դպրոցների ակտիվ ներգրավմանն ազգային կրթական ծրագրերում՝ ամրապնդելով սիրիական ինքնությունն ու բաասական վարչակարգի դիրքերը դրանցում: Հայկական հաստատությունները, ինչպես և այլ սիրիական դպրոցներ, հստակորեն հետևում են պետական ծրագրին: Դրանցում ամրացված են ազգային և կուսակցական դրոշները, փակցված են նախագահի նկարները, տոնվում են սիրիական ազգային տոները /անկախության և ուղղիչ շարժման հռչակման օրերը և այլն/, ինչպես նաև ներգրավված են Բաաս կուսակցության տարբեր ծրագրերում:

Մյուս կողմից, կառավարությունը ոչ պաշտոնապես աշխատում է նվազագույնի հասցնել հայկական դպրոցների գործունեությանը միջամտելը և ավելի ազատական մոտեցում է ցուցաբերում հայկական դպրոցների ծրագրերի նկատմամբ: Մասնավորապես դրանցում կրոնին տրամադրվող դասաժամերը ևս տրամադրվում են հայոց լեզվի ուսուցմանը, ինչպես նաև երաժշտության դասավանդման համար նախատեսված ժամերը ևս օգտագործվում են հայկական մշակութային ժառանգության հետ հայ աշակերտներին ծանոթացնելու նպատակով: Հայկական դպրոցներում սիրիական խորհրդանիշների հետ մեկտեղ թույլատրվում է նաև փակցնել հայկական խորհրդանիշներ[54]:

Չնայած համագործակցային հարաբերություններին, որ առկա են պետության և հայկական դպրոցների միջև, այնուամենայնիվ դրանք չեն կարող ամբողջությամբ չեզոքացնել այն սահմանափակումների հետևանքները, որ հայկական կրթությունը Սիրիայում ստիպված էր հաղթահարել 1960-ականների երկրորդ կեսից սկսած: Հայերենի դասավանդման պարագայում շաբաթական չորս ժամը չափազանց քիչ է լեզվի իմացության բավական բարձր մակարդակ ապահովելու համար:

Փորձառություն ունեցող ուսուցիչներից մեկը 2003թ. նոյեմբերին մասնավոր զրույցում, չցանկանալով հրապարակել իր անունը, նշեց, որ հայոց լեզվի իմացությունը սկսեց վատանալ 1967թ. հետո, և որ «ավագ սերունդը մտածում է հայերեն, մինչդեռ երիտասարդ սերունդը մտածում է արաբերեն և գրում հայերեն»[55]:

Եվս մեկ խնդիր է դպրոցների ֆինանսավորումը: Պետական հատկացումները սովորաբար էական չեն և չեն կարող ծածկել ծախսերը: Դպրոցները սովորաբար պարբերաբար դիմում են տեղական հովանավորների կամ սփյուռքի հայկական հաստատությունների ֆինանսական աջակցությանը:

Չնայած սիրիահայերի շրջանում ևս նկատվող արտագաղթին՝ այնտեղ գործող հայկական դպրոցները, Լիբանանի հետ համեմատած, ավելի քիչ են ազդվում այդ գործոնից[56]: Այս կապակցությամբ առանձնացնենք երեք գործոն. 1.Հայկական դպրոցները համարվում են բավական բարձր մակարդակի դպրոցներ՝ պետականների հետ համեմետած: Արդյունքում շատ հայկական դպրոց-

---

[54] Migliorino N., նշվ. աշխ., էջ 206:

[55] Ըստ Migliorino N., նշվ. աշխ., էջ 207:

[56] 1996թ. տվյալներով՝ Սիրիայում կար 27 հայկական դպրոց՝ 11.000 աշակերտով: Ըստ Migliorino N., նշվ. աշխ., էջ 219:

ներում ուսանում են նաև ոչ հայ՝ հիմնականում քրիստոնեական այլ համայնքների միջին խավին պատկանող երեխաներ: 2. Սիրիահայ համայնքը շատ ավելի կառչած է իր մշակութային ավանդույթներին և վախենում է դրանք կորցնելուց: Հայկական ընտանիքները հազվադեպ են ընտրում այլընտրանքային կրթության հնարավորությունները: 3. Վերջապես, հայկական դպրոցներում ուսուցումը, չնայած տնտեսական մի շարք դժվարություններին, շարունակում է, ընդհանուր առմամբ, մնալ հասանելի:

Պետք է արձանագրել նաև, որ Լիբանանի հայկական դպրոցները լուրջ մրցակիցներ ունեն՝ հանձինս տեղական մյուս մասնավոր ուսումնական հաստատությունների, ինչը չի կարելի ասել Սիրիայի պարագայում:

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՔՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ի տարբերություն 1950-ականների, երբ համայնքը ներքաշված էր գաղափարախոսական տարբեր վեճերի ու հակասությունների մեջ, ներկայումս այն ավելի միասնական կառույց է, որի տարբեր շերտերի ու շրջանակների մեջ կա երկխոսություն և համագործակցություն: Սակայն սիրիահայ համայնքում կան առանձին կնճռոտ խնդիրներ, որոնք, վաղ թե ուշ, կարիք ունեն կարգավորվելու: Այդ խնդիրներից է թեմական հարցը, որ գոյություն ունի Դամասկոսի հայ համայնքում[57]:

Ինչպես նշեցինք, Հայոց թեմի առաջնորդանիստը Ս. Սարգիս եկեղեցին է /թեմը մի եկեղեցի ևս ունի Հոմս քաղաքում/: Դեռևս Օսմանյան տիրապետության ներքո՝ Դամասկոսի փոքրաթիվ համայնքը կենտրոնացած է եղել հենց այդ վանքի շուրջ[58]: XIX դարի վերջին և XX դարի սկզբին Դամասկոսում ապրել է շուրջ 1000 հայ: Դամասկոսահայ համայնքը մեծապես համալրվել է 1915թ. Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականներով, ապա Կիլիկիայից փախստական հայերով: 1925-27թթ. Սիրիայում հակաֆրանսիական ապստամբության հետևանքով Դամասկոսում հաստատված շուրջ 15.000 հայերի զգալի մասը հեռացել է Դամասկոսից և գաղթել Լիբանան ու այլ երկրներ: Ներկայումս դամասկոսահայերի թիվը չի գերազանցում 5-6 հազարը:

Դամասկոսի թեմը կազմավորվել է XV դարի կեսին Երուսաղեմի հայոց պատրիարքության կողմից և գործել նրա ենթակայության

---

57 Դամասկոսի հայ գաղութի մասին տե՛ս Ազէզյան Հ., Դամասկոսի հայ գաղութի մասին, «Հասկ» հայագիտական տարեգիրք 2002-2006, Լիբանան: Սիրիահայ գաղութի արդի խնդրիրներն ավելի տեսանելի են երևում նաև ուսումնասիրության հիմքում ընկած դաշտային հետազոտության մեջ: Դրանում ներառված են սիրիահայ համայնքի մի շարք ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցները:

58 Դամասկոսի Բաբ Շարկի քրիստոնեական թաղամասում գտնվող Ս.Սարգիս եկեղեցու կառուցման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Սկզբնական շրջանում վանքը եղել է իջևան-հոգետուն Երուսաղեմ մեկնող հայ ուխտավորների համար: Հայտնի է, որ վանքն ու համանուն մատուռը վերանորոգվել են 1632-ին, Երուսաղեմի Հայոց պատրիարքի կողմից:

ներքո մինչև 1929թ.[59]: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Լիբանանում հաստատվելու շրջանում (Մեծ եղեռնից և 1921-ին Կիլիկիայի հայաթափումից հետո նրա ենթակայության տակ էր մնացել միայն Հալեպի թեմը) 1929-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի օրհնությամբ՝ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը Բեյրութի և Կիպրոսի թեմերի հետ Կիլիկիո աթոռին է փոխանցել նաև Դամասկոսի թեմը:

Թեմական հարցը պառակտել է դամասկոսահայ համայնքը, որը գործնականում բաժանված է երկու թևի: Առաջինի մեջ մտնում են էջմիածնական կողմնորոշում ունեցողները՝ հնչակյան, ռամկավար, բարեգործական և կոմունիստ շրջանակները, մյուս թևում՝ դաշնակցական, որոնք անթիլիասական կողմնորոշում ունեն: Վերջիններս բոյկոտում են այն միջոցառումները, որոնք կազմակերպվում են Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդի հովանավորությամբ:

Թեմական հարցը վերաճել է գործնականում չհանգուցալուծվող խնդրի, որը շատ դեպքերում ջլատում է համայնքի ուժերը: Այդ պայքարն առավել ակնհայտ է դառնում տեղական ազգային իշխանության ընտրությունների ժամանակ: Երկու թևերը պարբերաբար հակադարձում են միմյանց, զգալի ռեսուրսներ ներդնում՝ հաղթելու տեղական ազգային ընտրություններում: Այս իրողությունը վերաճել է ազդեցության ընդլայնման մի յուրատեսակ պայքարի և պայմանավորված է որոշակի քաղաքական և տնտեսական շահերով: Անգամ համահայկական նշանակություն ունեցող միջոցառումները, այդ թվում՝ Եղեռնի զոհերի հիշատակի օրը՝ Ապրիլի 24-ը, Դամասկոսում նշվում է տարանջատ[60]: Շատերի կարծիքով՝ թեմական խնդիրն ակտիվություն է մտցնում համայնքում, սակայն այդ երևութական աշխուժությունը, ըստ էության, անառողջ մրցակցության արդյունք է:

Ամեն դեպքում պետք է նշել, որ չնայած թեմական հարցը հանդես է գալիս որպես տարանջատող գործոն, դամասկոսահայ համայնքն ապրում է ազգային աշխույժ կյանքով: Դամասկոսում գոր-

---

[59] 1956թ. Հայ առաքելական եկեղեցում տեղի ունեցած հայտնի իրադարձություններից հետո, որոնք պայմանավորված էին Սառը պատերազմով, Դամասկոսի թեմը, փաստորեն, չի ընդունում Մեծի Տանն Կիլիկիո աթոռի գերակայությունը:

[60] Ապրիլի 24-ի միջոցառումը Դամասկոսում նշվում է երկու շրջանակում: Դաշնակցական շրջանակները չեն մասնակցում այն միջոցառմանը, որը կազմակերպվում է Դամասկոսի թեմի առաջնորդի հովանավորությամբ, այդ իսկ պատճառով նրանք կազմակերպում են սեփական միջոցառումը, որին հրավիրվում է Բերիո թեմի առաջնորդը:

ծում են հայկական ավանդական կուսակցությունների մասնաճյուղերը, մի շարք ազգային դպրոցներ[61], բարեգործական հաստատություններ[62]:

* * *

Սիրիահայերը ներկայումս աչքի են ընկնում ազգային բարձր գիտակցությամբ: Հայաստանի գաղափարը ազգապահպանության կենտրոնական տարրն է. օգնում է դրա կենսունակությանը: Կարելի է ասել, որ սիրիահայերը լուրջ ջանքեր են գործադրում հայկական ինքնությունը պահպանելու հարցում: Ազգային ծրագրերը, փաստորեն, մշակվում են միությունների ներսում և գործնականում իրականացվում տվյալ միության ենթակառուցվածքների միջոցով: Համայնքն ապրում է ազգային, հոգևոր-մշակութային և հասարակական բավական աշխույժ կյանքով, առավելապես հայախոս է[63]: Ազգային դաստիարակությունը շարունակվում է ինչպես մշակութային և մարզական միություններում, այնպես էլ՝ ընտանիքում:

Հայկական թերթեր Սիրիայում չեն հրատարակվում, սակայն հայերը սիրում են հետևել առաջին հերթին Լիբանանում տպագրվող հայկական թերթերին, որոնցից են՝ «Ազդակը», «Զարթոնքը», «Արարատը» և այլն: Նշենք, որ Հալեպի (Բերիոն) Հայոց թեմի շաբաթաթերթը՝ «Գանձասարը», տարածվում է Սիրիայի հայկական շրջանակներում: Սիրիայում դիտում են նաև լիբանանյան հեռուստաալիքներից մեկով հեռարձակվող հայկական լուրերի «ժամը»: Համասիրիական հայկական ինտերնետային ռեսուրսներ չկան, ինչը կապված է համայնքի բարդ խճանկարի հետ:

---

[61] Դամասկոսում գործում են հետևյալ դպրոցները՝ Ազգային Թարգմանչաց վարժարանը, որը Դամասկոսում հիմնված (1898թ.) առաջին կրթական հաստատությունն է, Ազգային միացյալ վարժարանը (1929թ.), Կյուլլապի-Կյուլպենկյան-Սահակյան վարժարանը (1929թ.): Եվս երեք դպրոց ունեն հայ կաթոլիկները և մեկ դպրոց՝ հայ ավետարանականները: Դպրոցն ավարտելուց հետո հայ աշակերտներն ուսումը շարունակում են արաբական կամ մասնավոր (վճարովի) դպրոցներում:

[62] Դրանցից են Ս.Սարգիս եկեղեցու Աղքատախնամ հանձնախումբը, որ հիմնվել է 1890-ականներին՝ Մանուկ Մսրլյանի ղեկավարությամբ, նաև Սիրիահայ օգնության խաչը, որը կանանց բարեգործական կազմակերպություն է, հիմնվել է 1929-ին՝ Հայ հեղափոխական դաշնակցության նախաձեռնությամբ:

[63] Արաբախոս են հիմնականում կաթոլիկ հայերը, ինչպես նաև *հին հայերը*, որոնց շրջանում ազգային գիտակցությունը գրեթե մթագնած է:

Սիրիահայերի մեծ մասը պարբերաբար հետևում է հայաստանյան իրադարձություններին: Արբանյակային հեռարձակման շնորհիվ վերջիններս դիտում են Հ1-ը եւ հայաստանյան այլ ալիքներ: Նրանք ցանկանում են Հայաստանը տեսնել զարգացած երկիր: Հայաստանում կան իրողություններ, որոնք բացասաբար են ընկալվում նրանց շրջանում: Սիրիահայերին առաջին հերթին մտահոգում է Հայաստանում մի շարք արատավոր երևույթների, ինչպես, օրինակ՝ աղանդների տարածումը: Բացի այդ, տարբեր առիթներով Հայաստանում բախվելով վարչական և սոցիալական խնդիրների՝ սիրիահայերից շատերը Հայաստանը համարում են դեռևս կայացման գործընթացում գտնվող երկիր:

Ինչպես նշեցինք, սիրիահայերի նկատմամբ թե՛ իշխանությունները, թե՛ հասարակությունը բարյացակամորեն են տրամադրված, ինչը պայմանավորված է հայերի վաստակով՝ նրանց վստահելի և օրինապահ վարքագծով, նաև էթնոդավանական փոքրամասնությունների հարցում ներկա վարչակազմի հանդուրժողական քաղաքականությամբ: Ներկայումս Սիրիայում խաղաղ գոյակցում են էթնոդավանական և կրոնադավանական բազմաթիվ ուղղությունների ներկայացուցիչներ: Առանձին մզկիթներ ու եկեղեցիներ տեղակայված են կողք կողքի: Կրոնական կամ էթնիկ անհանդուրժողականությունը հետապնդվում է: Հայ հոգևորականները ժամանակ առ ժամանակ հանդիպում են Սիրիայի այլ կրոնադավանական համայնքների ներկայացուցիչների հետ, քննարկվում են համագործակցության, միջկրոնական ու միջդավանական երկխոսության, ինչպես նաև կրոնական և էթնիկ հանդուրժողականությանն առնչվող հարցեր:

Չնայած հայերն առօրյա և գործնական կյանքում տեղացիների հետ հարաբերություններում խնդիրներ չունեն, սակայն հիմնականում գերադասում են շփումը հայրենակիցների հետ: Հայերը, կարելի է ասել, ապագայի նկատմամբ մտահոգ են: Անկանխատեսելի զարգացումների հեռանկարը, տարածաշրջանում միջէթնիկ և միջդավանական լարվածությունը, կրոնականացվածության մակարդակի աճը որոշակի մտավախություն և ազգային անվտանգությանն առնչվող ներքին տագնապ են առաջացրել: Իր հերթին, իսլամական միջավայրը, մասնավորապես դրանում գոյություն ունեցող կրոնական ծայրահեղական տրամադրությունների աճը փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի շրջանում, ստեղծում է որոշակի անհարմարության զգացողություն, չնայած վերջիններս իրենց համարում են Սիրիայի լիիրավ քաղաքացիներ:

էթնիկ ինքնության պահպանմանն ուղղված ջանքերը գնալով դժվարանում են: Սիրիահայ համայնքը ծերանում է սակավ ամուսնությունների պատճառով, աստիճանաբար շատանում են խառնամուսնությունները: Արաբական մշակույթը, որ որոշակի ազդեցություն ունի երիտասարդների վրա, ակտիվորեն ներմուծվում է հայ համայնք: Բացի այդ, կա մի խավ, որն իրեն հեռու է պահում ազգային կյանքից: Ի վերջո, կան արաբախոս շատ ընտանիքներ, որոնց մեջ հայկական շրջանակում մնալու ցանկությունն աստիճանաբար նվազում է:

Սակայն ամենալուրջ մարտահրավերը Սիրիայում տնտեսական իրադրության վատթարավումն է, ինչն էապես նպաստում է և կնպաստի արտագաղթի աշխուժացմանը: Հայերն արտագաղթում են և առաջիկայում էլ կշարունակեն արտագաղթել հիմնականում Լիբանան, Արաբական Միացյալ էմիրություններ, ԱՄՆ, Կանադա, նաև շատ քիչ չափով ԵՄ երկրներ: Արտագաղթողների մեծ մասը երիտասարդներ են, որոնք ուսանելու են գնում և չեն վերադառնում, կամ էլ մեկնում են արտագնա աշխատանքի /հիմնականում՝ Ծոցի երկրներ/: Իսկ դա նշանակում է, որ հայ երիտասարդների մի զգալի մասը՝ որպես ազգային ներուժ, Սիրիայում այլևս գործունեություն չի ծավալում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ /ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ/

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՍԻՐԻԱՅՈՒՄ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆԻ ՀԵՏ

- Ինչպե՞ս եք գնահատում հարաբերությունները Սիրիայի հետ:

- Սիրիան, ինչպես և արաբական մի քանի երկրներ, Հայաստանի հետ ունեցել են պատմամշակութային դարավոր կապեր: Այդ երկրները ներառում են Բիլադ Աշ-Շամը, այսինքն՝ պատմաաշխարհագրական Սիրիան՝ ներկայիս Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Հորդանանը, ինչպես նաև Իրաքը, իսկ Հյուսիսային Աֆրիկայից՝ հիմնականում Եգիպտոսը, այլ կերպ ասած՝ 5-6 երկրներ, որոնք Հայաստանի հետ, կարելի է ասել, ինչ-որ առումով ընդհանուր պատմություն ունեն: Հայաստանը երկուսուկես դար եղել է Արաբական խալիֆայության և շուրջ չորս դար, արաբների հետ միասին, Օսմանյան կայսրության կազմում: Փաստորեն, արաբների հետ նույն աշխարհակալությունների կազմում ենք եղել: Տարածաշրջանում դեռևս շատ վաղուց՝ V դարից, եղել են հայկական գաղութներ:

Պատմական այս իրողությունները որոշակի դեր են խաղացել անկախ Հայաստանի և արաբական երկրների, մասնավորապես՝ Սիրիայի հետ հարաբերությունների զարգացման հարցում: Կար բարենպաստ վիճակ, պարարտ հող՝ համագործակցության համար: Հայաստանի անկախացումից հետո Սիրիան աշխարհում երրորդ երկիրն էր, որտեղ, հաշվի առնելով նաև հայկական համայնքի գործոնը, 1992թ. ապրիլին բացվեց Հայաստանի դեսպանություն (Դամասկոսում), իսկ 1993թ. մարտին՝ գլխավոր հյուպատոսություն (Հալեպում): Անցած տարիներին ձևավորվեց երկկողմ համագործակցություն իրականացնելու իրավապայմանագրային դաշտ: Ունենք տասնյակ պայմանագրեր, միջպետական և միջկառավարական գործնական ծրագրեր, համագործակցությունը ներառում է բազմաթիվ ուղղություններ:

1997-ին Սիրիան դեսպանություն բացեց Երևանում, և Հայաստանի իշխանությունները, որպես նվեր, Սիրիայի դեսպանատանը հատկացրին Երևանի կենտրոնում գտնվող շենքերից մեկը:

Համագործակցության ամենաթույլ կետերից մեկը, սակայն, առևտրատնտեսական ոլորտն է: Երկու երկրների միջև ապրան-

քաշրջանառությունը շատ փոքր է, տարեկան $1,5-2 մլն: Դրա համար կան թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներ: Գլխավոր պատճառներից մեկը հայ-թուրքական հարաբերություններն են՝ սահմանի փակ լինելը, ցամաքային և ծովային անմիջական ճանապարհի բացակայությունը: Սիրիական և հայկական ավիաուղիները շաբաթական մեկական չվերթ են իրականացնում: Օդային փոխադրումները, հասկանալի պատճառներով, իրենց շատ չեն արդարացնում: Հիմա ջանքեր են գործադրվում վերաշխուժացնելու առևտրատնտեսական կապերը, փորձում ենք փոխադարձ ցուցահանդեսներ կազմակերպել: Սիրիան անկախ Հայաստանի համար հայտնաբերված առաջին շուկաներից մեկն էր, հետո ի հայտ եկան այլ շուկաներ: Ամեն պարագայում, Սիրիան այն առաջնային երկրներից է, որ կարող է էժան ապրանքներ ներմուծելու հնարավորություն ստեղծել: Ձևավորված է հայ-սիրիական գործարար խորհուրդ:

- Ինչպիսի՞ն է հայ-սիրիական հարաբերությունների հեռանկարը:

- Մենք գուրգուրանքով ենք մոտենում Հայաստան-Սիրիա, Հայաստան-արաբական աշխարհ հարաբերություններին: Ինչպես Արաբական աշխարհի, այնպես էլ Սիրիայի հետ երկկողմ հարաբերությունները կառուցված են փոխադարձ շահերի վրա: Հայաստանը Սիրիայի հետ քաղաքական երկխոսության մեջ է, կողմերի միջև ժամանակ առ ժամանակ անցկացվում են քաղաքական խորհրդակցություններ:

Կարծում եմ, հայ-սիրիական հարաբերություններում կարևոր է համագործակցությունն առողջապահության, մշակույթի և կրթության ոլորտներում: Բացի այդ, Սիրիան Հայաստանին ասպիրանտուրայի և մագիստրատուրայի տեղեր է հատկացնում: Հայաստանցի շուրջ քսան ուսանող կարող է սովորել Դամասկոսի արաբերենի ուսուցման ինստիտուտում, և տասը՝ Դամասկոսի համալսարանում:

Կարևոր եմ համարում Սիրիայում անցկացվող Հայաստանի մշակութային օրերը և Հայաստանում անցկացվող սիրիական մշակույթի օրերը: Կարևոր է, որ Հայաստանի դեսպանատունն ի վերջո տեղափոխվեց Սիրիայի կառավարության կողմից փոխադարձության սկզբունքով իրեն հատկացված նոր շենքը, որը գտնվում է Դամասկոսի Մազզե Ղարբիյե թաղամասում: Դեսպանատան շենքի հարցը երկար տարիներ առկախ էր մնում: Ինձնից առաջ այս ուղղությամբ զգալի ջանքեր է գործադրել Սիրիայում Հայաստանի նախկին արտակարգ և լիազոր դեսպան Լևոն Սարգսյանը:

- Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի արտաքին քաղաքականության արաբական-իսլամական ուղղությունը:

- Կարծում եմ՝ արաբական ուղղությունը պետք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականության գերակա ուղղություն: Այն պետք է էլ ավելի ակտիվացնել, քանի որ այս տարածաշրջանում են մեր հաջողությունները, մարտահրավերներն ու սպառնալիքները: Հայաստանը հստակ դիրքորոշում ունի արաբական խնդիրների, այդ թվում՝ պաղեստինցի ժողովրդի ինքնորոշման և արաբ-իսրայելական հարցի վերաբերյալ:

Հայաստանը պետք է ձգտի աշխատել բոլոր արաբական երկրների, արաբական-իսլամական կազմակերպությունների, այդ թվում՝ «Իսլամական համագործակցություն կազմակերպության» հետ: Կան մի քանի իսլամական պետություններ՝ Սաուդյան Արաբիան, Պակիստանը և Բանգլադեշը, որոնք հայտնի պատճառներով Հայաստանի հետ չունեն դիվանագիտական հարաբերություններ: Սակայն կան Իսլամական վերոնշյալ անդամ շատ երկրներ, այդ թվում՝ արաբական, որոնց հետ Հայաստանը շատ լավ հարաբերություններ ունի: Անհրաժեշտ է, որպեսզի Հյուսիս-Հարավ, Արևմուտք-Արևելք մեր քաղաքականության մեջ արաբական ուղղությունը հավասար տեղ ունենա: Սա իմ անձնական կարծիքն է, մանավանդ որ մեզ համար լարվածության նոր շրջան է սկսվել այն առումով, որ Դամասկոսում Ադրբեջանի դեսպանություն է հիմնվել: Բնականաբար, իրենք անում են իրենց քարոզչությունը, և մենք էլ պետք է համարժեքորեն հակադարձենք՝ շարունակելով մեր քարոզչությունը:

Շատ կարևոր է, որ այսօր Հայաստանը համագործակցում է Արաբական պետությունների լիգայի հետ: 2008թ. Հայաստանն Արաբական պետությունների լիգայում ունեցավ մշտական ներկայացուցիչ: Սա կարևոր քայլ էր մեր կողմից: Հուսանք, որ ապագայում միջազգային իսլամական կազմակերպություններում էլ կունենանք մեր ներկայացուցիչը:

- Հատկանշական է, որ Հայաստանում արաբագիտությունը բավական զարգացած ակադեմիական ուղղություն է: Բացի այդ, Երևանի պետական համալսարանն ունի արաբագիտության բաժին: Արդյո՞ք Սիրիայում էլ կան հայագիտական հաստատություններ:

- Իսկապես, Հայաստանում մեծ հետաքրքրություն կա Արաբական աշխարհի նկատմամբ, սակայն Արաբական աշխարհում դա այնքան էլ համարժեք չէ: Հայաստանում արևելագիտությունը սկսել է զարգանալ դեռևս անցյալ դարի 20-ականներից: ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում կար արևելյան բանասիրության բա-

ժին, իսկ 1968թ. արդեն ձևավորվեց արևելագիտության ֆակուլտետը: 1958-ին Գիտությունների ազգային ակադեմիայում բացվեց Արևելագիտության սեկտորը, որը 1971-ին վերածվեց ինստիտուտի, որի ներսում սկսեց գործել արաբական երկրների բաժինը:

Սիրիայում միայն 2007թ.-ից հայագիտությունը զարգացնելու ուղղությամբ քայլեր արվեցին: Հայագիտությունը, որպես այդպիսին, արաբական աշխարհում զարգացած չի եղել, բացառությամբ առանձին անհատների (Եգիպտոսից՝ Հասան Հաֆիզը, Սիրիայից՝ Նիզար Խալիլին, Մրվուան Մուդավարը և ուրիշներ), ովքեր զբաղվել են դրանով: Վաղուց էր հասունացել Սիրիայում հայագիտական կենտրոն հիմնելու անհրաժեշտությունը: Իմ պաշտոնավարման առաջին իսկ օրվանից այդ ուղղությամբ աշխատանք է տարվել: Այդ հարցով խոսել եմ կրթության և գիտության ոլորտի մի շարք պատասխանատուների հետ: Եվ, ահա, 2008-ից Հալեպի համալսարանում բացվեց հայոց լեզվի ուսուցման կենտրոն: Որոշվեց, որ դասավանդումը, այնուամենայնիվ, իրականացվի ոչ թե արևմտահայերենով, այլ արևելահայերենով, որը Հայաստանի Հանրապետության պետական լեզուն է: Կարծում եմ՝ դա ճիշտ որոշում է: Առհասարակ, այդքան սերտ ապրելով՝ արաբները և հայերը կարիք ունեն միմյանց ճանաչելու: Ի վերջո, ամեն ինչ փոխադարձ պետք է լինի: Սա ես համարում եմ մեր հաջողությունը:

- Ինչպիսի՞ն է Ձեր տեսանկյունից արդի սիրիահայ համայնքը:

- Սիրիահայ համայնքը կայացած, ավանդական համայնք է իր ենթակառուցվածքներով, տարաբնույթ հաստատություններով: Սիրիահայերը երկրում լավ համարում, ճանաչում և հեղինակություն ունեն: Հայության նկատմամբ դրական կարծիքը ձևավորվել է դարերի ընթացքում: Երբ ասում ենք սիրիահայ համայնք, նկատի չունենք միայն հետցեղասպանության շրջանը: Սիրիան պատմական Հայաստանի անմիջական սահմանակից տարածք է եղել, ուր հայությունը վաղ անցյալից առևտրատնտեսական և մշակութային սերտ կապեր է ունեցել հարևան երկրների հետ: Հայերին, ովքեր վաղուց են բնակվել այստեղ, անվանում են արման կադիմ (հին հայեր): Դրանց մի մասը կաթոլիկ, արաբախոս հայեր են:

Այստեղ հայերն ապրում են ներքին մշակութային աշխույժ կյանքով, հայախոս են, կան ազգային դպրոցներ ու միություններ:

- Ինչպիսի՞ն է Հայաստանի դեսպանության մոտեցումը դամասկոսահայ համայնքի նկատմամբ: Առհասարակ, ի՞նչ քայլեր են արվում սիրիահայ ազգային կյանքն աշխուժացնելու և համայնքը համախմբելու ուղղությամբ:

- Սփյուռքը վիրավոր օրգանիզմ է, որի նկատմամբ պետք է լինել հավուր պատշաճի ուշադիր: Մենք Սփյուռքին միշտ էլ ինչ-որ բան ունենք տալու:

Սիրիահայերի հետ հարաբերություններում ամենակարևորը մարդկային ջերմ վերաբերմունքն է և ոչ թե խորհրդային շրջանին բնորոշ հրահանգներով գործելը կամ ինչ-որ բան ակնկալելը: Նրանք, ի վերջո, մեր քաղաքացիները չեն: Մենք՝ որպես դեսպանություն, կարող ենք ընդամենն օգտակար լինել նրանց՝ Հայաստանի հետ կապված հարցերում: Մնացածը, այդ թվում՝ նրանց ներքին կյանքին միջամտելը, անթույլատրելի է: Դեսպանությունը փորձում է միավորիչ դեր կատարել, համախմբել համայնքը Հայաստանի դրոշի, Հայրենիքի, Հայության գաղափարի շուրջ: Դա է մեր քաղաքականությունը: Դեսպանության միջոցառումներին հայկական բոլոր միություններին, այդ թվում՝ կաթողիկե և ավետարանական, հրավերներ ենք ուղարկում:

Ընդհանրապես, Սիրիան յուրահատուկ, կրոնադավանական և էթնիկ բարդ խճանկար ունեցող երկիր է: Մենք այստեղ ունենք հայության որոշակի հատված, որը հայախոս չէ: Դա Կամիշլիի հայ համայնքն է, որ հիմնականում քրդախոս ու արաբախոս է: Մեզ համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Դեյր-Զորի շրջանը: Այստեղ կան արաբացած, սակայն հայկական արմատներ ունեցող մարդիկ: Հայոց ցեղասպանության տարիներին հայ որբ երեխաներից շատերին տեղացի արաբները որդեգրել են, ապա՝ ամուսնացրել: Շատերը մորական կողմից հայ են և հետաքրքրվում են իրենց արմատներով: Պատահական չէ, որ երբ տեղացիները հայ են տեսնում, նրանց անվանում են խալո, այսինքն՝ քեռի: Այս շրջանի հայությունը տարբերվում է քաղաքաբնակ հայերից, որոնք պահպանում են իրենց ավանդույթները, կանոնակարգում իրենց կյանքը, մշտական կապեր ունեն Հայաստանի հետ:

Սիրիահայ համայնքում ազգային կյանքն աշխուժացնելու տեսանկյունից շատ կարևոր է արբանյակային կապը, որը հնարավորություն է տալիս դիտել հայաստանյան ալիքներ: Կարևորագույն ոլորտներից է ազգային կրթությունը: Կարծում եմ՝ Հայաստանից մեթոդաբանական օգնության, նաև դասագրքերի հետ կապված աջակցության կարիք կա: Լուրջ խնդիր է ազգային կադրերի պատրաստումը: Հայաստանում կազմակերպվում են սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման անվճար դասընթացներ, որոնց մասնակցում են նաև առանձին սիրիահայեր: Սակայն անելիքներ, անշուշտ, դեռ կան:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐՄԱՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԵՏ

- Ինչպե՞ս եք գնահատում սիրիահայ համայնքը միասնականության տեսանկյունից:

- Ընդհանրապես, միասնության մասին խոսելը շատ երազային է, բոլորս էլ խոսում ենք միասնությունից՝ համայնքի, ազգի, ընտանիքի կտրվածքով, սակայն դա, իմ համոզմամբ, անկարելի բան է: Սիրիայի գաղութը, լինի Հալեպը, թե Դամասկոսը, կազմակերպված է տարբեր միությունների աշխատանքներով: Եվ միասնությունը, իմ պատկերացմամբ, պետք է կայանա համագործակցությամբ, այլ ոչ թե բոլոր միությունների միավորմամբ: Հիմա, օրինակ, որոշ համագործակցություններ հաջողվում են, որոշները՝ ոչ: Իսկ միասնականությունը, որպես այդպիսին, ավելի շատ մի քանի սկզբունքների վրա է հենվում: Դա առաջին հերթին հայապահպանությունն է, նաև՝ Սիրիայի քաղաքացի լինելու հանգամանքով սիրիական պետության, հայրենիքի ծառայությունը: Սրանց հիման վրա է խարսխված համագործակցությունը և միասնությունը:

- Ի՞նչ իրողություններ են, որ տարանջատում են Դամասկոսի հայ համայնքը:

- Տարանջատող հիմնական իրողությունը կապված է եկեղեցական հարցի հետ: Ընդհանրապես, եկեղեցական տագնապը գոյություն ունի ողջ աշխարհում, այդ թվում հայկական սփյուռքում և իր արտահայտությունն է գտել Դամասկոսի պարագայում, որը՝ սակայն՝ պատմական անցյալին է առնչվում: Մեր ուսերի վրա դժվար պարտականություն է դրված՝ վերացնել լարվածության դրսևորումները՝ թողնելով, որ ամեն մեկն իր սկզբունքին մնա: Ես կհամարձակվեմ ասել, որ այս մի քանի տարիներին, երբ առաջնորդել եմ Հայ առաքելական եկեղեցու Դամասկոսի թեմը, ինձ ինչ-որ ձևով հաջողվեց դրական տեղաշարժեր արձանագրել: Մենք աշխատում ենք մի խնդրի ուղղությամբ, որ փաստորեն հիսուն տարվա վաղեմություն ունի[64]: Այսինքն՝ հնարավոր չէ հիսուն տարվա վաղեմություն ունեցող հարցը հինգ օրում լուծել: Անցած տարիների ընթացքում ես խոսել եմ դամասկոսահայ տարբեր շրջանակների հետ, և միշտ էլ երկխոսությունը կայացել է, չնայած չեմ թաքցրել, որ համամիտ չեմ հնչող շատ ու շատ տեսակետների հետ՝ միշտ էլ հաջորդ երկխոսության համար բաց դուռ թողնելով: Գոյություն ունեցող հարցի լուծումն իմ ձեռքին չէ. սա երկու կաթողիկոսություններ-

---

[64] Նկատի է առնվում 1956թ. եկեղեցական տագնապը:

րի լուծելիք հարցն է, բայց կգա մի օր, և այն իր լուծումը կստանա: Երիտասարդներն արդեն հոգնել են այդ հարցից. նրանք նոր իրողություններ են փնտրում:

- Ինչպե՞ս են ընկալում միմյանց Սիրիայի հայ համայնքները:

- Հայ գաղութը ներառում է առաքելական, կաթողիկե և ավետարանական շերտերը: Նրանց հարաբերություններում եկեղեցական տագնապ կամ կրոնական հարց չկա, ինչպես երկու թևի բաժանված միությունների հարաբերություններում: Այդ հարաբերություններն ավելի սահուն են, ամեն մեկն իր սահմանն ունի, իր առաջ ծառացած խնդիրները, և միակ հրամայականն առողջ համագործակցությունն է:

- Ի՞նչ դեր ունի Հայ առաքելական եկեղեցին հայ համայնքի կյանքում:

- Գիտեք, որ Սիրիայի հայ գաղութը պետության կողմից գրանցված է իբրև կրոնական փոքրամասնություն: Եվ այս պարագայում որոշ տարբերություն կա Հայ առաքելականի, Հայ կաթողիկեի և Հայ ավետարանականի միջև: Այս հանգամանքը, անշուշտ, զգալի է նաև այն իմաստով, որ եկեղեցուն կամ կրոնական հաստատություններին տրված են որոշ իրավունքներ, ամեն մի եկեղեցի կամ առաջնորդարան ունի իր դատարանը: Եկեղեցին համարվում է տվյալ կրոնական փոքրամասնության ղեկավար մարմինը, կարգավորում իր համայնքի իրավական գործառույթները, նաև պետության մոտ իր համայնքի ներկայացուցիչն է, իսկ համայնքի առաջ՝ պետության: Այն, որ մեր եկեղեցին դատահիրավական համակարգ ունի, ընդունված և հաստատված է Արդարադատության նախարարության կողմից, այնպես որ, հայ ավետարանականը չի կարող իր խնդիրները լուծել հայ կաթողիկե եկեղեցում, իսկ հայ կաթողիկեն էլ չի կարող իր հարցերը լուծել Հայ առաքելական եկեղեցում:

- Ի՞նչ իրողություններ են առավելապես միավորում հայ համայնքը:

- Ազգային իրողություններ:

- Ինչպե՞ս են նշվում ազգային-կրոնական նշանակություն ունեցող միջոցառումները Դամասկոսի հայ համայնքում:

- Ընդհանրապես, գաղութում չգրված համաձայնություն կա, որ յուրաքանչյուր միջոցառում նշվի մի միության կողմից: Մենք տեղյակ ենք, թե որ միությունն ինչ հանդիսություն պետք է կազմակերպի՝ Սուրբ Ծննդյա՞ն, թե՞ Սուրբ Զատիկի: Դա արվում է, որպեսզի խաչաձևում չլինի՝ նկատի ունենալով, որ Դամասկոսի հայ գաղութը մեծ գաղութ չէ: Նույն սկզբունքով են կազմակերպվում նաև Համբարձման, Աստվածածնի և այլ միջոցառումներ: Որոշակիորեն

միասնական ուժերով իրականացվող ամենամեծ միջոցառումն Ապրիլի 24-ն է, և դա սխալ կլիներ որևէ միության հանձնարարելը: Դա կատարվում է երեք համայնքապետերի՝ Հայ առաքելական, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիների առաջնորդների հովանավորությամբ՝ աղոթքով, պատարագով, իսկ գեղարվեստական բաժինն արդեն բոլոր միություններն իրենք են մշակում: Միասնական ուժերով են նշվել նաև Հայ գրերի գյուտի 1600, Քրիստոնեության 1700-ամյակը, նաև այլ հոբելյանական առիթներ:

- Կա՞ն մարդիկ, ովքեր դուրս են հայկական շրջանակներից:

- Այո, կան, սակայն ոչ թե նրանք դուրս են մղվել, այլ իրենք են իրենց հեռու պահում: Օրինակ, կա խավ, որն ազգային իմաստով «ծույլ» է: Հայ համայնքը կազմակերպվում է մի հստակ խավի ջանքերով, մասնակցությամբ և օժանդակությամբ: Մեր խնդիրն այն մարդկանց հետ է, ովքեր հայերեն չգիտեն կամ մոռացել են: Ինչպես գիտեք, դրանք հիմնականում *հին հայերն* են, որոնց անվանում են *արման կադիմ*: Նրանք Սիրիայում հաստատվել են Ցեղասպանությունից շատ ու շատ առաջ: Նրանց անուններն էլ արդեն հայկական չեն, իսկ ազգանուններում «յան» չկա: Սակայն կա մի հանգամանք. ինչքան էլ հայկական շրջանակներից մարդիկ իրենց հեռու պահեն, վաղ թե ուշ իրավական հարցերով պետք է մեզ հետ, այսինքն՝ իրենց կենտրոնի հետ առնչվեն, քանի որ մեր համայնքին են պատկանում: Երբ մենք հայտնաբերում ենք այդ մարդկանց, ցանկանում ենք նրանց համայնք բերել: Տարիների ընթացքում գաղութի միութենական կյանքն այնպես է կազմակերպվել, որ այսօր գրեթե չկա մեկը, որ ինչ-որ կապվածություն չունենա որևէ միության հետ: Ամեն դեպքում, մենք գրեթե բոլորի մասին էլ տեղյակ ենք: Հայտնի է, որ համայնքը բաժանված է ծխերի: Մենք ունենք երեք քահանաներ, ովքեր տարեկան Սուրբ ծննդյան, Զատկական այցելություն են անում իրենց ծխական տներ և տեղյակ են բոլորի մասին: Այնպես որ, մենք բոլոր մեր հայրենակիցների վիճակի մասին կարող ենք իմանալ համապատասխան միություններից և մեր քահանաներից:

- Հայ համայնքներն ինչքանո՞վ են ներգրավված սիրիական հասարակության մեջ: Արդյո՞ք կա մեկուսացվածություն:

- Ընդհանրապես, հայերը մեկուսացված չեն, նրանք Սիրիայի լիիրավ քաղաքացիներն են, այնպես որ, մեկուսացվածություն չկա: Մեր կողմից չկա, և Սիրիայի արաբ ժողովրդի կողմից չկա: Մեր ժողովուրդն առօրյա կյանքում, նաև մշակութային և այլ բնագավառներում իր հարևանի հետ համագործակցում է, և, կարելի է ասել, լիովին ներգրավված է սիրիական հասարակության մեջ: Ես կա-

ռանձնացնեի միայն լեզվի գործոնը: Հայտնի է, որ հայերի արաբերենը մի քիչ տկար է այն իմաստով, որ մենք արաբերեն խոսելիս որոշ լեզվական նրբություններ նկատի չենք առնում, ասենք՝ շփոթում ենք իգականն ու արականը, որ հայերենում չունենք: Իսկ ընդհանրապես, կա մի հանգամանք՝ կրոնական հանգամանքը, որ մեզ որոշակի յուրահատկություն է տալիս, և նաև լեզուն, որ մեր նկարագիրն է դրոշմել:

- Հայերը երբեմն իրենց հեռու են պահում իսլամական միջավայրից: Դա ինչի՞ արդյունք է:

- Այո, նման բան կա, որ հիմնավորված է հայապահպանմամբ: Մենք ընդհանրապես փորձում ենք հայապահպանումը կազմակերպել առանց որևէ օգնության:

- Ո՞րն է հայապահպանման կարևորագույն հանգրվանը Սիրիայում :

- Դպրոցը: Սիրիայում դպրոցներն անվճար են: Դրանք պետական են, բայց մենք կազմակերպում ենք դպրոցներ, որոնք, ըստ էության, մասնավոր դպրոցներ են: Այս պարագայում մենք պետական օժանդակություն չենք կարող ստանալ: Եվ այդ հովանավորությունները կատարում են հայ համայնքներն ու առանձին անհատներ:

- Սիրիայի մյուս էթնոդավանական փոքրամասնությունների համեմատ ի՞նչ դիրքերում է հայ համայնքը:

- Սիրիայում էթնոդավանական փոքրամասնությունների նկատմամբ խտրականություն չկա. պետությունը բոլորին հավասար սկզբունքներով է մոտենում: Ընդհանրապես, Սիրիայում ազգային փոքրամասնություններին իրավասություն չի տրվում դասավանդել ազգային լեզուն: Սակայն մեզ հաջողվել է պետության առաջ հիմնավորել այն փաստը, որ ազգային լեզուն մեր կրոնի, Սուրբ գրքի լեզուն է, ուստի թե՛ կրոնական, թե՛ ազգային նշանակություն ունի: Նաև նշեմ, որ հայերը որևէ քաղաքական պահանջ Սիրիայում չունեն և օգտվում են էթնոդավանական փոքրամասնություններին վերաբերող բոլոր իրավունքներից:

- Սիրիայի արդի քաղաքական-հասարակական կյանքում կա՞ն հանգուցային դեր ունեցող հայեր:

- Սիրիայում հայերն, ընդհանուր առմամբ, քաղաքականությամբ չեն զբաղվում: Նախ ասեմ, որ մենք միշտ էլ Սիրիայի խորհրդարանում հայ պատգամավոր ենք ունեցել: Հայերին արգելված չէ քաղաքականությամբ զբաղվել: Սակայն մենք հայապահպանության, գաղութի ներքին հարցերի կազմակերպմամբ այնքան զբաղված ենք, որ քաղաքականությամբ զբաղվելու հնարավորություն

ուղղակի չունենք: Մյուս կողմից, մենք ունեցել ենք հանգուցային դեմքեր, ասենք, զինվորականության մեջ, ունեցել ենք գեներալներ, որոնք մեծ ավանդ են ունեցել արաբ-իսրայելական պատերազմներում, նաև բանակի կազմակերպման մեջ: Այս հարցում մեծ ներդրում են ունեցել գեներալներ Արամ Գարամանուկյանը, Ավո Արսլանյանը և այլք: Իսկ այսօր նման գեներալներ չունենք: Ընդհանրապես, հայերը մեծ նպաստ ունեն Սիրիայի պետության կայացման, Սիրիայի արաբ ժողովրդի զարթոնքի, մշակութային, առևտրական, տնտեսական, մի խոսքով՝ գրեթե բոլոր բնագավառներում մեր ավանդն ունենք:

- Ինչպե՞ս է հայ համայնքի տեսլականը հինգ, տասը, տասնհինգ տարի անց: Կլինե՞ն համայնքում փոփոխություններ, թե՞ ստատիկ վիճակը կշարունակվի:

- Անշուշտ, շատ տխուր կլինի, եթե ասեմ, որ որևէ բան չի փոխվելու: Պիտի փոխվի, բայց դեպի լավը: Այսինքն, եթե հինգ տարի անց ոչինչ չփոխվի, դա վատ նշան է: Փոփոխություններ արդեն այսօր կան: Վերջիվերջո գաղութն օր օրի ավելի է կազմակերպվում: Օր օրի հայապահպանության որոշ հարցեր ժամանակի ընթացքում առանձին անհատների և երախտավորների ջանքերով լուծվում են, հետո ավելի փորձառու ենք դառնում և քար քարի վրա դնելով՝ հասնում ենք այն ամուր բերդին, որ հայապահպանությունն է:

- Ի՞նչ մարտահրավերների առաջ է այսօր կանգնած սիրիահայ համայնքը:

- Մեր դժվարությունները, ինչպես ամբողջ աշխարհում, կապված են գլոբալացման վտանգի հետ, որն արդեն մուտք է գործել նաև Սիրիա: Բոլոր այն արժեքները, սրբությունները՝ ընտանեկան, ազգային, եկեղեցական, որոնց վրա հիմնված է մեր հայապահպանությունը, գլոբալացման գործընթացում արժեզրկվում են: Եվ պայքարը դրա դեմ է: Սա արդեն նոր մարտահրավեր է, նոր վտանգ: Մենք ձգտում ենք քայլել գիտական նվաճումների հետ, բայց պետք է փորձենք խուսափել մեր ավանդական արժեքներին սպառնացող վտանգներից, որոնք չեն կորցնում իրենց արդիականությունը:

- Իսկ այսօր կա՞ն ներքին մարտահրավերներ: Արդյո՞ք հնարավոր է, որ ապագայում Սիրիայի հայ համայնքի հոգևոր և ֆիզիկական անվտանգությունը խաթարվի:

- Ընդհանրապես դժվար է նման տեսական հարցերի պատասխանելը, դրանից ես խուսափում եմ: Միայն կարող եմ ասել, որ այսօր՝ Սիրիայի ներկա վարչակարգի օրոք, մեզ հանգիստ ենք զգում, ունենք բոլոր իրավունքները՝ մեր եկեղեցին, մեր դպրոցը, ազատ

կերպով դավանում ենք մեր հավատքը՝ ազատ ապրելով: Եթե ապագայում այլ իրողություններ կամ այլ համակարգ լինի, միևնույն է, փորձելու ենք պահել մեր արժեքները, մեկ ավել, մեկ պակաս:

Շատ վտանգներ կան տարածաշրջանում՝ Միջին Արևելքում: Այսօր մեր հարևան պետություններում տեղի ունեցող գործընթացները տնտեսապես և քաղաքականապես ազդում են մեր երկրի վրա: Եվ մարդկանց, այդ թվում՝ հայերի համար, ովքեր ներգրավված են առևտրի բնագավառում, այլևս դժվար է: Դա է պատճառը, որ արտագաղթ կա, որը տնտեսական շարժառիթներ ունի: Մարդիկ ապագայի նկատմամբ չեմ կարող ասել, թե հույսը կորցրել են, բայց մտահոգ են:

- Իսկ արտագաղթն ի՞նչ չափեր ունի:

- Արտագաղթն, անշուշտ, զգալի է: Ընդհանրապես, միշտ եղել են արտագաղթի ալիքներ դեպի ԱՄՆ, Եվրոպա, Ծոցի երկրներ՝ Քուվեյթ, Արաբական Միացյալ Էմիրություններ, նաև՝ Սաուդյան Արաբիա: Նայած ով որտեղ ինչ աշխատանք է գտնում:

- Ընտանիքներո՞վ են գաղթում:

- Անշուշտ, նախ և առաջ տղամարդն է գնում, իսկ հետո ընտանիքին է տանում:

- Իսկ Հայաստան արտագաղթո՞ւմ են:

- 1990-ականների սկզբներին Հայաստանի անկախացումից հետո դեպի Հայաստան արտագաղթի մեծ ալիք կար, որը հետո նվազեց: Գաղթում էին այնպիսի մարդիկ, ովքեր Սիրիայում ապահովված էին տնով, աշխատանքով: Այնպես չէր, որ գործ չունեին և գնում էին իրենց բախտը փոնձելու: Հիմա դժվար է ասել, թե քանի մարդ մնաց, քանիսը հեռացավ:

- Որքա՞ն է հաշվվում սիրիահայ, այդ թվում՝ դամասկոսահայ համայնքը:

- Մեր ունեցած տեղեկություններով՝ մոտ 100.000, այդ թվում՝ Հալեպում՝ մոտ 60-70.000, Դամասկոսում՝ մոտ 5-6.000 կամ 1.200 ընտանիք: Հետաքրքրական է, որ Դամասկոսի գաղութը միշտ նույնն է մնում: Ճիշտ է, արտագաղթ կա, բայց միշտ էլ համալրումներ են լինում:

- Ակնհայտ է, որ համայնքը ծերանում է, քանի որ ամուսնությունները շատ քիչ են: Ինչո՞վ է բացատրվում այդ հանգամանքը:

- Այո, ամուսնություններն իսկապե՛ս քիչ են, և դա մեր սխալն է: Հանգամանքներն այսօր այնպես են դասավորվել, որ հայ երիտասարդի համար դժվար է դարձել ընտանիք կազմելը: Խնդիրն այն է, որ ամուսնանալու համար հայ տղամարդը պետք է տուն ունենա: Մինչ այդ ստիպված է 18 տարեկանից բանակային ծառայության

անցնել, այնուհետև վերադառնալ, աշխատել: Եվ մինչև կարողանում է բոլոր պայմաններն ապահովել, բավական ժամանակ է անցնում: Երբեմն ուշ տարիքում են ամուսնանում, և գալիս է մի տարիք, երբ այլևս պետք չէ, որ սպասեն:

- Արդյո՞ք սիրիահայ համայնքում, բացի արհեստավոր և գործարար խավից, նաև մտավորական շրջանակի ձևավորման միտում կա:

- Մտավորական շրջանակներ կան: Ունենք արվեստագետներ, երաժիշտներ, գրողներ, բանաստեղծներ: Սիրիայի ազգային սիմֆոնիկի խմբավարը դամասկոսահայ Միսակ Բաղբուդարյանն է, նաև հետազոտողներ ունենք, դամասկոսահայ Նորա Արիսյանի նման մարդիկ ունենք, ովքեր ստեղծագործում են արաբերենով: Դա շատ կարևոր է:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍԱՐԳԻՍ ՔԵՇԻՇՅԱՆԻ ՀԵՏ

- Ո՞ր շրջանին է վերագրվում Սիրիայում հայ կաթողիկե համայնքի պատմությունը:

- Սիրիայում Հայ կաթողիկե համայնքի պատմությունը վերագրվում է 1670-1700-ականներին: Այդ շրջանում Պարսկաստանից, Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից բազմաթիվ հայեր են ներգաղթել Սիրիա և տարբեր հանգամանքների արդյունքում դավանափոխ եղել, այսինքն՝ ընդունել են կաթոլիկություն: Այս հարցի հետ կապված շատուշատ իրողություններ դեռևս անհայտ են պատմությանը: Հայ կաթոլիկները Ցեղասպանության արհավիրքները չեն տեսել: Սակայն երբ Մարաշի 1920թ. հայտնի դեպքերից հետո հայ կաթոլիկները եկան Հալեպ, նաև Դամասկոս, այնտեղ արդեն կար կաթողիկե համայնք, հայ կաթողիկե եկեղեցի և գերեզմանատուն: Նույնիսկ մի մասն առաջին երկու-երեք տարիները գերեզմանատանն են ապաստան գտել:

- Ի՞նչ կառույցներ ունի Դամասկոսի հայ կաթողիկե միությունը:

- Հայ կաթողիկե միությունը հիմնվել է 1944-ին: Մեր համայնքը շատ փոքր է: Ունենք առաջնորդարան. Դամասկոսի կաթոլիկ հայերի առաջնորդը Հովսեփ եպիսկոպոս Արնաուտյանն է: Ունենք եկեղեցի, որ հայկական չէ: Հայերի կառուցած եկեղեցին չէր օգտագործվում որպես այդպիսին և միայն վերջերս, այսինքն՝ երկու տարի է, որ վերակառուցվեց, բայց այժմ էլ չի օգտագործվում: Գտնվում է Դամասկոսի Բաբ Թումա թաղամասում: Մենք օգտա-

գործում ենք ճիզվիտների եկեղեցին: Նրանք հեռացան և եկեղեցին փոխանցեցին հայ կաթողիկե համայնքին՝ սիմվոլիկ գումարով: Եկեղեցու կարիք այլևս չունենք, և դա էլ եղավ Հայ կաթողիկե համայնքի կենտրոնը: Միշտ ունեցել ենք երկու-երեք հոգևորական: Սակայն հոգևորականների թիվն այսօր նվազել է, այդ առումով դժվարություններ կան:

- Ի՞նչ լեզվով են արվում ծիսակատարությունները եկեղեցում:

- Ամեն կիրակի եկեղեցում հայերեն ծիսակատարություն է արվում, բայց դրա կողքին արաբերենով էլ է ծիսակատարություն արվում այն մարդկանց համար, ովքեր, դժբախտաբար, պատրվակ են բռնում, թե չեն հասկանում: Ես նրանց միշտ էլ ասում եմ՝ հասկանալու հարկ չկա, դուք ձեր լեզվով աղոթեք, Աստված բոլորի լեզուներն էլ հասկանում է: Լեզուն պահեք, դա մեր գանձն է, բայց անօգուտ է: Պատարագների գլխավոր անցքերը հայերենով են տրվում, երգեցողությունը՝ արաբերենով, մի քանի շարական էլ հայերեն է ասվում: Այսպես, ինչ-որ խառը բան է ստացվում: Բայց տոնական օրերին ողջ ծիսակատարությունը պարտադիր հայերենով է լինում: Միայն Ավետարանը, երբ կարդում են, արաբերենով էլ են կարդում: Եվ փոքրիկների երգչախումբ էլ ունենք:

- Հայ կաթողիկե համայնքի հոգևորականները հայե՞ր են:

- Այո: Բայց ոմանք հայ են միայն ծագումով, նրանք հին հայերից են: Այդպիսի մարդիկ առաքելական համայնքում էլ կան, բայց նրանք գրեթե ամբողջությամբ կտրված են եկեղեցուց: Եթե պսակ կամ մկրտություն ունենան, մեկ-մեկ գնում են: Երբ թաղումների ժամանակ գալիս են, տեսնում ես՝ լրիվ արաբացած մարդիկ են:

- Միջին Արևելքի ո՞ր շրջաններում հայ կաթողիկե համայնքներ կան:

-Նախ ասեմ, որ տարածաշրջանում ինչպես Անթիլիասը հայ առաքելականների համար, այնպես էլ մեր մայրավանքը Լիբանանում գտնվող Զմմառի վանքն է, որ 260 տարվա պատմություն ունի: Այդքան տարի հայ կաթողիկե հոգևորականներ ունենք: Փաստորեն, այդ շրջանից Միջին Արևելքում ունեցել ենք վարդապետներ, մատուռներ, եկեղեցիներ, բայց մեր համայնքները փոքր են եղել: Միայն գաղթի հոսքի հաշվին է, որ հայ կաթողիկե համայնքը մեծացել է: Մենք համայնքներ ունենք Դամասկոսում, Հալեպում, Կամիշլիում, բայց ամենամեծը Բեյրութի համայնքն է: Շատ թվով հայ կաթոլիկների արտագաղթ է եղել նաև օվկիանոսից այն կողմ՝ Կանադա, ԱՄՆ, Ավստրալիա. այնտեղ էլ նրանք վերադարձել են իրենց համայնքին:

- Դամասկոսում ապրող հայ կաթոլիկները հայախո՞ս են, թե՞ արաբախոս, և որքա՞ն է նրանց թիվը:

- Դամասկոսում, դժբախտաբար, մեծ մասամբ արաբախոս են: Մեր եկեղեցական տոմարների մեջ գրանցված է 600 ընտանիք, որից միայն 100-ն է հայախոս: Ընտանիքները շատ են նոսրացել: Հայախոսներն ավելի կառչած են եկեղեցուն. 70-100-ը ակտիվ են, արաբախոսներից համայնքի հետ կապ պահում են 200-250 ընտանիք, որոնցից 100-ի հետ, եթե ամեն կիրակի չէ, բայց տոնական օրերին հանդիպում ենք:

- Ինչպիսի՞ն է ազգային գիտակցությունը Դամասկոսի Հայ կաթողիկե համայնքում: Համայնքն ունի՞ ազգային կրթական հաստատություններ:

- Ազգային գիտակցությունը շատ լավ էր անցյալում: Հիմա տեղի է տալիս: Պատճառը մեր դպրոցներն են: Ունենք երեք հայ կաթողիկե դպրոց, Անարատ հղության հայ քույրերի միաբանություն: 150-175 տարվա պատմություն ունի այս քույրերի պատմությունը, նրանց կենտրոնը Հռոմում և Զմմառում է: Զմմառում ունենք որբանոց և մայրապետերի մեծ վանք: Դամասկոսում ունենք մանկապարտեզ, որ շատ մեծ համբավ ունի ոչ հայերի շրջանում: Դամասկոսում մայրապետերը հաստատվել են 1950-ականներին:

Հայ կաթողիկե դպրոցներն անցյալում հայերի շրջանում մեծ համարում ունեին: Հայ նախանձախնդիր ընտանիքները շատ էին ուզում, որպեսզի իրենց երեխաները սովորեն կաթողիկե դպրոցներում: Այդտեղ դաստիարակությունն այլ է. ի վերջո հոգևորականներ են ուսուցիչները:

- Որքա՞ն է հայ աշակերտության թիվը հայ կաթողիկե կրթօջախներում:

- Դպրոցներում և նախակրթարանում առկա 600-ից 60-ն են հայ:

- Իսկ պարտադի՞ր է, որ հայ կաթոլիկն իր երեխային ուղարկի այդ դպրոցները:

- Ոչ, ամենևին էլ պարտադիր չէ: Շատ ու շատ հայ կաթողիկե ընտանիքների երեխաներ սովորում են Միացյալ ազգային վարժարանում, Սահակյանում, Թարգմանչաց վարժարանում, որովհետև այդ դպրոցներում ազգային դաստիարակությունն ավելի մեծ տեղ ունի:

- Հնարավո՞ր է, որ ձեր դպրոցները մի օր այլևս ոչ մի հայ աշակերտ չունենան:

- Հնարավոր է: Ես, որ միշտ լավատես եմ, չեմ բացառում այդ տարբերակը:

- Ինչպե՞ս են հարաբերությունները Դամասկոսի մյուս համայնքների հետ:

- Շատ լավ, փոխադարձ սեր և հարգանք կա: Նաև հոգևորականների մեջ: Այդ միտումը կար թե՛ անցյալում՝ վերջին հիսուն տարիների ընթացքում, թե՛ կա ներկայում՝ Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Արմաշ սրբազանի օրոք, ով իսկական հայ սրբազան է: Հայտնի է, որ մենք Սուրբ ծնունդը նշում ենք դեկտեմբերի 24-25-ին: Իր՝ Դամասկոս եկած տարում նա անակնկալ մատուցեց մեզ: Մեզ մոտ կեսգիշերի պատարագ էր, անշուշտ հայերենով, նա եկավ, խորան բարձրացավ ու նստեց հատուկ հյուրերի համար նախատեսված տեղում: Վերջում խնջույքին մասնակցեց: Սրբազանը շատ ժողովրդական մարդ է: Արդեն մի քանի տարի է, որ պարբերաբար այցելում է մեզ:

- Հայ առաքելականների շրջանում երբեմն կասկածի տակ է դրվում ծեզանում ազգայինի գիտակցությունը:

- Զարմանալի է՝ ազգային եկեղեցի ունենք, և մեզ, շատ դեպքերում, ապազգային են համարում: Ես չեմ առարկում: Բայց մենք պայքարում ենք մեր ազգային դիմագիծը պահելու համար: Չենք ուզում գնալ հոսանքի հետ, ձգտում ենք թիավարել հոսանքի դեմ: Ի վերջո, մեր ազգայինը, մեր լեզուն մեզ համար շատ կարևոր է: Մեզ ի՞նչ են ասում՝ հայ կաթողիկե, չէ՞, ամենասկզբի բառը հայն է: Ինչո՞ւ թուրքացած կամ իսլամացած հայերին անվանում են հայ կամ ծագումով հայ, իսկ մեզ՝ ոչ: Մենք և՛ ծագումով, և՛ ամբողջությամբ հայ ենք:

- Հայ կաթոլիկների ինքնության մեջ ո՞րն է առաջատար բաղադրիչը՝ ազգայի՞նը, թե՞ կրոնականը:

- Անցյալում շատ սխալ մեկնաբանություններ են եղել, հայերը շատ վատ բաներ են արել միմյանց դեմ: Շատ ցավոտ հարցեր այսօր էլ կան, հատկապես Դամասկոսում: Աշխարհի բոլոր տեղերում հայերն ինչ խնդիրներ էլ ունենան, Ապրիլի 24-ը միասնաբար են նշում, իսկ այստեղ երկու միջոցառում է կազմակերպվում: Այսօր շատ է խոսվում դավանանքային հարցերի մասին: Ես ասում եմ՝ դավանանքը վերցրեք մեջտեղից, հավատքը պահեք: Եթե հավատքը պահենք, դա արդեն մեծ բան է: Իսկ եթե հայությունը կորցնենք, կորցնում ենք ամեն ինչ:

- Կրոնական այլ կենտրոնի պատկանելը թուլացնո՞ւմ է ազգայինի գիտակցությունը:

- Ոչ: Ճիշտ է, մենք Հռոմին ենք ենթարկվում, բայց մեզ Հռոմից չեն ասում, թե ազգային մի եղեք: Տեսեք, իտալացիներն էլ կաթոլիկ են, բայց իրենք ասում են՝ մենք իտալացի ենք: Հնարավոր է, որ

անցյալում կամ խավարի շրջանում սխալ բաներ եղել են: Բայց մենք ունեցել ենք հայ կաթոլիկ միաբաններ, որ ամբողջովին նվիրված են եղել հայության գաղափարին: Ազգային հարցում մեզ համար արգելք չկա: Արգելքները մարդիկ են ստեղծում: Սրանից մոտ 50-60 տարի առաջ Դամասկոսում մեր նկատմամբ հեգնանք կար, մեզ ասում էին՝ կաթոլիկներ: Երբ մեր դպրոցը փակվեց, և ես ստիպված եղա Թարգմանչաց դպրոց հաճախել, դպրոցում ինձ ծաղրում էին, ասում էին, որ կաթոլիկ եմ: Մի օր ես ստիպված եղա տնօրենին բողոքել: Հետո մեկ այլ առիթով ես հաճելիորեն զարմացրի նրան, երբ երգեցի հայկական շարականներ:

Մեզ մոլորյալ են համարում, բայց ոչ, մենք մոլորյալ չենք: Ոչ ոք իրավունք չունի մեզ ասել՝ դու հայ ես, կամ՝ հայ չես, կամ ինչո՞ւ հայ չես: Կարևորն այն է, որ ես ինձ հայ եմ զգում: Բոլոր հայերս հայ լուսավորչական ենք, հայ առաքելական ենք, չէ՞ որ Հռոմի եկեղեցին էլ առաքելական է, իսկ Լուսավորիչը հայ չէր: Եվ պետք է ասեմ, որ մենք շատ մեծ հարգանք ունենք Ամենայն Հայոց կաթողիկոսի նկատմամբ:

- Հայ կաթողիկե եկեղեցիներում անցկացվող կրոնական ծիսակարգերը որքանո՞վ ընդհանուր եզրեր ունեն առաքելականի հետ:

- Ե՛վ պատարագը, և՛ ծիսակատարությունները նույնանման են, միայն մեկ տարբերությամբ: Հայ առաքելական եկեղեցիներում հիշատակում են վեհափառներին, մեզ մոտ նրանց հիշատակությունը չկա, մենք հիշում ենք Հռոմի պապին: Մեզ մոտ էլ կան Եկմալյանի և Կոմիտասի պատարագները: Մենք Զմմառի վանքում ունցել ենք զուտ զմմառյան հայկական շարականներ: Եվ այդ շարականների վերաբերյալ անցած տարի իմ բարեկամներից մեկը՝ բեյրութաբնակ Թորիկյանը, դոկտորական թեզ պաշտպանեց: Կան չարամիտ մարդիկ, ովքեր մեզ, առանց իմանալու, ասում են՝ ֆրանկ: Այս տերմինը գալիս է միջնադարից՝ խաչակիրների շրջանից:

- Իսկ ձեզ այժմ ինչպե՞ս են ընկալում հայկական մյուս համայնքները:

- Կաթոլիկների նկատմամբ ընկալումն այժմ փոխվել է: Չէ՞ որ մենք հայ ենք: Հայաստանում հեթանոսներ կան, բայց նրանց չեն ասում՝ դուք հայ չեք, նրանք հայ են:

- Իսկ Մխիթարյան միաբանության հետ կապեր ունե՞ք:

- Այո, նրանք մեզ հետ կապ են պահպանում: Նրանք կենտրոններ ունեն Հալեպում, Բեյրութում: Ցավալի է, բայց նրանք զգալիորեն նահանջել են:

- Կաթոլիկ շրջանակներում ի՞նչ հայկական ազգային տոներ են նշվում:

- Մեզ մոտ բոլոր հայկական ազգային տոները նշվում են: Օրինակ՝ Վարդավառը: Մենք դրան ասում ենք Տաղավար: Եվ Վարդանանցն էլ ենք նշում: Մխիթարյանները գրել են, որ Վարդանանցը մեր էքսկլյուզիվն է: Մենք ամեն տարի Դամասկոսում նշում ենք Սրբոց Վարդանանց տոնը, և այդ օրը Վարդանների անվանակոչության օրն է:

- Ձեր տեսանկյունից, ինչպիսի՞ն է դամասկոսահայ համայնքի ազգային հեռանկարը:

- Հոռետեսությունը լավ բան չէ: Հույսով ենք ապրում, բայց կա մի պատ, այդ պատին ենք բախվում: Ազգային մրցակցությունն է, որ պահում է համայնքը, թե չէ ավելի շուտ կկորցնեինք ազգայինը: Դամասկոսում դրա հավանականությունն ավելի մեծ է, ես կասեի, խմորն աստիճանաբար թուլանում է:

- Ինչպե՞ս են ընկալվում հայերը Սիրիայում:

- Ես կարծում եմ, որ մենք Սիրիայում առաջին կարգի քաղաքացիներ ենք, մեզ վստահում են: Ըստ իմ համոզման՝ առանձին դեպքերում մեր նկատմամբ ավելի հարգանք ունեն, քան սիրիացի արաբների:

- Վերջին շրջանում Դամասկոսում հայ երիտասարդները կարծես ավելի շատ են բարձրագույն կրթություն ստանում:

- Բարեբախտություն է, որ երիտասարդները բարձրագույն կրթություն են ստանում: Բայց այդ զանգվածի մեջ նրանք կորչում են որպես հայ: Միությունների հետ կապ ունեցողները պահում են իրենց ազգային գիտակցությունը, իսկ կապ չունեցողները կորցնում են իրենց ազգայինը:

- Ինչպե՞ս են հայ կաթողիկե համայնքի հարաբերությունները Հայաստանի հետ:

- Շատ կարևոր է Հայաստանի հետ շփումը, միշտ կապի մեջ ենք Հայաստանի հետ: Մենք մեր երգչախմբով Հայաստանում համերգ ենք տվել:

- Խնդրում եմ, ներկայացրեք երգչախումբը, որ բավական հայտնի է Միջին Արևելքում:

- «Քնար» երգչախումբը հիմնվել է 1960-ականներին: Այժմ նրա խմբավարը որդիս է՝ Շանթ Քեշիշյանը: 1989-ին՝ դեռևս խորհրդային շրջանում, Հայաստանից խմբավար հրավիրեցինք՝ Թաթուլ Ալթունյանի որդուն՝Ժիրայր Ալթունյանին, որ երգչախումբը զարգացնի: Նա այստեղ մնաց 11 տարի: Այժմ երգչախումբը մոտ 45-50 անդամ ունի: Մեր երգչախմբով մասնակցում ենք միջհամայնքային միջոցառումներին: Արդեն հիսուն տարի է, որ Ապրիլի 24-ի միջոցառմանն ենք մասնակցում, տարեկան համերգներ ենք տալիս Քե-

սաբում, Լաթաքիայում, Բեյրութում: Երգը մշակույթի մի մասն է, երգը շատ կարևոր է:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ 2005-2010թթ. ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀՈՎԻՎ ՊԱՏՎԵԼԻ ՏԱԹԵՎ ԲԱՍՄԱՃՅԱՆԻ ՀԵՏ

- Խնդրում եմ ներկայացրեք Դամասկոսի հայ ավետարանական համայնքը:

- 1846-ին Պոլսի մեջ հիմք դրվեց հայ ավետարանական շարժման, և այդ օրվանից շարժումը տարածում գտավ: 1922-ից Դամասկոսում հայ ավետարանականները պաշտոնապես եկեղեցի և դպրոց են ունեցել՝ համոզված լինելով, որ դպրոցն ու եկեղեցին քրիստոնեական դաստիարակության մեջ միշտ պետք է կողք կողքի լինեն: Հատկանշական է, որ բոլոր դպրոցները եկեղեցու հետ են հիմնվել:

-Հայ ավետարանական համայնքում ի՞նչ մակարդակում է եղել ազգային ինքնությունը :

-Դեռևս Օսմանյան կայսրության շրջանում էթնոդավանական փոքրամասնությունների բաժանումները եղել են *միլլեթի* սկզբունքով: Հայ ավետարանականներն էլ՝ որպես բողոքական, ունեցել են իրենց ինքնությունը կամ պատկանելությունը: Պարզապես Հայաստանյայց ավետարանական եկեղեցի ենք եղել:

- Դուք 2005-2010-ին եղել եք Դամասկոսի հայ ավետարանական համայնքի հովիվը:

- Մինչև իմ գնալը Դամասկոսում երկար տարիներ մշտական հովիվ չկար: Այնճարի հովիվն էր, որ մոտ լինելու պատճառով ամիսը մեկ գալիս էր Դամասկոս, իսկ կիրակի օրերին տեղական ուժերով տարբեր քարոզիչներ էին քարոզում, որ հավատքը պահպանվի: Համայնքում այնպիսի մարդիկ կան, որ աստվածաբանական ուսում չունեն, բայց կարող են քարոզել և հզոր հավատք ունեն:

- Հայ ավետարանականների եկեղեցին Դամասկոսում արաբա՞կան է, թե՞ հայկական:

- Իբրև եկեղեցաշենք՝ տարիներ առաջ այն հիմնվել է Դանիական առաքելության կողմից: Հայերն ու արաբները միասին էին աղոթում: 1940-ականներին, երբ նրանք պետք է հեռանային Դամասկոսից, արաբների անունով են գրանցել, քանի որ Սիրիան

հայերի հողը չէ: Սակայն համաձայնություն է ձեռք բերվել, որ հայերն էլ կարողանան այդ եկեղեցին օգտագործել: Եվ այսօր այդ եկեղեցում մենք պաշտամունքներ ենք անում, զույգերի հանդիպումները նույնպես այստեղ են լինում, այստեղ է ամառային դպրոցը կազմակերպվում և երիտասարդական հավաքներ ենք անում:

- Ի՞նչ կառույցներ ունեք:

- Ունենք դպրոց, որ Բաբ Թումա թաղամասում է, եկեղեցուն է պատկանում, դրանից բացի, նորից Բաբ Թումայում բավական մեծ հողատարածք ունենք, որ համայնքին է պատկանում: Մենք Կալվածքների հանձնախումբ ունենք, որ պատասխանատու է ունեցվածքը տնօրինելու հարցում: Ունենք Տիկնանց վարչություն, Երիտասարդաց- պատանյաց վարչություն:

- Որպես հայ գոյատևելու ի՞նչ խնդիրներ ունեք:

- Իբրև հայ գոյատևելու խնդիր ունենք, քանի որ ապրում ենք Սիրիայում, և եթե մեր երիտասարդներին թողնես, կնախընտրեն միմյանց հետ խոսել արաբերեն: Երիտասարդների համար այսօր ավելի դյուրին է արաբերեն խոսելը: Բայց տան մեջ փորձում են հայերեն խոսել: Բանալին տանը խոսելու մեջ է: Դպրոցում, որքան ցանկանում ես, հայերեն սովորեցրու, բայց անօգուտ է, տանը պետք է խոսեն: Եթե լեզուն մոռանանք, մեր գործիքները կկորցնենք, միմյանց հետ հաղորդակցությունը կկորցնենք: Եթե մոռանանք հայերենը, ինչպե՞ս պիտի աղոթենք, ինչպե՞ս պիտի երգենք: Կան արաբացած ընտանիքներ, ուր, ասենք, տիկինները հայ են, զավակները արաբերեն են խոսում, մի քիչ հասկանում են հայերեն: Երբեմն եկեղեցի են գալիս, ուզում են մի բան հասկանալ, բայց եթե չեն հասկանում, ինչո՞ւ պետք է գան:

- Իսկ քարոզներն ի՞նչ լեզվով է անցկացվում:

- Հայերեն: Քարոզը, պաշտամունքը, Սուրբ գիրքը, բոլորը հայերեն են: Երբ տեսնում եմ, որ արաբախոս անձինք կան, ջանում եմ, իմ կոտրատված արաբերենով, Սուրբ գրքի հատվածը թե հայերենով, թե՝ արաբերենով կարդալ, որպեսզի մի քիչ էլ նրանք հասկանան: Մտածում էինք, որ նրանց խոսակցական հայերեն դասավանդենք: Բայց չստացվեց: Սակայն շատ կարևոր է, որ տարիքն առած մարդիկ, նաև երիտասարդները խոսակցական հայերեն սովորեն, ոչ թե քերականություն, այլ խոսել կարողանան:

-Համայնքում քանի՞ անդամ կա:

- Մոտ 32 ընտանիք: Իրական թիվը մոտ 50 է, բայց եթե նրանցից քառորդին տեսնես, լավ է:

- Փաստորեն, շատ փոքր համայնք է: Իսկ դպրոցում ուսանողների մեջ քանի՞ տոկոսն է հայ:

- Դպրոցում հայ աշակերտներ գրեթե չկան, միայն մեկը կամ մի քանիսն են հայ: Տարիներով դպրոցն ունեցել է արաբ տնօրեն, ով շատ չի քաջալերել, որ հայերը գան: Հայկական դասարան չկա: Սակայն հայ ավետարանականները պատրաստ են օգնել այլ համայնքների հայ աշակերտներին, ովքեր չեն կարող կրթաթոշակը վճարել և եթե արաբական դպրոց պիտի գնան, կարող են մեզ մոտ ձրի սովորել:

- Ազգային ինքնության ո՞ր բաղադրիչն է, որ ավելի առաջնային է՝ ազգայի՞նը, թե՞ դավանականը:

- Կարծում եմ՝ ազգայինը և դավանանքը՝ միասին, որովհետև հայ ավետարանական պատմությանը եթե նայենք, կտեսնենք, որ սկզբում խզում եղավ, անջատում Հայ առաքելական եկեղեցուց: Կորցրին իրենց մշակույթը, բայց հետո զգացին, որ հայկական շարականներն էլ շատ կարևոր են: Եվ մեր երգարաններում կան թե՛ ավետարանական երգեր, թե՛ հայկական շարականներ, որ երգվում են: Այնպես որ, չեմ կարող տարանջատել ազգայինը կրոնականից կամ հավատքից: Հավատքն ու ազգայինը միշտ միասին են:

- Ինչպե՞ս են ավետարանական համայնքի և հայկական մյուս համայնքների հարաբերությունները: Կա՞ համագործակցություն:

- Հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական կապերը շատ հզոր են, թե՛ բարեկամական, թե՛ պաշտոնական և ոչ պաշտոնական: Տոն օրերին միասին են լինում և նաև Ապրիլի 24-ին համահայկական կամ միջմիութենական միջոցառումներ են կազմակերպում, կամ, ասենք, Վարդանանց տոնի ժամանակ են միասին լինում: Այս հարաբերությունները շատ-շատ կարևոր են, որովհետև ժողովուրդը չգիտի՝ հայ ավետարանականն ինչ է, կաթողիկեն ինչ է, լուսավորչականն ինչ է: Ամեն մեկն իր եկեղեցին միայն գիտի: Մի շրջան հայ ավետարանականների մասին մտածել են՝ արդյո՞ք նրանք քրիստոնյա են, թե՞ ոչ: Սակայն երբ տեսնում են, որ առաջնորդը, պատվելին և պատրիարքը միասին են, կամ խոսում են կամ պաշտոնական արարողություն են վարում միասին, իրենց համար դա արդեն այլ բան է նշանակում: Հասկանում են, որ երեք են, բայց մեկ են: Հիմա բոլորը եթե չմիանան, շատ բաներ կկորսվի իբրև մշակույթ: Այսինքն՝ երբ մի բան ծնվի, և տարիներ անցնեն, առաջ կգնա, արդեն կինստիտուցիոնալացվի: Ես երբեք չեմ մտածում, թե ինչո՛ւ բոլորս միասին չենք: Նախ հասկանանք, թե ինչո՞ւ ենք բաժանվել: Ոչ մի բան օդից չի սկսվել: Պարզապես ցանկություն եղավ նորից ավետարանական ակունքներին վերադառնալ: Ցանկացան Ավետարանը ուսումնասիրել: Դա Պոլսում էր: Առաքե-

լական եկեղեցին և առաջնորդը չարտոնեցին: Ասացին, թե այս խմբի հետ, որ 40 անդամ ունի, ոչ մի հարաբերություն չունենաք:

Առաջին Հայ ավետարանական եկեղեցին հիմնվել է Պոլսում, 1846-ին, Կետիկ փաշայի եկեղեցին է: Նրանց նպատակը եկեղեցին ներսից բարեռորոգելն էր: Մեր համայնքում կան լուսավորչականներ, որ իրենց համարում են ավետարանական: Ես նման բաներին կարևորություն չեմ տալիս: Կարևորը հայ քրիստոնյա լինելն է: Մեզ համար ավետարանականն ամենաբարձր հեղինակությունն է, ամենաբարձր իշխանությունը: Մեզ համար հոգևոր առաջնորդն ամենաբարձր իշխանությունը չէ, և հավատում ենք, որ փրկության մեջ միջնորդ չպետք է լինի:

- Ի՞նչ դեր ունի ձեր տարածաշրջանային կենտրոնը:

- Մենք ունենք համայնքապետ, որ Հալեպում է, սակայն նա Հռոմի պապի պես չէ: Համայնքը պարզապես ունի իր ներկայացուցիչը, և դա համայնքապետն է: Եկեղեցու ամենաբարձր իշխանությունը ո՛չ հովիվն է, ո՛չ հոգաբարձուներն են, այլ եկեղեցու Անդամական ժողովն է, որը վարչական մարմին է: Բացի այդ՝ ունենք համայնքային կառույց, Գործադիր կառույց. սրանք ավելի շատ միջհամայնքային կամ միջեկեղեցական հարցերով են զբաղվում: Բայց եկեղեցու ներքին հարցերը անդամներն են, որ լուծում են:

- Հայ ավետարանականներն իրենց ընկալում են որպես դամասկոսահայ համայնքի մի բաղադրիչ: Ինչպե՞ս են ընկալում մյուս համայնքները նրանց:

- Ընդհանրապես, Դամասկոսի միությունները և համայնքերը, եթե որևէ միջոցառում են կազմակերպում, ավետարանականներին հրավիրում են, և նրանք սիրով գնում և իրենց համայնքն են ներկայացնում: Մենք էլ մեր հերթին, եթե որևէ բան ենք կազմակերպում, բոլորին հրավիրում ենք, և բոլորն էլ մասնակցում են, նույնիսկ Հայաստանի դեսպանությունը: Մենք դեսպանատան միջոցառումներին էլ ենք մասնակցում: Նրանք էլ էին ուզում մեզ այցելել, բայց մեր եկեղեցին՝ իբրև եկեղեցաշենք, արաբներին է պատկանում, դա մտահոգիչ է: Այդ իսկ պատճառով, եթե ինչ-որ միջոցառում էինք կազմակերպում, ցանկանում էինք, որ դպրոցի շենքում լինի, որ ավելի ազատ լինենք, մեր հողի վրա լինենք: Բայց հարգանքն ու փոխհարաբերությունները շատ բարձր մակարդակի վրա են:

- Ավետարանականների նկատմամբ որևէ վերապահ վերաբերմունք կա՞ հայկական շրջանակներում:

- Այո, շատ, որքան ուզեք: Օրինակ, մարդկանց, ովքեր մեզ հետ շփվում էին, ասում էին՝ ինչո՞ւ եք գնում ավետարանականների մոտ, նրանք ձեզ վաղը դավանափոխ կանեն և այլն: Բայց մենք

«դավանափոխ անելու» կարիքը չունեինք: Մեր համայնքում արդեն շատ մարդիկ կան՝ առաքելական և կաթոլիկ, որ գալիս են մեզ մոտ: Գալիս են, քանի որ հարազատ բան են զգում: Ես նրանց ասում էի՝ եթե կիրակի օրերը ոչ մի եկեղեցի չեք գնալու, տանն եք մնալու, միայն այդ դեպքում եկեք: Մենք միայն հավատքի համար ենք աշխատում: Վերջում, երբ Աստծու մոտ գնանք, չի հարցնելու՝ ավետարանակա՞ն ես, թե՞ առաքելական:

- Իսկ Հայաստանի հետ կապեր ունե՞ք:

- Հայաստանի հետ մեր կապերը ավետարանչականի միջոցով է՝ Ռընե Լևոնյանի: Նրանք 1991-ից ի վեր իրենց ուժերը՝ թե՛ նյութական, թե՛ այլ ռեսուրսները, սկսեցին Հայաստան ուղարկել: 1997-ին ես Հայաստան գնացի, մանուկների ճամբարում աշխատեցի: Մեր կապերն այդպես հիմնվեցին: Այստեղ էլ Հայաստանի դեսպանատան հետ կապերը լավ են, միջմիութենական ժողով կա, բոլոր համայնքներից գնում են, մենք էլ ենք ներկա լինում, մեր կարծիքներն ենք հայտնում:

- Ինչպե՞ս եք տեսնում դամասկոսահայ համայնքի հեռանկարը, և ի՞նչ դժվարություններ կան ազգայինը պահելու հարցում:

- Ինձ համար լեզուն ու մշակույթը կարևոր են: Դրանից բացի, գիտեք ի՞նչն է, որ կորչում է… Հայկական հարազատ, մաքուր ոգին է, որ կորչում է: Դամասկոսում ժողովուրդը սիրում է քննադատել, քննարկել, թե ով ինչ տեսակ հայ է: Այս պարագայում է, որ բուն հայկական ոգին սպառվում է: Իսկ հայկական ոգին չափելու ոչ մի չափանիշ չկա: Մարդիկ հաճախ սիրում են ձևացնել, որ իրենք շատ հայրենասեր են, Հ1 են դիտում կամ իրենց տանը հայկական նկարներ ունեն, բայց երբ այցելում ես, միայն քո ներկայությամբ է, որ հեռուստալիքը Հ1 են դարձնում: Շատ հաճախ մարդիկ այս բաներն անում են, որ մյուսներն իրենց մասին չխոսեն կամ չքննադատեն: Այստեղ է հասել գաղութը: Անշուշտ, լեզուն, մշակույթը, մեր կյանքի ձևը կարևոր են, բայց ոգին է, որ միևնույն ժամանակ քրիստոնեական է, դա է կորչում: Բնական է, որ դժվար պետք է լինի այս գաղութի մեջ մեր մնալը, բայց կարծում եմ, որ եկեղեցին շատ գործ ունի անելու՝ հոգևորը սերմանելու առումով: Այնպես որ, ազգայինը և հոգևորը միասին են:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ՀԲԸՄ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ /ՀԵԸ/ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՎԱՉԳԵՆ ՅԱԿՈՒԲՅԱՆԻ ՀԵՏ

- Ի՞նչ կառույցներ ունի ՀԲԸՄ-ն Դամասկոսում՝ ներառյալ կրթական, մարզական, մշակութային: Ի՞նչ գործունեություն է ծավալում Բարեգործականը հայապահպանության և հայկական ինքնության պահպանման ոլորտում:

- Նախ կցանկանայի նշել, որ ՀԲԸՄ ստեղծվել է 1906-ին՝ ի սկզբանե ունենալով բարեգործական նպատակներ: Ինչ վերաբերում է ՀԲԸՄ կարևորագույն կառույց համարվող Հայ երիտասարդաց ընկերակցությանը, այն հիմնվել է 1931թ., երբ անհրաժեշտություն առաջացավ ՀԲԸՄ հովանու ներքո համակարգել մշակութային, սպորտային, սկաուտական, սոցիալական, ակադեմիական և տարբեր այլ ծրագրեր և գործունեություններ՝ կապված հիմնականում Սփյուռքի հայ երիտասարդության հետ: Այսօր ՀԲԸՄ-ն ամենամեծ հայկական բարեգործական կազմակերպությունն է աշխարհում, որ առաքելություն ունի՝ պահպանելու հայկական ինքնությունն ու ժառանգությունը կրթական, մշակութային և բարեգործական ծրագրերի միջոցով: ՀԲԸՄ և ՀԵԸ մասնաճյուղերը Դամասկոսում, ըստ էության, իրականացնում են այն առաքելությունը, որի համար ստեղծվել են: Դրանք երկուսն էլ գործում են Դամասկոսի ՀԲԸՄ շրջանակներում «Նազարեթ Յակուբյան ՀԲԸՄ կենտրոն» անվան տակ:

ՀԲԸՄ Դամասկոսի մասնաճյուղն ունի 250 գրանցված անդամ և ավելի մեծ թվով համակիրներ: ՀԲԸՄ Դամասկոսի մասնճյուղն ունի **Տեղական հանձնախումբ,** որն ունի ենթահանձնախմբեր: Դրանք են՝ **Խնամակալ հանձնախումբը**, որ պատասխանատու է Կյուլլապի-Կյուլպենկյան առաջապահ դպրոցին առնչվող ակադեմիական, վարչական և ֆինանսական խնդիրների համար: Դպրոցում, որն ունի մանկապարտեզ և նախակրթարան՝ մինչև 6-րդ դասարան, սովորում է 160 աշակերտ: Բարեգործականի ամենամեծ գործը դպրոցն է, քանի որ դա այն միջավայրն է, որտեղ ուսուցանվում է հայոց լեզուն, պատմությունը, և որտեղ երեխաների հայկական ինքնությունն է ձևավորվում: Ավելորդ է ասել, որ մեր կրոնի և եկեղեցու մասին գիտելիքը նույնպես ներառված է դպրոցական ծրագրում:

Մյուս կառույցը **Տիկնանց հանձնախումբն** է կամ *Տիկնանց օժանդակ մարմինը,* որը կազմակերպում է միջոցառումներ ՀԲԸՄ տիկնանց համար և օգտագործում է դրանցից ստացված ֆինանսական միջոցները՝ հոգալու հայ համայնքի անապահով ընտանիքների, ուսանողների ծախսերը, բուժման և այլ խնդիրներ ունեցող մարդկանց կարիքները և այլն: Եվ, վերջապես, **Գրադարանի հանձնախումբը,** որը պատասխանատու է՝ հետևելու «Լևոն Ա Յակուբյան գրադարանին», որը տեղակայված է ՀԲԸՄ կենտրոնում: Այն կանոնակարգում է գրքերը, հավաքում նվիրատվությամբ ձեռքբերված գրքերը, հատկացնում է իր բյուջեի մի մասը՝ ձեռք բերելու արժեքավոր հայկական գրականություն կամ տարբեր լեզուներով գրքեր՝ գրված հայկական թեմաների մասին: Հիշյալ հանձնախումբը կազմակերպում է նաև «Գրքի ակումբ» միջոցառումը, որի ժամանակ ակումբի անդամների մի հատվածը քննարկում է անցկացնում որևէ գրքի շուրջ, տեսակետներ փոխանակում: Երբեմն հրավիրվում են գրքի հեղինակը կամ գրքում քննարկվող նյութի փորձագետը՝ եզրափակիչ հանդիպմանը մասնակցելու նպատակով:

Վերադառնալով **ՀԵԸ** Դամասկոսի մասնաճյուղին՝ նշեմ, որ ներկայումս այն ունի շուջ 200 անդամ (18 տարեկան և բարձր) և իր գործունեությունն իրականացնում է հետևյալ հանձնախմբերով՝ **Կրտսերաց հանձնախումբ**, որն ամենշաբաթյա միջոցառումներ է կազմակերպում 6–12 տարեկան երեխաների համար: Այս միջոցառումները նպատակ ունեն՝ երեխաներին ծանոթացնելու հայկական մշակույթի, պատմության, եկեղեցու, Հայաստանի, հայկական ավանդույթների, կերակրատեսակների, սովորությունների, տոների հետ և այլն: Այս ամենն արվում է ստեղծագործական մեթոդների կիրառմամբ, դաշտային ուղևորությունների, թիմային նախագծերի, մրցույթների, ցուցահանդեսների միջոցով: Հանձնախումբն իր գործունեությունը համաձայնեցնում է ՀԲԸՄ Կյուլլապի-Կյուլպենկյան դպրոցի ծրագրի հետ:

Հաջորդը **Պատանեկան հանձնախումբն** է, որն ամենշաբաթյա միջոցառումներ է կազմակերպում 13–18 տարեկան պատանիների համար: Ծրագրերն ու միջոցառումները սերտորեն կապված են Կրտսերաց հանձնախմբի հետ, լրացնում են նախորդի գործունեությունը՝ դրանք հարմարեցնելով տվյալ տարիքային խմբին[65]:

---

[65] Վերոնշյալ երկու հանձնախմբերը Քեսաբում մասնակցում են ամառային սկաուտական ճամբարներին, որոնք կազմակերպում է Հալեպի ՀԵԸ, ինչպես նաև տարբեր ծրագրերի Հայաստանում /«Անդրանիկ» սկուտական ճամբարը

Իր հերթին, **Երիտասարդաց հանձնախումբը** միջոցառումներ է կազմակերպում երիտասարդների և բոլոր ցանկացողների համար: Եվ վերջապես՝ **Մարզական հանձնախումբը,** որի կազմում գործում են բասկետբոլի, թենիսի թիմեր և այլն: Բասկետբոլի թիմը մասնակցում է տարածաշրջանային և տեղական մրցաշարերի:

- Ի՞նչ դժվարություններ կան սիրիահայ համայնքի հայապահպանության ոլորտում, ի՞նչ մարտահրավերներ: Ի՞նչ խնդիրներ կառանձնացնեք:

- Իմ կարծիքով՝ երկու տիպի հայկական համայնքներ կան՝ ավանդական (հին) և նոր (որ Արևմուտքում են): Հայերը Մերձավոր Արևելքում, այդ թվում՝ Սիրիայում, ավանդական համայնքների մաս են կազմում: Հայկական ինքնության և մշակույթի պահպանությունը շատ ավելի դյուրին է ավանդական համայնքներում, քան՝ նորերում, ինչը կախված է մի շարք գործոններից: Օրինակ՝ ավանդական համայնքներում հայերն ավելի կոմպակտ են ապրում, նաև մոտ են հայկական կենտրոններին, դպրոցներին և եկեղեցիներին:

Նշեմ նաև, որ հայերը մշտապես եղել են Սիրիայի օրինապահ քաղաքացիներ և իրենց ներդրումն են ունեցել Սիրիայի շատ ոլորտներում (մշակույթ, առևտուր, արտադրություն, նախագծում, արհեստներ և այլն): Այն հարգանքը, որ վայելում են հայերը, նրանց դարձրել է հպարտ և ոգևորել՝ պահպանելու և ամրապնդելու հայկական ինքնությունը: Այդուհանդերձ, գլոբալիզացիան շատ արագ փոփոխում է այս ամենը: Շատ արագ փոփոխվում են ապրելակերպն ու կենսամակարդակը: Հայերը սկսում են դուրս գալ քաղաքային կենտրոններից, ինչը դժվարացնում է հայկական դպրոցներ, կենտրոններ և եկեղեցիներ նրանց հաճախելը: Դամասկոսում և Հալեպում բացվել են շատ նոր և որակյալ դպրոցներ, որի արդյունքում նվազել է հայ աշակերտների թիվը հայկական դպրոցներում: Մինչդեռ մի քանի տարի առաջ հայկական դպրոցները համարվում էին լավագույնն այս քաղաքներում: Գնալով ավելի դժվար է դառնում հայ երիտասարդների համար հայկական կենտրոնները գրավիչ դարձնելը: Բացի այդ՝ խառնամուսնությունների թվաքանակն

Լերմոնտովոյում, «Բացահայտի՛ր Հայաստանը» և այլն/, որոնք իրականացնում է ՀԲԸՄ Կենտրոնական գրասենյակը: Հայաստանում իրականացվող ծրագրերի հիմնական նպատակն է՝ նպաստել կապերի հաստատմանը Սփյուռքի հայ երիտասարդների և հայաստանյան երիտասարդության միջև, ինչպես նաև հայկական զգացմունքների արթնացումը:

ավելանում է, մինչդեռ ծուլման դեմ պայքարելու համար նոր գաղափարներ պետք է մշակվեն: Հենց այս պարագայում է, որ անհրաժեշտ է դառնում հերոսներ կերտելը: Հայերը հպարտ են իրենց հերոսներով և երբ ինչ որ մեկը հպարտ է իր ժառանգությամբ և իր ազգությամբ, ապա նա անում է հնարավորը՝ պահպանելու և ամրապնդելու իր ինքնությունը: Գիտակցելով այս թեզի կարևորությունը՝ ՀԲԸՄ–ն իրականացնում և օժանդակում է ծրագրեր, որոնք կարող են զարգացնել *հերոսներ*: Նույիսկ դրամաշնորհները, որ տարեկան տրամադրում է ՀԲԸՄ–ն, կենտրոնացած են այն ոլորտներում, որոնցում աշխարհահռչակ հայերի ի հայտ գալն ավելի հավանական է:

- Ինչպե՞ս են ընկալում միմյանց հայ համայնքները Դամասկոսում. ի՞նչ միավորող և տարանջատող գործոններ կան:

– Դամասկոսում բոլոր հայկական համայնքները, կազմակերպություններն ու քաղաքական կուսակցությունները գործում են: Ընդհանրապես, քանի որ Դամասկոսում հայկական համայնքը փոքրաթիվ է՝ մոտ 7000 մարդ, ապա տարբեր խմբերի պատկանող հայերի միջև հարաբերությունները շատ դրական են և համագործակցային: Սակայն շատ ցավալի է նշել, որ երկար ժամանակ էջմիածնի և Անթիլիասի միջև չլուծված եկեղեցական հարցի արդյունքում մշտապես ոչ դյուրին, իսկ երբեմն էլ լարված մթնոլորտ է Դամասկոսում մի խմբի (դաշնակցականների) և համայնքի մնացած հատվածի միջև: Օրինակ, դաշնակցականները փուսախում են մասնակցել որևէ միջոցառման, որ տեղի է ունենում Դամասկոսի Հայ Առաքելական թեմի հովանու ներքո:

- Արդյո՞ք Սիրիայում ներկայումս չհաղթահարվող քաղաքական և սոցիալական ճգնաժամը կարող է էական վնաս հասցնել սիրիահայ համայնքին:

- Ներկայիս սիրիահայ համայնքը ձևավորվել է 1915թ. Հայոց Ցեղասպանությունից հետո: Այդ շրջանից ի վեր հաստատվելով Սիրիայում՝ հայերն իրենց դրսևորել են որպես նվիրված քաղաքացիներ՝ անկախ այն հանգամանքից, թե ովքե՛ր են ղեկավարել պետությունը: Իր հերթին թե՛ սիրիացի ժողովուրդը, թե՛ կառավարությունը հայերի նկատմամբ լավ վերաբերմունք ունեն: Սիրիական կառավարությունը հայերին արտոնեց ունենալ դպրոցներ, եկեղեցիներ, պահպանել հայերենը: Սիրիացիներն, իսկապես, հարգում են հայերին, գնահատում նրանց վաստակը: Սակայն իրավիճակի էլ ավելի վատթարացման դեպքում ամեն ինչ էլ կարող է պատահել: Չեմ կարծում, որ հայերը հավաքական իմաստով կարող են թիրախ դառնալ: Հայերը, Սիրիայի մյուս քաղաքացիների նման, ներ-

կայումս տուժում են ստեղծված իրավիճակի բացասական հետևանքներից:

- Եթե իրավիճակը դուրս գա վերահսկողությունից, ի՞նչ քայլերի կդիմեն սիրիահայերը:

-Բնականաբար անվտանգության երաշխիքների իսպառ բացակայության դեպքում սիրիահայերը ժամանակավոր կամ ընդմիշտ կհեռանան Սիրիայից՝ գերադասելով հաստատվել ավելի անվտանգ երկրներերում: Կարծում եմ՝ շատերի համար ընտրությունը կանգ կառնի առաջին հերթին Հայաստանի վրա:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ

- Ի՞նչ կառույցներ ունի Համազգայինը Դամասկոսում:

- Մեր կառույցներից է Սիրիահայ օգնության խաչը, որը զբաղվում է անապահով ընտանիքներով, կազմակերպում է դասախոսություններ, որ առավելապես վերաբերում են սոցիալական թեմաներին՝ ընտանիքին, առողջապահությանը և այլն: Մեր կառույցներից է ՀՄԸՄ-ը, որի խնդիրը երիտասարդների մարզական դաստիարակությունն է: Ունենք դպրոց՝ Միացյալ ազգային վարժարանը:

- Դամասկոսի հայկական միությունները որքանո՞վ են համագործակցում միմյանց հետ, թե՞ ավելի շատ տարանջատված են միմյանցից:

- Դամասկոսի հայկական միությունների հետ համագործակցելու առումով կառույցը խնդիր չունի: Ըստ էության մեզ կապող հարցերն ավելի շատ են, քան մեզ տարանջատողները: Միակ կամ Դամասկոսին բնորոշ հարցը թեմական հարցն է: Մենք միասնականության խնդիր չունենք. կարող ենք բոլոր հարցերը միասնական ձևով լուծել:

- Հայտնի է, որ անցյալում դամասկոսահայ տարբեր շրջանակների միջև լարվածություն կամ ոչ բարեկամական հարաբերություններ են եղել: Այդ միտումն այսօր նկատելի՞ է:

- Ես անցյալի համար չեմ կարող ոչինչ ասել, քանի որ այդ պահը չեմ ապրել: Միայն կարող եմ այսօրվա համար խոսել: Չկա այդպիսի բան: Այդպես մտածելը նույնիսկ սխալ է: Հնարավոր չէ ոչ բարեկամական զգացումներ ունենալ քո ազգակցի նկատմամբ:

- Այդ դեպքում, եթե հարաբերությունները միությունների միջև նորմալ են, ի՞նչ համատեղ միջոցառումներ են անցկացնում միությունները:

-Համատեղ միջոցառումներ հիմնականում կազմակերպում է ՀՀ դեսպանատունը: Ինքնաբերաբար բոլոր համայնքները մասնակցում են դրանց, բայց Դամասկոսում չկա որևէ միջոցառում, որին բոլոր շրջանակները միասին մասնակցեն: Հավատացնում եմ՝ եթե մենք խորքային հարցեր չունենայինք, միասնական միջոցառումներ կազմակերպելու առումով որևէ խնդիր չէինք ունենա:

- Իսկ Ապրիլի 24-ի միջոցառումն ինչպե՞ս է նշվում:

- Միասնական ուժերով Դամասկոսում երբեք Ապրիլի 24-ը չի նշվել և չի էլ նշվի: Մենք այդ օրն առանձին միջոցառում ենք կազմակերպում:

- Ի՞նչ է իրենից ներկայացնում Դամասկոսի ազգային իշխանությունը, և ի՞նչ տեղ ունի Համազգայինն այդտեղ:

- Դամասկոսի ազգային իշխանությունը գործում և կանոնակարգվում է հին ազգային սահմանադրությամբ: Գլխավոր մարմինը Գավառական ժողովն է, որ ընտրությունների արդյունքում է ձևավորվում և համարվում է օրենսդիր մարմին: Գավառական ժողովը նշանակում է Քաղաքական ժողովը, որը, կարելի է ասել, գործադիր մարմին է: Քաղաքական ժողովն է, որ ղեկավարում է ողջ գաղութի ազգային կյանքը: Մենք Քաղաքական ժողովում մասնակցություն չունենք: Այլ կերպ ասած՝ ոչ թե չենք ուզում մասնակցել, այլ մեզ չի առաջարկվել Քաղաքականի մեջ մասնակցել:

- Իսկ ի՞նչ դեպքում կարող են հակասությունները հաղթահարվել, որպեսզի ազգային իշխանության մեջ համայնքի բոլոր ուժերը գոնե ներկայացված լինեն:

- Այդ հակասությունները չեն կարող առայժմ հաղթահարվել: Հարցը կլուծվի միայն այն դեպքում, եթե երկու կաթողիկոսները որոշեն լուծել այն: Այնպես որ, այդ հարցը դեռ առկախ է:

- Փաստորեն, համայնքում չկա այն գիտակցությունը, որպեսզի հնարավոր լինի վերացարկվել թեմական հարցից, համագործակցության եզրեր փնտրել, մինչև որ խնդիրն արմատական լուծում ստանա:

- Եթե երկու կաթողիկոսները չեն կարողանում այդ հարցի շուրջ համաձայնության գալ, ինչպե՞ս կարող է այն լուծվել համայնքի համատեքստում: Իմ համոզմամբ, որոշ մարդկանց պետք է, որ հարցն այդպես առկախ մնա, որպեսզի իրենք գոյատևեն:

- Հայտնի է, որ սիրիահայերը տարիներ ի վեր առավելապես ներգրավված են արհեստներում: Այդ միտումն այսօր էլ շարունակվո՞ւմ է: Երիտասարդների ո՞ր մասն է ձեր շրջանակում բարձրագույն կրթություն ստանում:

- Եթե ժամանակին երիտասարդների 70 տոկոսն էր արհեստի ճանապարհն ընտրում, և միայն 30 տոկոսն էր կրթություն ստանում, այսօր մեր երիտասարդական թևի մեջ տեսնում ենք, որ հիմնական մասն ուսանող է, այսինքն՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում են սովորում և դիպլոմ են ստանում, որպեսզի կարողանան դրսևորել իրենց: Հնարավոր է նաև, որ դիպլոմը ստանալուց հետո երիտասարդը շարունակի արհեստով զբաղվել: Այսօրվա դրությամբ կյանքի պայմաններն են այդպես թելադրում:

- Ձեր շրջանակում քանի՞ տոկոսն է ակտիվորեն մասնակցում ազգային կյանքին:

- Մեր շրջանակը միշտ ակտիվ է այդ հարցերում, ազգային կյանքին մասնակցությունը միշտ բարձր է եղել, լինի մշակութային միջոցառումներ, թե դրամահավաք: Այսինքն՝ եթե մեր առջև ազգային խնդիր է դրվում, բարձր ակտիվությամբ ենք դրան մոտենում:

- Փաստորեն, չնայած այսօր շատ մարտահրավերներ կան ազգային փոքրամասնությունների համար, ինչպես, օրինակ՝ համաշխարհայնացումը, սակայն ազգային ինքնությունը պահելու խնդիր, գոնե ձեր շրջանակում, չկա:

- Ո՛չ, ազգային գիտակցությունը մեզանում շատ բարձր է: Մենք ազգային վերելքի խնդիր նույնպես չունենք, այն գաղութներից չենք, որ տասնամյակներ շարունակ կորցրել են ազգային հասկացություններն ու միանգամից, ասենք, ազատության հետևանքով, սկսում են զարթոնք ապրել: Մեզանում ազգային գիտակցությունն ի սկզբանե է, և Ցեղասպանությունից հետո հենց ազգային գիտակցությունն էր, որ օգնեց գոյատևել: Առայսօր մեր մեջ նույն գիտակցությունն է:

- Իսկ ի՞նչ լրացուցիչ ազդակներ են անհրաժեշտ՝ աշխուժացնելու ազգային կյանքը:

- Լրացուցիչ ազդակների կարիք կա: Նոր մտածելաձևի կարիք կա: Մենք ժամանակին խնդիր ունեինք, որպեսզի Հայաստանը դառնար ազատ և անկախ երկիր: Եվ երբ Հայաստանն անկախացավ, այսինքն՝ ազգային մի խնդիր լուծվեց, դա չի նշանակում, որ ազգային արժեքները սպառվեցին: Կարծում եմ, որ երեխաների ազգային դաստիարակության համար մեթոդները պետք է փոխվեն:

- Ի՞նչ նկատի ունեք:

- Երիտասարդները ժամանակին ավելի շատ էին կապված իրենց կենտրոնների հետ: Հիմա ազգապահպանությունը կա, սակայն ուրիշ ձևերի կարիք ունի, որը վերաբերում է թե՛ ազգային

դաստիարակությանը, թե՛ նոր մտածելակերպի ձևավորմանը: Այնպես որ, ժամանակի հետ պիտի համահունչ քայլել երիտասարդությանը չկորցնելու համար:

- Իսկ Հայաստանից ի՞նչ եք ակնկալում որպես խթան ազգային կյանքի աշխուժացման համար:

- Ակնկալում ենք, որպեսզի Սփյուռքն ունենա իր հստակ տեղը թե՛ հասարակության, թե՛ իշխանության կողմից: Սփյուռքը չի կարող եզրային տեղ զբաղեցնել Հայաստանի համար:

- Ձեր կարծիքով՝ որքանո՞վ են հայերն ինտեգրված սիրիական հասարակության մեջ:

- Եթե Սիրիայում ապրող ցանկացած հայի հարցնես՝ դու ո՞վ ես, նախ և առաջ կասի՝ ես սիրիացի եմ: Կարծում եմ՝ համարժեքորեն ինտեգրված ենք: Մենք այս պետության զավակներն ենք, այս պետության բանակում ենք ծառայում, այս պետության համալսարաններում ենք սովորում: Եթե սահմանը պաշտպանելու հարց լինի, ես, որպես բանակային, պիտի գնամ, ծառայեմ, որովհետև այս պետությանը մենք պարտք ենք: Մենք պետք է մեր նախնիների պարտքն այս ձևով փակենք: Երկրորդ, մեր մտածելաձևն արդեն իսկ սիրիական է: Ճիշտ է, մենք արմատներով հայ ենք և հայ ենք մեզ զգում, օգտվում ենք ազգային փոքրամասնությունների իրավունքներից ի պատիվ մեր նախնիների աշխատասիրության և ազնվության: Հետևաբար մենք լիարժեք սիրիացի ենք:

- Արդյո՞ք արտագաղթը կարող է սպառնալ սիրիահայ համայնքի հեռանկարին:

- Արտագաղթը կապված է տնտեսական գործոնի և տարածաշրջանում տիրող իրավիճակի հետ: Երբ պայմանները վատթարանում են, մարդիկ սկսում են արտագաղթել: Օրինակ, Լիբանանի պատերազմի ժամանակ մինչև մեկ միլիոն մարդ արտագաղթեց երկրից, որոնց մեջ նաև հայեր և արաբ քրիստոնյաներ, լիբանանցի մուսուլմաններ էլ կային: Այսինքն՝ արտագաղթը փոքրամասնություն լինել կամ չլինելու հետ կապ չունի:

- Եթե Հայաստանում պայմանները թույլ տային, սիրիահայերը Հայաստանում կցանկանայի՞ն հաստատվել:

- Այսօր կան մարդիկ, որ ցանկանում են ՀՀ քաղաքացի դառնալ, իսկ ավելիին տեղյակ չեմ: Բայց հստակ է, որ եթե պայմանները լավանան, դա մարդկանց մտածելաձևի վրա էլ կազդի:

- Ինչպե՞ս եք տեսնում համայնքի հեռանկարը 5, 10, 15 տարի անց:

- Պայմաններից է կախված: Ես չեմ կարող ասել՝ վաղն ինչ կլինի: Այսօրվա դրությամբ՝ Սիրիան արտաքին ճնշումների տակ է:

Ես՝ որպես հասարակ քաղաքացի, զգում եմ, թե սիրիական պետությունն ինչ հզոր, միջազգային ճնշման տակ է: Ես վաղը չեմ կարող ասել՝ ինչ կլինի, քանի որ սխալ կլինի գաղութը տարանջատել Սիրիայից: Գաղութը չի կարող անմասն մնալ Սիրիայից: Սիրիայի հետ ինչ լինում է, գաղութի վրա է ազդում՝ և՛ ազգային, և՛ մշակութային, և՛ սոցիալական, և՛ այլ հարցերում:

- Ի՞նչ սոցիալական շերտերից է կազմված հայ համայնքը Դամասկոսում:

- Բոլոր հասարակություններում սոցիալական շերտավորումներ կան, հայերի մեջ՝ նույնպես: Հայերի մեջ բոլոր շերտերը կան՝ հարուստից մինչև աղքատ: Եվ բացի այդ, ամեն մասնագիտության տեր մարդիկ էլ կան, այդ թվում՝ մտավորականներ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ՀՄՄ) «ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆԱԶԱՐԵԹ ԷԼՄԱՋՅԱՆԻ ՀԵՏ

- Խնդրում եմ ներկայացրեք ձեր միությունը:

- Ես ներկայացնում եմ «Սարգիս Տիրունի» երիտասարդական կառույցը: Հայ մարմնամարզական միությունն (ՀՄՄ) ունի հետևյալ կառույցները՝ Նոր սերունդ մշակութային միություն, Տիկնանց վարչություն, «Սարգիս Տիրունի» ուսանողական երիտասարդական միություն: Ունենք դպրոց՝ Ազգային սուրբ թարգմանչացը, որ հիմնվել է 1898-ին, Դամասկոսում՝ Ս.Սարգիս եկեղեցուն կից՝ Երուսաղեմի Հայոց պատրիարք Հարություն արք. Վեհապետյանի նախաձեռնությամբ: Դպրոցը շատ կարևոր գործոն է մեր համայնքի ազգապահպանության հարցում: Ազգային սուրբ թարգմանչաց դպրոցն ունի մոտ 350 աշակերտ: Ի դեպ, մեր դպրոցում կուսակցական քարոզներ չեն լինում:

- Ինչպե՞ս եք գնահատում դամասկոսահայությունը միասնականության տեսանկյունից:

- Ես Դամասկոսում եմ ծնվել: Եվ միայն մեկ անգամ է, որ մեր համայնքը միավորված եմ տեսել: Դա 1988-ի աղետի՝ երկրաշարժի ժամանակ էր: Դրանից հետո մեր համայնքը միասնական չեմ տեսել: Ի տարբերություն մնացած համայնքների՝ մենք բաժանող խնդիր ունենք. դա եկեղեցական հարցն է, ու մրցակցությունը շարունակվում է: Մենք հայտնվել ենք մի ճակատում, դաշնակցական շրջանակները՝ մեկ այլ:

- Փաստորեն, համայնքում որոշակի լարվածություն կա:

- Միասնականություն չկա, բայց լարվածություն էլ չկա, ինչպես 1950-ականներին էր: Պայքարն ընթանում է քաղաքակիրթ ձևով: Դրա դրական կողմերը կան: Համայնքը միշտ ակտիվ է: Ինչպես նշեցի, պայքարի մի կողմում հնչակյաններն են, նաև՝ ռամկավարները, որ փոքրաթիվ են, ՀԲԸՄ անդամները, որ ավելի նյութական ուժ են, քան թիվ, մյուս կողմում՝ դաշնակցականները:

- Ինչպե՞ս են տեղի ունենում ազգային իշխանության ընտրությունները:

- Դրա համար շատ ռեսուրսներ են ծախսվում: Եգիպտոսից, Լիբանանից, ընդհուպ ԱՄՆ-ից մարդիկ ժամանում են՝ մասնակցելու քվեարկությանը: Եվ դա մեծ ծախսերի հետ է կապված:

- Որո՞նք են համայնքում հիմնական գործող ուժերը:

- Իմ կարծիքով՝ դրանք դաշնակցական ու հնչակյան շրջանակներն են, քանի որ երկուսն էլ թվաքանակով մեծ են:

- Իսկ Ապրիլի 24-ի միջոցառումն ինչպե՞ս է անցկացվում:

- Այդ միջոցառումը երկու տեղ է կազմակերպվում: Հիմնական միջոցառումն անցկացվում է առաքելական, կաթողիկե, ավետարանական՝ երեք հոգևոր առաջնորդների հովանավորությամբ, այդ միջոցառմանը դաշնակցական շրջանակները չեն մասնակցում:

- Նրանք իրենց առանձի՞ն միջոցառումն ունեն:

- Այո, նրանք Հալեպի Հայոց թեմի առաջնորդին են հրավիրում, և սեփական միջոցառումն են կազմակերպում:

- Իսկ մարդկային հարաբերություններն ինչպիսին են:

- Շատ լավ, թե՛ խնամիական, թե՛ բարեկամական: Այսօր այդ սուր հարցերը չկան, մանավանդ երիտասարդների շրջանում:

- Ինչպիսի՞ն է ազգային գիտակցությունը դամասկոսահայ համայնքում:

- Չէի ասի, որ լավ է: Ոչ նպաստավոր շատ հանգամանքներ կա: Անձամբ ես մտահոգ եմ. թուլանում է հայկական դաստիարակությունը. արաբական մշակույթը մեծ ազդեցություն ունի երիտասարդների շրջանում: Մենք աշխատում ենք նրանց հետ պահել՝ երբեմն վիճաբանելով: Բայց պետք է ասեմ, որ դաշնակցական շրջանակներում ազգային դաստիարակության վիճակն ավելի լավ է: Իմ կարծիքով՝ ձուլման վտանգը մեծ է, արաբերենն արագ թափով ներխուժում է:

- Կա՞ն շրջանակներ, ովքեր իրենց հեռու են պահում ազգային կյանքից:

- Կա մի խավ, որն ամեն ինչից դուրս է. այդ մարդիկ մի տեսակ լուսանցքային վիճակում են:

- Ձեր շրջանակում շա՞տ են արաբախոսները:

- Այո՛, կան արաբախոս շատ ընտանիքներ, կան ընտանիքներ, որոնց մոտ հայկական շրջանակում մնալու զգացողությունն աստիճանաբար նվազում է:

- Դա ինչի՞ արդյունք է:

- Անհոգության: Բացի այդ, թուլացել են, և այդ հարցում Հայաստանն իր մեղքի բաժինն ունի: Ընդհանրապես, Հայաստանում տեղի ունեցող դեպքերն էլ են ազդում մեզ վրա: Շատերի կարծիքով՝ Հայաստանի Հանրապետությունն իրենց երազած հայրենիքը չէ: Շատ վատ են զգում, երբ իմանում են, որ Հայաստան է ներթափանցել միասեռականությունը, կամ որ աղանդներն արտոնվում են և տարածում գտնում և այլն:

- Հայաստանից եկող ի՞նչ ազդակներ կարող են նպաստել ազգայինի աշխուժացմանը:

- Հետաքրքրական է, բայց Խորհրդային Միության տարիներին ազգային շունչն ավելի էր զգացվում: Նույնիսկ դաշնակցականները, որոնք դեմ էին խորհրդային իշխանությանը, երբ իմանում էին, որ Հայաստանից խումբ է եկել, խճողում էր սկսվում: Իմ համոզմամբ՝ մեծ դեր է վերապահված Սփյուռքի նախարարությանը, որը մեծ ֆինանսավորում պետք է ունենա: Պետությունն ինքը պետք է ֆինանսավորի Սփյուռքին առնչվող միջոցառումները: Այս ընթացքում Հայաստանից այնքան անհաջող խմբեր ու արվեստագետներ են եկել, որ մարդիկ հիասթափվել են:

- Իսկ արտագաղթ կա՞:

- Արտագաղթ միշտ կա դեպի ԱՄՆ, Եվրոպա, Կանադա, քիչ քանակով գնում են Հայաստան:

- Սոցիալական ի՞նչ շրջանակներ են Հայաստան արտագաղթում:

- Հայաստան գնացողները մեծ գումարներով են գնում. նրանք հարուստ մարդիկ են:

- Ինչպե՞ս եք տեսնում համայնքի հեռանկարը:

- Ես լավատես չեմ: Կա արաբանալու վտանգ, կամ մարդիկ կարող է ուղղակի թողնեն ու գնան: Խառնամուսնությունները գնալով շատանում են: Դա նույնպես մտահոգիչ է: Բացի այդ պետք է նկատի ունենալ արտաքին գործոնները: Ես մտավախություն ունեմ, որ Սիրիան կարող է Իրաքից «վարակվել»:

- Ինչպե՞ս եք գնահատում սիրիահայ համայնքի հեռանկարը մանավանդ ներքաղաքական ներկա ճգնաժամի համատեքստում:

- Սիրիայի հայ համայնքն իր գոյության ընթացքում որևէ վտանգ չի զգացել, քանի որ վայելում է սիրիացիների բարձր գնահատան-

քը և հարգանքը: Այո, ներկայումս մեծ մտահոգություն կա, որ երկրի վիճակը կարող է ավելի վատանալ, և հայերն էլ, ինչպես մնացած սիրիացիները, տնտեսական նեղ վիճակի մեջ են հայտնվել: Այս հանգամանքը բացասաբար է անդրադառնում հայ համայնքի կրթական և մշակութային հաստատությունների վրա, որոնք ֆինանսավորվում են հայերի նվիրատվությունների հաշվին:

- Արդյո՞ք հայ համայնքը կամ նրա մի հատվածը կարող էր այլ դիրքորոշում որդեգրել ներքաղաքական ներկա զարգացումների վերաբերյալ, ասենք՝ չեզոքություն:

- Սիրիայի հայերն անկախության օրվանից ի վեր, անկախ 1950-ականների իրար հաջորդող հեղաշրջումներին, միշտ եղել են իշխանությունների կողքին: Հայ համայնքի ղեկավարներն այդ մոտեցումը բացատրում էին հայերի խոցելի վիճակով և քիչ քանակով: Իսկ ներկայումս հայերը չէին կարող սատարել ընդդիմադիրներին, քանի որ նրանց աջակցում է Թուրքիան, որի նկատմամբ Սփյուռքի կեցվածքը հայտնի է:

- Հնարավոր արտագաղթի դեպքում ո՞ր երկրներ կնախընտրեն մեկնել սիրիահայերը: Արդյո՞ք՝ Հայաստան: Ինչպե՞ս կարող է Հայաստանը օգնել Սիրիայի հայերին:

- Չնայած ներկայիս դժվար կացությանը՝ ոչ մեկն արտագաղթի մասին դեռ չի մտածում, քանի որ երկրի վիճակն այնքան չի վատացել, որ զանգվածային արտագաղթի մասին խոսք լինի: Թեև վերջին ամիսներին Հայաստանի քաղաքացիության համար դիմողների թիվը բավականին ավելացել է, դժբախտաբար շատ քչերի համար է Հայաստանը դիտվում որպես մշտական բնակության վայր: Սիրիահայերը կցանկանային արտագաղթել ավելի շատ ԱՄՆ, Կանադա, ԱՄԷ: Հայաստանում հաստատվել չցանկանալու համար մի շարք պատճառներ կան: Կարծում եմ՝ կա որոշակի անվստահություն, վստահ չեն, որ Հայաստանում պաշտպանված կլինեն, բացի այդ, Հայաստանն ինքն էլ տնտեսական խնդիրներ ունի: Գուցե եթե իշխանություններն այնպիսի օրենքներ մշակեն ներգաղթողների համար, դյուրացնեն նրանց պայմանները, ապահովեն աշխատանքով, շատերը ցանկանան Հայաստան տեղափոխվել:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՈԱԿ ԵՎ ՀԲԸ Մ ԱՆԴԱՄ ԴՐ. ԶՈՐՋ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՀԵՏ[66]

- Պրն.Բարսեղյան, տարիներ շարունակ /1998-2010թթ./ լինելով Թ.Մ.Մ. Դամասկոսի մասնաճյուղի կարևոր պատասխանատու՝ խնդրում եմ ներկայացրեք Թեքեյան մշակութային միությունը:

- Սփյուռքում Թեքեյան մշակութային միությունը 1921-ին ստեղծված Ռամկավար ազատական կուսակցության մշակութային գործունեությունն իրագործող մարմինն է, այդ իսկ պատճառով միությունը ենթարկվում է Ռամկավար ազատական կուսակցությանը: Թեքեյան միությունը ոչ թե քաղաքական, այլ մշակութային միություն է, Սիրիայում պետական գրանցում ունի և վայելում է կառավարության համակրանքը: Սիրիայում մշակութային գործունեության շրջանակներում են գործում նաև մյուս ավանդական կուսակցությունները:

Ռամկավար ազատական կուսակցության Դամասկոսի մասնաճյուղն ունի ՈԱԿ Կիլիկիա ակումբ անվանումը, հիմնվել է 1922թ., ունեցել է հայտնի դեմքեր, ինչպիսիք են՝ Միհրան Տեր-Ստեփանյանը, պրոֆ. Մարտիրոս Անանիկյանը, Վահագն Ճռյանը, Հարություն Նաշալյանը, Հակոբ Գապպենճյանը, Ալեքսանդր Փաշայանը: Կիլիկիա ակումբը գտնվում է Դամասկոսի քրիստոնեական Քասսահ թաղամասում:

- Ի՞նչ վարչական կառույցներ ունի ՈԱԿ Դամասկոսի կառույցը:

- Դամասկոսում ՈԱԿ Վերին մարմինը Վարչական մարմինն է, ընտրվում է ընդհանուր անդամական ժողովի ընթացքում՝ երեք տարին մեկ: Կառույցը պատասխանատու է քաղաքական, միջկուսակցական, թեմական գործունեության և Հայաստանի Հանրապետության դեսպանատան հետ ՈԱԿ Դամասկոսի հարաբերությունների համար:

---

[66] Զորջ Բարսեղյանը դամասկոսահայ է, մասնագիտությամբ՝ բժիշկ-սրտաբան: 1998-2008-ին եղել է ՈԱԿ ԹՄՄ Դամասկոսի վերին մարմնի ատենադպիր, իսկ 2008-2010-ին՝ փոխատենապետ: 2000-2003-ին վարել է Դամասկոսի ազգային առաջնորդարանի քաղաքական խորհրդի փոխատենադպիրի պաշտոնը: Ներկայումս Զ.Բարսեղյանը սփյուռքահայ մամուլում հանդես է գալիս ազգային, քաղաքական և հասարակական թեմաներով հոդվածներով և հրապարակումներով:

Թեքեյան մշակութային միությունը /ԹՄՄ/ գտնվում է Դամասկոսի ՌԱԿ Վերին մարմնի ենթակայության տակ: Իրականացնում է մշակութային, սոցիալական, դաստիարակչական, մարզական գործունեություն: Ունի ենթավարչություններ՝ Երիտասարդաց վարչություն, Պատանեկան վարչություն, Ուսանողական վարչություն, Ընկերային վարչություն, Մարզական վարչություն:

Դամասկոսի ՌԱԿ Վերին մարմնի ենթակայության տակ է գտնվում նաև Տիկնանց վարչությունը, որը զբաղվում է իգական սեռի անդամների ազգային, մշակութային և սոցիալական գործունեությամբ: Տիկնանց վարչությունը պատասխանատու է Կրտսերաց վարչությանը:

Արմենական արիական շարժումը ԹՄՄ վերին մարմնի ենթակայության տակ է, զբաղվում է միության երիտասարդների, պատանիների, կրտսերների ազգային և սկաուտական դաստիարակությամբ: Այս համատեքստում կցանկանայի հիշատակել Կիլիկա ակումբի վերջին շրջանի ատենապետերի անունները, որոնք զգալի գործունեություն են ծավալել հանուն կուսակցության ու միության առաջընթացի: Նրանք են՝ Գրիգոր Ասիլյանը, Գրիգոր Բարսեղյանը, Ժիրայր Գրիգորյանը, Զոհրապ Դեմիրճյանը: Ներկայիս ատենապետն Արա Ձիվանյանն է:

- Ի՞նչ գործունեություն է ծավալում Թեքեյան մշակութային միությունը:

- Թեքեյան մշակութային միության ազգային գործունեությունը նույն ինքը ՌԱԿ ծրագիրն է, որ Դամասկոսի պարագայում իրագործվում է Վերին մարմնի հսկողությամբ: ՌԱԿ-ն իր ծրագրերից առաջնայինը համարում է ազգայինը՝ երկրորդական մակարդակի վրա թողնելով քաղաքական համոզումը: 70 տարիներ ի վեր գաղափարական հակասություններ ունենալով հանդերձ՝ ամուր և կառուցողական հարաբերություններ ունեցել Խորհրդային Հայաստանի հետ: Նույն հաջողությամբ շարունակում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ, որովհետև ՌԱԿ-ը համոզված է, որ Հայաստանի տարածքի վրա գտնվող որևէ պետականություն անհրաժեշտ է ընդունել որպես ազգային ինքնության պահպանման երաշխիք, որին պետք է անպայմանորեն սատարել:

Ազգային գործունեությունը Սփյուռքի մեջ՝ ՌԱԿ-ի համոզմամբ, կենտրոնանում է երեք առանցքների շուրջ՝ հայապահպանում, Հայ դատ, աջակցություն Հայաստանի Հանրապետությանը: Տեղական պայմաններից օգտվելով՝ Վերին մարմինը փորձում է առավելագույն չափով հետևել հիշյալ ծրագրերին: Դրանց գործնական ըն-

թացք է տրվում, որի արդյունքում երիտասարդների, պատանիների և մեծահասակների համար կազմակերպվում են 15-օրյա դասախոսություններ, երկխոսություններ, բանավեճեր՝ նվիրված Հայաստանի Հանրապետության քաղաքականությանը և այլ ոլորտներին: Կազմակերպվում են նաև մերձեցման երեկոներ՝ խնջույքներ, կիրառական արվեստի տարբեր մարզեր ընդգրկող մշակութային ցուցահանդեսներ, տոնավաճառներ, որոնք կարող են ունենալ երեսնօրյա հաճախականություն: Ծրագիրը ներառում է նաև տարեկան այլ միջոցառումներ՝ տարեկան ամառային բանակում, հիմնականում Քեսաբում, Ս.Խաչի տոնին նվիրված հարիսայի ավանդական ձեռնարկ Դամասկոսի Սուրբ Սարգիս եկեղեցու բակում, Նոր տարվա պարահանդես Դամասկոսի հյուրանոցներից մեկում, Խորհուրդ մեծի գիշերային շրջագայություն, Զատկվա մեծ խրախճանք, Մայրերի օր, Համբարձման դաշտագնացություն: Այս բոլորն իրականանում են վերոնշյալ վարչությունների և ենթավարչությունների կազմակերպմամբ: Գոյություն ունի նաև հնգամյա ծեռնարկ՝ նվիրված ՌԱԿ կլոր տարեդարձներին, որին, որպես կանոն, հրավիրվում են ՌԱԿ ատենապետն ու կենտրոնական վարչության անդամները, նաև դամասկոսահայ գաղութի ազգային, համայնքային, կուսակցական ու միութենական ղեկավարներ («Վահան Թեքեյան» շքանշանով պարգևատրելու համար), Վերին մարմնին հարմար նկատված անձնավորություններ, ովքեր հայ ազգին մատուցել են գնահատելի ծառայություններ՝ առանց նկատի ունենալու նրանց կուսակցական պատկանելությունը կամ դավանանքը: Հիշյալ բոլոր ձեռնարկների և միջոցառումների գլխավոր նպատակը, ինչպես նշեցի, հայապահպանումն ու Հայ դատի հետապնդումն է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը սատար կանգնելու անհրաժեշտությունը և դրանց գործնական դրսևորումներ տալու խրախուսանքը: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ Դամասկոսում Հայաստանի Հանրապետության հաստատումից մինչ օրս Վերին մարմինը, կուսակցության ծրագրին հավատարիմ մնալով, անվերապահորեն աջակիցն է եղել դեսպանատանն ու իրարահաջորդ դեսպաններին և աշխատակիցներին՝ թե՛ նյութապես և թե՛ բարոյապես:

- Ինչպե՞ս եք գնահատում ազգային գիտակցությունը դամասկոսահայ համայնքում:

- Սփյուռքում ազգային գիտակցությունը գլխավորապես զգացմունքային հիմքի վրա է, որ արդյունքն ու շարունակությունն է 70 տարվա խորհրդային շրջանի հայրենասիրության: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության 20 տարիները որոշ չափով փոխեցին Սփյուռքի պլատոնական այս ազգային գիտակցությունը՝ դրան

առարկայական ու գործնական երանգ տալով: Ինչ խոսք, պահանջվածը դեռևս շատ ավելին է, սակայն այն կարող է իրականանալ քաղաքական, հասարակական և տնտեսական կայունություն ներշնչող երկրում՝ հաջողված և հստակ օրենքներով գործող: Հավատում ենք, որ հանրապետության բոլոր նախագահները, կառավարություններն ու խորհրդարանները միտված են եղել այդ նպատակի իրագործմանը՝ ամեն ոք իր ճանապարհով, հնարավորություններով ու առիթներով: Դամասկոսահայ շրջանակում եղել են առանձին ձեռներեցներ, ովքեր փորձել են Հայաստանում տնտեսական ներդրումներ կատարել՝ դրանով իսկ դեպի Երկիր ծրագրի մաս կազմել, սակայն դա քչերին է հաջողվել, իսկ մնացածների մոտ ոչ դրական տրամադրություններ են առաջացել:

- Ի՞նչ կրթական հաստատություն ունի Դամասկոսի Թեքեյան միությունը:

- Դամասկոսում Թեքեյան միությունը դպրոց չունի, ինչը նույնիսկ կարող է դրական համարվել այս փուլի համար, քանի որ այսօր Դամասկոսի հայկական դպրոցներում արտագաղթի և հիվանդագին չափերի հասած օտարամոլության արդյունքում հայ աշակերտների թիվը գնալով նվազում է: Մոտ ապագայում գուցե լավագույն լուծումը պիտի լիներ այն, որ բոլոր հայկական դպրոցները միավորվեին մեկ հզոր ու չեզոք կառույցի մեջ: Այնուամենայնիվ, Սփյուռքի մեջ ակումբը կոչված է կատարելու ազգային դեր, որովհետև այն, ազատ լինելով, պետական ուսումնական ծրագիր կատարելու պարտավորություն ունի, նպաստում է սոցիալական դաստիարակությանը, ազգային գիտակցության ձևավորմանն ու զարգացմանը: Սա արդեն ՌԱԿ ազգային ծրագրի մասն է, և Դամասկոսի մեր ակումբն առավելագույնն է անում այդ առումով՝ իրագործելով վերը նշված ազգային, մշակութային, միութենական և ընկերային ձեռնարկները:

- Ինչպե՞ս եք գնահատում Դամասկոսում հայ համայնքի վիճակը՝ ազգային ինքնության պահպանման տեսանկյունից:

- Սփյուռքի մնացած գաղութների նման՝ Դամասկոսը նույնպես դանդաղ հետքայլի մեջ է: Ժամանակի դեմ ենք պայքարում, իսկ մինչ օրս ժամանակին ոչ ոք չի հաղթել: Անշուշտ, մեր վիճակը շատ ավելի անմխիթար կարող էր լինել, եթե կազմակերպված համակարգեր չունենայինք՝ համայնքներ, կուսակցություններ, միություններ, եկեղեցիներ, դպրոցներ և այլն: Ներկայումս բոլոր գաղութներում պակասում են պահպանողականությունն ու հետևողականությունը: Եթե գլոբալացման տոկոսը մի քիչ պակաս լիներ, հիվանդագին օտարամոլությունն էլ չլիներ, ազգային խնդիրների

նկատմամբ շատերն անտարբերությունից չտառապեին, դամասկոսահայ գաղութը կարելի կլիներ օրինակելի համարել:

- Ի՞նչ խնդիրներ կամ մարտահրավերներ ունեն հայերն այսօր Սիրիայում:

- Միասնականությունը: Միասնականությունը դեռևս միևնույն կարծիքն ունենալը, հարցերին մեկ տեսանկյունից նայելը չէ, միևնույն տրամաբանությամբ մտածելը կամ միաձայն որոշում ընդունելը, ընտրելն ու ընտրվելը չէ, այլ երջանկահիշատակ Վազգեն Ա-ի խոսքերով ասած՝ մեկ մեծ բռունցք դառնալով՝ միևնույն տեղը հարվածելն է, և ոչ թե փոքր բռունցքներով միմյանց հարվածելը: Մեր թշնամին մեկն է՝ ձուլումն ու սպիտակ ջարդ կոչված հրեշը, անտարբերությունն ազգային խնդիրների նկատմամբ, օտարամոլությունը և անվերապահ ու անսահման գլոբալացումը: Սրա դեմ առավել մարտունակ պայքարելու համար գաղութի հայապահպանության դրոշը բարձրացնող կազմակերպություններն ու միություններն առավել գործնական արդյունքի հասնելու նախանձախնդրությամբ պետք է երկխոսության մեջ մտնեն՝ միասնական ծրագրեր մշակելու ու դրանք իրագործելու համար: Միտքս հստակեցնելու համար մի օրինակ բերեմ: Գաղութի մեջ քչերը կհիշեն մի տարի, երբ Ապրիլի 24-ին գաղութի բոլոր ուժերը միասին, կողք կողքի հարգանք մատուցեն Եղեռնի զոհերի հիշատակին: Խնդիրն այն է, որ որոշ պատճառներով առաջացած ճեղք գոյություն ունի միությունների միջև, ինչը նրանց բաժանում է երկու մասի. անթիլիասական ճակատ՝ ներկայացված Հայ հեղափոխական դաշնակցությամբ և էջմիածնական ճակատ, որ ընդգրկում է Ռամկավար ազատական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը: Սա նույն ինքը՝ Դամասկոսի թեմի պատկանելության հարցն է, որ տարիների ընթացքում վերաճել է վիհի: Իր հերթին ՀՀ դեսպանությունը զգալի աշխատանք է տարել առկա խնդիրները հնարավորինս հարթելու ուղղությամբ: Դրական տեղաշարժեր կան: Համայնքի տարբեր շրջանակներ այսօր համագործակցում են միմյանց հետ, մասնակցում են այն հանդիպումներին, որ կազմակերպում է ՀՀ դեսպանատունը:

- Ինչպե՞ս եք տեսնում հայ համայնքի ապագան Սփյուռքի համատեքստում:

- Ամեն ինչ աշխարհի վրա ունի սկիզբ, շարունակություն և ավարտ: Սփյուռքը ենթարկվում է այս պարզ օրենքին, ինչին ենթարկվում են նաև ազգերն ու պետությունները: Սակայն վերջիններիս պարագայում մեկի ավարտը կարող է դառնալ հաջորդի սկիզ-

բը՝ պահպանելով շարունակականությունը: Սփյուռքի պարագայում այլ է խնդիրը: Եթե մի պահ, կեղծ լավատեսությունից բացի, հիշենք, օրինակ, Հնդկաստանի հայկական գաղութի պատմությունը, կհասկանանք, թե ինչ ապագա է սպասում մեզ: Անձնական համոզումս այն է, որ Սփյուռքը գոնե պետք է աշխատի օգտակար լինել Հայաստանին: Ս.Էջմիածնին պատկանող՝ միլիարդներ արժեցող և Հնդկաստանի մեջ գտնվող տարածքներն ու կառույցներն այսօր որքանո՞վ կարող են օգուտ տալ իրենց կալվածատիրոջը: Վերջապես հայ համայնք բառն ինքն անկայուն է, որովհետև իր մեջ տնից ու տեղից հեռու, օտար հողի վրա ծլած ու ծաղկած լինելու գաղութի կարգավիճակ ունի, որի անձնագիրը, նկարագիրը, նույնիսկ մշակույթը դանդաղորեն փոփոխման է ենթակա: Պետք է հիշենք, որ Հայ համայնք բառը ժամանակավոր է, իսկ կայունը Հայաստանի Հանրապետությունն է, որը կարիք ունի վերականգնելու Սևրի պայմանագրի իր իրավունքները:

- Ինչպե՞ս եք տեսնում Սիրիայի հայ համայնքի հեռանկարը Սիրիայում հասարակական-քաղաքական արդի գործընթացների համատեքստում: Ի՞նչ մարտահրավերների առաջ է կանգնած համայնքը ներկա փուլում:

- Նախ ասեմ, որ Սիրիան սփյուռքահայության համար սոսկ տեղանուն կամ երկրի անուն չէ, այլ՝ հարազատ տարածք, ջերմ օջախ, ապահով օթևան, ուխտավայր, նույնիսկ՝ հայրենիք, որ ապաստան տվեց Ցեղասպանությունը վերապրած հայությանը: Ցավոք, այսօր Սիրիան կանգնած է քաղաքացիական պատերազմի վտանգի առաջ: Սիրիայում առկա ճգնաժամը, որը ոմանք համարում են արաբական երկրներում իշխանափոխության ալիքի շարունակությունը, սկսվեց բարենորոգումների պահանջով, որին պետության նախագահ Բաշար Ալ-Ասադն անմիջապես արձագանքեց՝ մի շարք կառուցողական և գործնական քայլեր ձեռնարկելով: Սակայն արտաքին միջամտության պատճառով իրավիճակը Սիրիայում վատթարացավ: «Հեղափոխություն» անվան տակ Սիրիայում սկսեցին ակտիվանալ կրոնական ծայրահեղական ուժերը, զինյալ՝ ահաբեկչական խմբերն ու վարձկանները: Միջազգային ասպարեզում Դամասկոսի դեմ բացասական կարծիք ձևավորելու, սիրիացիների վրա հոգեբանական ճնշում գործադրելու և իրականությունը աղճատելու նպատակով՝ Սիրիայի դեմ սկսվեց քարոզչական պատերազմ՝ մասնավորապես արաբական մի շարք արբանյակային հեռուստաալիքների միջոցով: Նպատակը երկրի արտաքին և ներքին անվտանգությունը խարխլելն է, Սիրիան մասնատելը, ինչը շահեկան է արտաքին ուժերի համար:

Երկրում ծայրահեղական տարամադրությունների աճը «Ալավիներին՝ գերեզման, քրիստոնյաներին՝ Լիբանան» կարգախոսի վանկարկումներով, բնականաբար, մտահոգիչ է փոքրամասնություն համարվող քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի համար:

Ես, իսկապես, մտահոգված եմ հայերի հեռանկարով, քանի որ եթե նրանք երկրից հեռանան, ի՞նչ պետք է լինի Սիրիայի տարածքում մեր բազմաթիվ եկեղեցիների /որտեղ հազարավոր հայորդիներ են մկրտվել, զույգեր են պսակադրվել՝ օջախներ հիմնելով/ ու հայ սերունդներ դաստիարակած դպրոցների ու ակումբների ճակատագիրը: Պատկերացրեք թե ի՞նչ կարող է պատահել դրանց հետ… Եթե երևակայենք, որ սիրիահայությանը հնարավոր լինի տեղափոխել Հայաստան, գուցե հայկական կալվածքների ճակատագիրն այնքան էլ կարևոր չլինի /գոնե իմ համար/, քանի որ ներգաղթը հուսադրող է, սակայն Լիբանան տեղափոխվելը կնշանակի նոր արտագաղթ:

Չնայած միշտ այն համոզմանն եմ եղել, որ այն, ինչ Հայրենիքի մեջ չէ, սփյուռքահայության համար ժամանակավոր է, ուստի և անկարևոր, սակայն երևակայական այս գորշ հեռանկարից մտահոգված՝ ես՝ որպես հայ մարդ ու Սիրիայի քաղաքացի, կողմնորոշվել եմ ներկա կառավարության կողմն՝ առանց մի պահ իսկ վարանելու: Չէ՞ որ ներկա կառավարությունն արել է հնարավոր ամեն ինչ՝ երկրում էթնիկ և դավանական հանդուրժողականություն ապահովելու, ինչպես նաև 21-րդ դարում համահունչ ապրելու և սեփական ժողովրդի համար առաջընթաց ապահովելու ուղղությամբ: Կողմնորոշվել եմ՝ նաև հաշվի առնելով, որ սիրիահայերը, Սիրիայի լիարժեք քաղաքացիներ լինելով, ապրում են համախմբված, բարեկեցիկ կյանքով, խոսում և սովորում են հայերեն, հպարտ են իրենց ազգային արժանապատվությամբ, նաև հատուկ հարգանք են վայելում արաբ ժողովրդի կողմից: Այս տեսանկյունից ես ոչ թե սիրիացի հայ եմ, այլ՝ հայ սիրիացի, այսինքն՝ հայ՝ 4000 տարվա ազգային պատկանելությամբ և ապա սիրիացի՝ ընդամենը 96 տարվա գիտակցությամբ: Եվ եթե այդ 96 տարվա նոր նավակը պիտի պահպանի դեպի ապագա փոխանցվելիք իմ 4000 տարվա գենը, ուրեմն՝ պարտավոր եմ դրա ապահովությամբ մտահոգվելու և ըստ այդմ գործելու, ու եթե պետք է, ինչու ոչ, աջակցելու Սիրիայի ներկա իշխանություններին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ
ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍ, ՍԻՐԻԱՅԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴՐ. ՆՈՐԱ ԱՐԻՍՅԱՆԻ[67] ՀԵՏ

- Ո՞րն է ամենահզոր գաղափարը, որ միավորում է սիրիահայ, այդ թվում՝ դամասկոսահայ համայնքը:

- Ամենահզոր գաղափարներից մեկը, որ միավորում է համայնքը, իմ կարծիքով, հայապահպանումն է, մանավանդ այսօր, երբ մարտահրավերների առաջ ենք կանգնած: Այս պարագայում ողջ սփյուռքահայությանը, մասնավորապես՝ դամասկոսահայությանը, հուզող հարցերից մեկը ազգապահպանումն է, այն է՝ հայ ինքնության պահպանումը, ինչը կարևոր է հատկապես նոր սերնդի համար:

- Իսկ մարտահրավերներ ասելով ի՞նչ նկատի ունեք:

- Հայկական վարժարաններն ավարտելուց հետո հայ երեխաները շարունակում են ուսումն արաբական, անգլիական ու ֆրանսիական դպրոցներում, ինչն արդեն իսկ մարտահրավեր է հայ երեխայի համար: Քանի որ նրանք հայտնվում են երկվության մեջ, որովհետև նախ և առաջ հնարավորություն չունեն հայկական դպրոցներ ավարտել: Նրանք միջին հաշվով մինչև 12 տարեկանն են ուսանում հայկական դպրոցներում, իսկ հետո կտրվում են հայկական կրթական միջավայրից: Իսկ ազգային ինքնությունը պահպանում են միայն ընտանիքների և ակումբների շնորհիվ: Այս մարտահրավերը հաղթահարված է Հալեպում: Այնտեղ կան հայկական միջնակարգ և երկրորդական դպրոցներ:

- Ո՞ր միջոցառումներն են համայնքում միասնաբար նշվում:

---

[67] Պ.գ.թ. Նորա Արիսյանը չորս մենագրությունների հեղինակ է՝ «Հայերի արհավիրքը սիրիական մտքի մեջ: Սիրիացի մտավորականների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ», Բեյրութ, 2002 /արաբերեն/, «Հայոց ցեղասպանության արձագանքները սիրիական մամուլում (1877-1935)», Բեյրութ, 2005 /արաբերեն/, «Տեր Զոր. Մարտիրոսաց քաղաք», Հալեպ, 2010 /հայերեն/, «Սիրիահայ երեսփոխանները Սիրիայի խորհրդարաններում /1928-2011/», Դամասկոս, 2010: Բացի այդ, Ն.Արիսյանը կատարել է բազմաթիվ թարգմանություններ հայերենից արաբերեն և արաբերենից հայերեն, որոնք հիմնականում հրատարակվել են Սիրիայում և Լիբանանում: Ն.Արիսյանը հայ-արաբական մշակութային կապերի մերձեցման ոլորտում ունեցած ներդրման համար 2011-ին պարգևատրվել է ՀՀ Սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալով:

- Թիվ մեկ միջոցառումը Ապրիլի 24-ն է: Այդ օրը սիրիահայերն աշխատանքի չեն գնում, իսկ երեկոյան ներկա գտնվում միջոցառումներին: Այսինքն՝ ցանկացած հայ Սիրիայում իր հարգանքի տուրքն է տալիս նահատակներին:

- Դամասկոսահայ համայնքի ո՞ր տոկոսն է ակտիվորեն ներգրավված ազգային կյանքում:

- Ցավոք, քսան տարի առաջ շատ ավելի ներգրավված էին, ջախջախիչ մեծամասնությունն էր ներգրավված: Ինչո՞ւ վերջին քսան տարիներին, քանի որ այդ շրջանում շատացել են այլամուսնությունները, ինչը ես համարում եմ մարտահրավերներից երկրորդը: Բնականաբար, եթե հայ տղամարդն ամուսնացել է արաբ կնոջ հետ, վերջինս պետք է անհարմարություն զգա հայկական միջավայրում կամ հայկական միջոցառումներին, և տվյալ ընտանիքը պետք է աստիճանաբար դուրս մնա հայկական շրջանակից:

- Կա՞ն շրջանակներ, ովքեր իրենց դուրս են դրել հայկական միջավայրից:

- Այո՛, բայց դա շատ փոքր խավ է: Այդ միտումը պայմանավորված է անձնական կամ այլ պատճառներով: Այսօր շատերն ապրում են արվարձաններում, և նրանց համար աստիճանաբար դժվար է դառնում հասնել կենտրոնական Դամասկոս, որտեղ միություններն են: Այս հանգամանքը նույնպես բացասական դեր է խաղում:

- Հայ երիտասարդների քանի՞ տոկոսն է, որ բարձրագույն կրթություն է ստանում:

- Վերջին քսան տարիներին երիտասարդները կրթության շատ ավելի հակում ունեն, և ավելի շատերն են բարձրագույն կրթություն ստանում, քան 1970-80-ականներին էր: Այս գործընթացը շատ տրամաբանական է, քանի որ հայ համայնքն արդեն ձերբազատվել է նախկին գաղթականի կերպարից, որը նյութական խնդիրներ էր լուծում: Սա վերաբերում է ոչ միայն Դամասկոսին, այլև Սիրիայի մյուս հայ գաղութներին նույնպես: Ընդհանրապես, հայ գաղութն ավելի շատ արհեստների նկատմամբ հակվածություն ուներ, քանի որ նյութական ապահովվածությունն իրենց համար շատ ավելի մտահոգիչ էր, քան ուսումը:

- Կարելի՞ է ասել, որ հայ երիտասարդների զգալի մասը սովորում է բարձրագույն ուսումնական հաստատություններում:

- Այո: Կարելի է ասել, բայց երբ նրանք ավարտում են, և գալիս է վերապատրաստվելու ժամանակը, ԱՄՆ (կամ Հայաստան) են մեկնում: Այդպիսով՝ հայ երիտասարդների մի փոքրաթիվ խավ ան-

վերադարձ հեռանում է և որպես ազգային ներուժ՝ այլևս գործունեություն չի ծավալում:

- Հայ համայնքները Սիրիայում որքանո՞վ են ինտեգրված սիրիական հասարակությանը:

- Ինձ համար սա ամենացավոտ հարցն է: Այստեղ մենք շատ բացթողումներ ունենք: Պատկերացրեք՝ Դամասկոսի արհեստավորների միության կամ բժշկական միության մարմինների կազմում ոչ մի հայ չկա, չնայած որ պետական հաշվարկներով առողջապահության ոլորտում մոտ 1000 հայ կա, որոնք առնչվում են ատամնաբուժությանը և դեղագործությանը: Դժբախտաբար մենք պետական մակարդակով ներկայացուցիչներ կամ անդամներ չունենք: Իմ կարծիքով՝ սիրիական հասարակության մեջ ինտեգրվելն արտահայտվել է առավելապես ամուսնությամբ: Հայերի մեջ մեծ խավ կա, որ ծանոթ չէ սիրիացի հայտնի գրողների և արվեստագետների աշխատանքներին, նաև Սիրիայի պատմությանը և այլն: Պետք չէ անտեսել նաև համայնքի ներկայացուցիչների ներկայության հանգամանքը ՍԱՀ խորհրդարանում, Հալեպի և Լաթաքիայի քաղաքապետարաններում և նահանգային խորհուրդներում:

- Ո՞րքան են տիրապետում հայերն արաբերենին:

- Արաբերենին շատ լավ տիրապետում են, շատ լավ շփվում են տեղացիների հետ, մասնավորապես՝ առևտրի ոլորտում, սակայն կա որոշակի անտեղյակություն: Այսօր մարդը չի կարող ինտեգրված լինել ինչ-որ հասարակության մեջ՝ առանց տեղյակ լինելու նրա մշակույթին:

- Հայերն այստեղ իրենց մեկուսացված չե՞ն զգում:

- Երբեք: Երկու կողմերն էլ միմյանց համարժեք են ընկալում: Ոչ հայն է զգում, որ ինքը գետտոյի մեջ է, և ոչ էլ արաբն է զգում, որ սիրիահայը գետտոյի մեջ է: Ես իմ փորձից եմ ասում, որ սիրիացի անգամ բարձրաստիճան պաշտոնյաները խոստովանում են, որ իրենք տարբերություն չեն դնում սիրիահայերի և սիրիացիների մեջ: Եվ մենք հպարտանում ենք դրանով:

- Ինչպե՞ս են հայերն ընկալում Սիրիան:

- Ի պատիվ մեզ՝ սիրիահայերը (ըստ իմ և տեղացիների համոզման) իրենց պարտականություններն ավելի լավ գիտեն, քան իրենց իրավունքները:

- Դամասկոսահայերը, որքան հայտնի է, հիմնականում հայախոս են:

-Այո, բացի օտարազգիների հետ ամուսնացած փոքր խավից: Նրանք ցանկություն ունեն, որ իրենց զավակները հայկական դպրոցներ հաճախեն, ցանկություն ունեն, որ հայալեզու դարձնեն ի-

րենց կենցաղը: Սա փորձ է, սակայն վստահ չեմ, որ հաջողություն կունենան:

- Ինչպիսի՞ն է ազգային կրթության վիճակը Դամասկոսում:

- Ազգային գիտակցությունը սկսվում է հենց դպրոցից, հայերեն առաջին դասագրքի հետ շփումից: Դպրոցում աշակերտները հայերեն են անցնում, իսկ հետո այդ ամբողջ գործընթացը շարունակվում է ակումբներում: Առանց խտրականության՝ բոլոր ակումբներում և եկեղեցիներում հայապահպանումը շարունակվում է և նույնիսկ՝ ավելի խորանում: Դամասկոսում գոյություն ունի չորս հայկական դպրոց: 2011թ. սեպտեմբերին Միացյալ վարժարանը, որ ներկայում մոտ 150 հայ աշակերտ ունի, տեղափոխվեց նորակառույց շենք՝ Դամասկոսի արվարձանում: Այն դառնալու է միջնակարգ և օժտված է արդիական բոլոր միջոցներով:

- Ինչպե՞ս եք գնահատում հայերի իրավունքների վիճակը Սիրիայում՝ մյուս էթնոդավանական փոքրամասնությունների իրավունքների համեմատ:

- Որպես սիրիահայության պատմության հետազոտող՝ կարող եմ ասել, որ հայերին արդեն մեծ հնարավորություն տրվեց 1920-ականներից, երբ սիրիահայերը ստացան քաղաքացիություն, ինչն ուրիշ փոքրամասնությունների չհաջողվեց: Իսկապես, սա ձեռքբերում է: Հայերը մեծ շնորհներ ստացան հանգուցյալ Հաֆեզ Ալ-Ասադի օրոք: Անշուշտ, սիրիահայերն էլ երախտապարտ են նման որոշման համար:

- Ի՞նչ է իրենից ներկայացնում դամասկոսահայ համայնքը:

-Համայնքը բաժանված է տարբեր շերտերի: Կան առաքելական, կաթողիկե և ավետարանական շրջանակներ: Թվաքանակի առումով առաքելականներն ամենաշատն են: Կաթողիկե համայնքի զգալի հատվածն արաբախոս է: Ինչ վերաբերում է հայ ավետարանականներին, նրանք դպրոց ունեն, սակայն ցավալի է, որ հայ աշակերտ չունեն: Նրանք թվաքանակով քիչ են:

- Իսկ համայնքների մեջ կա՞ համագործակցություն:

- Իհարկե, կա: Եվ այս հարցում պետք է նշել Հայաստանի Հանրապետության դեսպանության դրական դերակատարությունը: Դեսպանությունը տարեկան տարբեր առիթներով՝ թե՛ մշակութային, թե՛ Հայաստանից ժամանած պատվիրակների առիթով, հրավիրում է հայ համայնքների մշակութային և քաղաքական թևերի ներկայացուցիչներին և կրոնապետերին: Այսինքն՝ առիթ է ընծայվում, որպեսզի բոլորն իրար հետ շփվեն դեսպանության հովանու ներքո: Այս պարագայում դեսպանությունը, փաստորեն, միավորիչ դեր է կատարում:

- Ինչպիսի՞ն են արտագաղթի տեմպերը դամասկոսահայ համայնքում:

- Ուսանողական խավն է, որ մեկնում է և չի վերադառնում: Այդ միտումը նկատվեց 1980-ականների վերջերից: Այն ժամանակ մենք չէինք հասկանում, որ դա արտագաղթի սկիզբն է: Ընդհանրապես, մեծ մասն Ամերիկա է գնում: Արտագաղթն այսօր, ճիշտ է, դանդաղ տեմպերով է, սակայն իրողություն է:

- Ի՞նչ դերակատարություն ունեն հայերը երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում:

- Եթե սկսենք քաղաքական ոլորտից, պիտի ասենք, որ սիրիական պետությունը հայերին միշտ էլ մեկից ավելի տեղ է հատկացրել խորհրդարանում: Ճիշտ է, այդ քանակը վերջին տարիներին նվազել է, բայց դա էական նշանակություն չունի:

- Ինչո՞վ է բացատրվում տեղերի սահմանափակումը:

- Ժողովրդագրական գործոնով:

- Ի՞նչ կարգով է ընտրվում հայ պատգամավորը:

-Հայ թեկնածուն Հայոց Բերիո թեմի առաջնորդարանի թեկնածուն է համարվում, ընտրվում է մեծամասնական ցուցակով: Վերջին խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել 2007թ. ապրիլին: Մեր պատգամավորը Ս.Սումբուլյանն է Հալեպից, բավական հայտնի իրավաբան է: Սա իր երկրորդ շրջանն է խորհրդարանում: Նա իրեն շատ լավ է դրսևորում, և հայ համայնքն էլ գոհ է իր աշխատանքից: Նա նաև խորհրդարանի արտաքին կապերի հանձնաժողովի անդամ է և հայ-սիրիական բարեկամության պառլամենտական հանձնաժողովի նախագահ: Շարունակելով հարցը՝ ասեմ, որ հայերը մեծ դեր են խաղացել Սիրիայի սոցիալ-տնտեսական կյանքում (Հալեպն այս առումով ավելի ծանրակշիռ է): Թե՛ Հալեպում և թե՛ Դամասկոսում մասնակցելով քաղաքաշինության գործընթացին՝ մեծ ավանդ ունեն այս երկու քաղաքների ծաղկման հարցում: Ռազմական ոլորտում ունեցել ենք գեներալներ՝ արաբ-իսրայելական պատերազմի մասնակից Արամ Գարամանուկյանը, ում միշտ էլ հիշում են, նաև՝ Ավո Արսլանյանը, ով այժմ թոշակառու գեներալ է: Մշակութային ոլորտի համար պիտի ասեմ հետևյալը. մենք զարգացրել ենք մեր մշակույթը՝ այդպիսով նպաստելով սիրիական մշակույթի զարգացմանը: Ունենք հայկական թատրոն, երաժշտանոց, նկարչության կենտրոն, ազգային խմբեր:

- Իսկ դրանք հիմա գործո՞ւմ են:

- Այո, գործում են: Մեր մշակույթի ավանդույթները շարունակվում են, և մենք էլ շարունակում ենք նպաստել սիրիական մշակույթի զարգացմանը: Ասվածի ապացույցն այն փաստն է, որ Սիրիայի

սիմֆոնիկ նվագախմբի խմբավարն այսօր դամասկոսահայ Միսակ Բաղբուդարյանն է: Պատմության մեջ առաջին դեպքն է, որ Սիրիայի սիմֆոնիկի խմբավարը հայ է:

- Արդյո՞ք Սիրիայում հայկական ծագումը չի խանգարում առաջընթացին:

- Կարելի է ասել, որ հայկական ծագում ունենալը նույնիսկ դրականորեն կարող է ազդել հայերի կարիերայի վրա, և գուցե միայն շատ քիչ տոկոսով կարող է բացասական լինել:

- Ինչո՞ւ կառավարությունում կամ պետական այլ ատյաններում, օրինակ՝ արտաքին գործերի նախարարությունում, ծագումով հայ պաշտոնատարներ չկան:

- Դա ինչ-որ անկարելի բան չէ: Օրինակ, անձամբ ես արդեն 7 տարի է՝ Դամասկոսի համալսարանի բանասիրության ֆակուլտետում դասախոս եմ: Մինչև օրս այս ֆակուլտետում հայ դասախոս չի եղել, ոչ թե որ իրենք մերժել են, այլ պարզապես հայերը չեն դիմել: Նույնը գրողների միության կամ այլ հաստատությունների պարագայում է:

- Օրինակ, նույն Թուրքիայում կամ Վրաստանում հայերը ստիպված են եղել ժամանակի ընթացքում հասկանալի պատճառներով փոխել իրենց ազգանունները: Այդպիսի դեպքեր Սիրիայում եղե՞լ են:

- Ո՛չ, երբեք նման բան չի եղել: 1920-ականներից մինչև օրս նման բան չի եղել: Ոչ միայն այս վարչակարգի: Ինչպես արդեն նշել եմ, հայերին քաղաքացիություն շնորհելը մեծապես օգտակար եղավ, որովհետև հայերը ո՛չ փախստականի և ո՛չ էլ քաղաքական այլ կարգավիճակ ունեն, այլ միանգամից դարձան Սիրիայի լիիրավ քաղաքացիներ: Այդ շրջանից ի վեր՝ հայերի նկատմամբ նույն դրական վերաբերմունքն է: Այդ տարիների ընթացքում ո՛չ մի իրավազրկում չի եղել ո՛չ քաղաքացիության, ո՛չ էլ ազգային իրավունքների առումով: Մեր հայկական միությունները շարունակում են գործել ակտիվորեն, և նրանց գործունեությանը խոչընդոտող ոչ մի հանգամանք չկա: Ակումբներում կազմակերպվում են մշակութային և մարզական տարբեր միջոցառումներ (այդ թվում՝ մանկական և պատանեկան), թատրոններ, երգչախմբեր կան, հրավիրվում են մասնագետներ Հայաստանից: Մեր միությունները պաշտոնապես արտոնված են և գրանցված Սիրիայի Սոցիալական և աշխատանքի նախարարության կողմից, ունեն իրենց ներքին կանոնադրությունը և հետևում են տվյալ նախարարության օրենքներին:

- Շատ դամասկոսահայեր՝ որպես մարտահրավեր, համարում են գլոբալացումը:

- Այո՛, գլոբալացումը բացասական կողմեր ունի ընդհանրապես Սփյուռքի համար: Սակայն կարելի է օգտվել դրա դրական կողմերից, իսկ բացասականը փորձել հաղթահարել, այլ կերպ ասած՝ գտնել դրա բանալիները:

- Դամասկոսահայերն ինչպե՞ս են ընկալում Հայաստանը: Ինչպիսի՞ն է կապը Հայաստանի հետ:

-Հայաստանի հետ անմիջական կապ ստեղծվեց Հայաստանի հեռուստակայանների միջոցով: Անշուշտ, որոշ քննադատություններ մեր կողմից եղան, բայց վերջին շրջանում կարծես ավելի լավ է, և ռուսերենն էլ դուրս է մղվել: Իմ կարծիքով՝ սա առաջին քայլերից մեկն էր, որն ավելի շոշափելի ձևով սկսեց կապել մեզ Հայաստանի հետ: Երկրորդ կարևոր հանգամանքը, որ ես կառանձնացնեի, Դամասկոսում Հայաստանի Հանրապետության դեսպանության փաստն է, որ այս առումով լայնածավալ աշխատանք է կատարում: Մյուս գործոնը Հայաստան-Սփյուռք համաժողովներն են, որոնց Դամասկոսից և Հալեպից մեծ թվով մարդիկ են մասնակցում: Բացի այդ, համահայկական խաղերը, գործարարների խորհրդաժողովները: Նաև ուսանողներն են սերտացնում կապերը, այն ուսանողները, որ սովորում են Սիրիայում և Հայաստանում: Նաև Հայաստանից մշակութային խմբերն ու երգիչներն են նպաստում աշխուժացմանը: Դամասկոսահայերը մեծ հաճույքով են մասնակցում հայկական համերգներին: Սրանք բոլորն էլ կարևոր գործոններն են: Այսօր ամբողջ աշխարհում մշակույթը միավորիչ դեր է խաղում:

- Ինչպիսի՞ն է համայնքի մտավոր ռեսուրսը:

- Եթե անկեղծ լինենք, Հալեպն այս հարցում առաջատար է, որովհետև բնակչության առումով մեծ է, լրիվ ուրիշ շերտավորումներ ունի: Դամասկոսում այսօր հայերենով գրքեր չեն տպվում: Վերջին երկու-երեք տասնյակ տարիների ընթացքում դամասկոսահայ համայնքը գրող կամ բանաստեղծ չի ունեցել: Բայց ունեցել է շատ կարևոր անուն՝ Արմեն Անուշ, սակայն դրանից հետո ես չեմ հիշում, որ Դամասկոսում հայտնի գրող լինի:

- Ինչո՞ւ հայկական թերթեր չկան:

- Ի սկզբանե չեն եղել: Դամասկոս են հասնում Բեյրութում տպվող «Ազդակ» և «Զարթոնք» թերթերը: Դամասկոս է հասնում է նաև Բերիո թեմի շաբաթաթերթ «Գանձասարը»:

- Իսկ հայկական ինտերնետային ի՞նչ ռեսուրսներ կան:

- Օրինակ, Հալեպում Համազգայինն ունի կայքէջ: Այստեղ բարեգործականներն ունեն իրենց կայքէջը *Newsletter* ձևով: Համահայկական սիրիական ռեսուրս չկա: Եթե նշանակալից միջոցա-

ռումներ լինում են, արձագանքում են Լիբանանի հայկական թերթերը: Անշուշտ, ներկայումս Ֆեյսբուքում արդեն կան էջեր, որոնք ներկայացնում են գաղութի տարբեր հատվածները:

- Սիրիացի արվեստագետները, ինչպես հայտնի է, երբեմն անդրադառնում են հայկական թեմաներին:

- Ըստ իմ ուսումնասիրության՝ Ցեղասպանության հետևանքները մարդկայնորեն ուշադրության մեջ են եղել սիրիացի մտավորականների, գրողների, թատերագիրների կողմից: Այդ հետաքրքրությունը միշտ էլ եղել է, և դա արտացոլվել է նրանց գրած վեպերում ու պատմվածքներում, թատրոնի մեջ և երբեմն էլ՝ կինոյի ժանրում:

- Ի՞նչ ազդակներ կարող են աշխուժացնել ազգային կյանքը Դամասկոսում:

- Կարծում եմ՝ այդ ազդակները ներքին պետք է լինեն: Եվ, անշուշտ, Հայաստանից եկող: Հայաստանում ինչ-որ իրադարձություն կամ առաջընթաց իր դրական արձագանքն է գտնում համայնքներում, այդ թվում՝ Դամասկոսում: Ի դեպ, Եվրատեսիլը մեծ աշխուժություն էր առաջացրել համայնքում: Հայերն ամբողջ օրը հեռուստատեսության առաջ գամված էին և էլեկտրոնային նամակներ էին ուղարկում իրենց արաբ ընկերներին կամ *CD* էին գնում ու բաժանում:

- Դամասկոսահայ համայնքի հեռանկարն ինչպե՞ս եք տեսնում:

- Դա կապված է մեր դիմադրողականության հետ: Մենք միշտ թիավարել ենք հոսանքի դեմ: Առաջին հերթին պետք է պայքարել օտարամուսնությունների դեմ: Սակայն վերջերս ավելացել է նաև անտարբերությունը հայկական ազգային դիմագիծ ունենալու նկատմամբ:

- Ինչպե՞ս են Դամասկոսի հայ համայնքի հարաբերությունները Միջին Արևելքի մնացած հայ համայնքների հետ:

- Նախ Սիրիայի հայ համայնքները միմյանց հետ կապ են հաստատում իրենց միությունների միջոցով: Սա ցանց է և հաջող համակարգ: Նույն ձևով կարելի է ընդլայնել կապերը դեպի Միջին Արևելքի հայ համայնքների հետ: Իրենք այսպիսով շփման մեջ կմտնեն, կկազմակերպվեն երիտասարդների համատեղ բանակումներ: Սա կարևոր կլինի ուժերը համատեղելու համար:

- Ի՞նչ հեռանկար ունի հայ համայնքը Սիրիայում սկսված ներքաղաքական ներկա ճգնաժամի համատեքստում: Արդյո՞ք հնարավոր իշխանափոխությունը կործարանար հարված կարող է հասցնել հայ համայնքին:

- Խոստովանենք, որ սիրիահայերը ամեն դեպքում նախընտրում են Սիրիայում մնալ: Տնտեսական ճգնաժամից բնականաբար

տուժում են բոլորը: Անձամբ ես չեմ կարծում, որ հնարավոր իշխանափոխությունը կարող է կործարանար հարված հասցնել հայ համայնքին, քանի որ համայնքի թվային պատկերն արդեն նոսրացումի նշաններ էր ցույց տալիս: Ընդգծեմ, որ սիրիահայերն ունեն լիիրավ քաղաքացիության իրավունքներ: Հայ համայնքը միշտ էլ անվնաս տարր է համարվել: Հարցազրուցներում հաճախ եմ նշել հետևյալ միտքը: Գիտակցելով քաղաքացիության պարտավորությունները՝ սիրիահայերը Սիրիայի պատմության ողջ ընթացքում եղել են իշխանության կողքին: Սա չի նշանակում, որ նրանք ինչ-որ անձի, այլ իրականում պետության կողքին են եղել:

- Քաղաքական ճգնաժամի և հնարավոր անկայունության դեպքում ի՞նչ երկրներ կգերադասեն արտագաղթել սիրիահայերը:

- Չնայած բազմաթիվ սիրիահայեր դիմել են Հայաստանի քաղաքացիություն ստանալուն, սակայն մինչ օրս ոչ մի արտագաղթի դեպք չի պատահել: Կարծում եմ՝ ճիշտ չի լինի կանխատեսումներ անել:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՍԻՐԻԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ, ՔԱՐԵՆ ԵՓՓԵ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ԴՊՐ. ՀԱԿՈԲ ՉՈԼԱՔՅԱՆԻ ՀԵՏ[68]

– Խնդրում եմ, ներկայացեք:

– Չոլաքյան Հակոբ, սիրիահայ եմ, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ եմ Քարեն Եփփե ճեմարանում, միևնույն ժամանակ հայոց լեզու եմ դասավանդում Համազգայինի հայագիտական հիմնարկում: Բնիկ Քեսաբցի եմ՝ քարադուրանցի: Նախնական կրթություն ստացել եմ այդ գյուղում, ապա Լիբանանում՝ Այնճարում, Հայ ավետարանական երկրորդական վարժարանում, մեկ տարի ուսանել եմ Հայկազյան վարժարանում, ապա Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետում՝ 1970-1973թթ., 2001թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտում պաշտպանել եմ ատենախոսություն և ինձ շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական կոչում:

---

[68] Հակոբ Չոլաքյանի հետ հարցազրույցը վարել է արևելագետ, պ.գ.թ. Սուրեն Մանուկյանը Հալեպի եւ Բեյրութի համայնքների հասարակական–քաղաքական և արժեքային կողմնորոշումների հետազոտման շրջանակներում: Հարցազրույցը տպագրվում է առաջին անգամ:

– Պարոն Չոլաքյան, ձեր ընկալմամբ, համայնքի ընդհանուր նկարագիրն ինչպիսի՞ն է: Ինչպե՞ս կնկարագրեիք Հալեպի հայ համայնքը:

– Առհասարակ, սիրիահայ համայնքը Սփյուռքի ամենահին համայնքներից է և այդ պատճառով համարվում է Սփյուռքի մայր գաղութը: 1915թ. առաջ Սիրիայում մենք ունեինք բազմաթիվ բնակավայրեր, որոնցում հայությունն ապրում էր դարեր ի վեր: Արմատացած և իրենց այդ երկրի զավակներ համարող հայեր էին ապրում Ալեքսանդրետի սանջակի մի շարք գավառներում, Քեսաբում, Լաթաքիայի շրջանի գյուղերում, նաև Դամասկոսում և Հալեպում, որը հին համայնք է: Սիրիայում դարեր ի վեր հաստատված հայերը կոչվում են հին հայեր: 1915թ., ապա նաև 1922թ. Կիլիկիայից զգալի թվով հայեր հաստատվեցին Սիրիայում:

Այսօր սիրիահայ համայնքի թիվը շուրջ 50.000 է: Այս թիվը մոտավոր է, ճշգրիտ թվաքանակը հայտնի չէ: Հայերը հիմնականում ապրում են Հալեպում, Դամասկոսում, Կամիշլիում, ինչպես նաև Սիրիայի հյուսիս–արևմտյան շրջաններում՝ Քեսաբում, Լաթաքիայում: Սիրիահայ համայնքը լավ կազմակերպված համայնք է: Երեք հայ համայնքներն էլ՝ առաքելական, կաթոլիկ և ավետարանական, ունեն իրենց հոգևոր կառույցները և հայկական մի շարք կազմակերպությունների ներդաշնակ գործունեությամբ ստեղծել է հրաշալի համայնքային կյանք: Լինի դա բարեգործական կազմակերպությունների միջոցով կամ որևէ այլ կերպ, համայնքը մշտապես ամուր կապեր ունի Հայրենիքի հետ:

– Ինչպիսի՞ն է հայ համայնքի ներգրավվածությունը երկրի հասարակական, քաղաքական, մշակութային, տնտեսական կյանքում: Օրինակ՝ իշխանական մարմիններում կա՞ն հայեր:

– Նշեմ, որ սիրիահայ համայնքը կտրված համայնք չէ: Սիրիահայերն այդ երկրի քաղաքացիներ են և լիիրավ քաղաքացու իրավունքներով մասնակից են երկրի տնտեսական, քաղաքական, հասարակական զարգացումներին: Հայերը հատկապես ակտիվ են մշակութային, կրթական ոլորտներում: Այս ոլորտներում մենք ունենք բազմաթիվ երախտավորներ, որոնք պատիվ են բերում մեր համայնքին և Սիրիայի պետությանը:

– Կրթական ոլորտը, որի մասին դուք նշեցիք, շատ կարևոր է: Այսօր ինչպիսի՞ն է համայնքի երիտասարդության հակվածությունը դեպի կրթությունը, նկատվու՞մ է, արդյոք, գիտական առաջընթաց ունենալու ձգտում սիրիահայ երիտասարդների շրջանում: Եթե դիտարկենք, օրինակ, Հալեպի հայ համայնքի վերնախավը, այն ավելի շատ տնտեսական, գործարա՞ր է: Երիտասարդները ձգտում են

ավելի շատ տնտեսական, գործարար ոլորտում ներգրավվել, թե՞ նաև կրթական ոլորտում են ակտիվ:

– Չեմ կարող հստակ վիճակագրական տվյալներ բերել հայ երիտասարդների կրթության ոլորտում ներգրավվածության վերաբերյալ, բայց նկատելի է, որ հայերը բավական ակտիվ են և՛ առևտրի, և՛ ճարտարագիտության, և՛ գիտական, և՛ կրթական ոլորտներում, ինչպես նաև արվեստում ընդհանրապես: Բազմաթիվ հայեր ակտիվ ներգրավված են ազատ առևտրի, ճարտարապետության, կրթության ոլորտներում, ինչպես նաև գիտական հաստատություններում: Նշված ոլորտներում դուք կարող եք հանդիպել բազմաթիվ հայերի ինչպես ավագ, այնպես էլ նոր սերնդի ներկայացուցիչների: Սիրիահայ նոր սերունդը երբեք կտրված չէ սիրիական մթնոլորտից և իրեն խորթ չի զգում:

– Իսկ ներհամայնքային խնդիրների շուրջ համախմբված, համաձայնեցված որոշում կայացնելու մեխանիզմներ կա՞ն արդյոք: Գոյություն ունի՞ միասնական որոշում կայացնելու ձևաչափ:

– Հատկապես Լիբանանի և Սիրիայի հայ համայնքներն իրենց երեք համայնքերի թեմական առաջնորդների ներդաշնակ գործունեությամբ կարողացել են հրաշալիորեն կազմակերպել համայնքների կրթական, հասարակական, ազգային կյանքը: Մինչ օրս, մանավանդ նշված ոլորտներում, երեք համայքներում էլ մեծ հակասություններ չեն եղել: Օրինակ՝ դպրոցներում հայոց լեզվի և գրականության դասավանդման և, առհասարակ, հայեցի դաստիարակության հետ կապված հարցերում համայնքային նպատակներն ու գործունեությունը որդեգրված են բոլորի կողմից և իրականացվում են հավասարապես: Մեր ազգային տոները երբեմն տոնվում են համահավաք կերպով, օրինակ՝ Մեծ եղեռնի հիշատակի օրը երեք համայնքները, միասնական հաղորդագրություն տարածելով, նշում են միասնաբար: Միասնական է նշվում նաև Վարդանանց հիշատակության տոնը: Այսինքն՝ բազմաթիվ առիթներով համայքները միասնական են, միասնաբար են պահվում նաև մի շարք հաստատություններ /ինչպես, օրինակ՝ մեր ծերանոցը/՝ անկախ իրենց առանձին կրթական, բարեսիրական կառույցներից:

– Կխոսե՞ք կոնկրետ ձեր ներկայացրած կառույցի մասին: Ինչպիսի՞ գործունեություն է այն ծավալում համայնքում:

– Ես առանձնապես չեմ ներկայացնում ղեկավարություն: Ես պարզապես ուսուցիչ եմ և դասախոս: Ես ծառայող եմ, բայց որպես ուսուցիչ՝ շատ հետաքրքրված եմ սիրիահայ դպրոցի պատմությամբ, այդ թեմայով ունեմ հրատարակություններ, ուսումնասիրություններ: Այս կապակցությամբ պետք է ընդգծեմ, որ սիրիահայ հա-

մայնքը, մանավանդ կրթական ոլորտում, մեծ հաջողություններ արձանագրած համայնք է: 1. Հենց սկզբից՝ մասնավորապես 1920-ականներից, Հալեպը և, առհասարակ սիրիական քաղաքները, տարբեր տեղերից եկած հայերի հաստատավայրեր էին, որոնք տարբեր մշակույթների կրող էին, լեզվական առումով ևս ոչ միատարր /որոշ խմբեր թրքախոս էին/ և այս պայմաններում սիրիահայ դրպոցը շատ արագ՝ շուրջ երկու տասնամյակում, գրական լեզուն բոլոր շերտերի համար դարձրեց հասարակական, ընդհանուր լեզու: Այս հանգամանքը սիրիահայ դպրոցի մեծ հաղթանակն էր: 2. Սիրիահայ դպրոցն իր շրջանավարտներով դարձավ ընդհանրապես Սփյուռքի, հատկապես Եվրոպայի և արաբական այլ երկրների հայկական դպրոցներին ուսուցիչներ մատակարարող հիմնական համայնքներից մեկը: Այդ առաքելությունը շարունակվում է մինչ օրս: Ամերիկայում և այլ երկրների հայ համայնքներում մեր ուսուցիչները, ազգային գործիչները, մամուլի աշխատակիցները մեծավ մասամբ սիրիահայեր են, Սիրիայի հայկական կրթական հաստատություններն ավարտած երիտասարդներ: Սա, իրոք, երևույթ է: Սիրիահայ համայնքի երիտասարդները գործունեություն են ծավալում նաև հայրենիքում: Այսօր նրանք ներգրավված են Հայաստանի տեղեկատվության, կրթության և այլ ոլորտներում, հատկապես մարզերում:

– *Ինչպիսի՞ն է համագործակցությունն այլ հայկական կառույցների հետ ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ ավելի լայն աշխարհագրությամբ: Արդյո՞ք կապերը սերտ են այլ հայկական համայնքների հետ:*

– Մեր թեմական իշխանությունները՝ այսինքն՝ Հալեպի թեմի առաջնորդարանը, Հայ կաթողիկե առաջնորդարանը, Դամասկոսի թեմի առաջնորդարանը, Հայ ավետարանական առաջնորդարանը կապ ունեն թեմական ավելի մեծ հաստատությունների, քույր հաստատությունների հետ: Սիրիահայ համայնքը կտրված չէ արտասահմանի այլ համայնքների զարգացումներից: Միջհամայնքային կառույցներ կան եկեղեցական, միութենական, ինչու չէ, նաև կրթական հենքի վրա: Օրինակ՝ որպես ուսուցիչ նշեմ, որ Սփյուռքի բազմաթիվ հայկական վարժարաններ իրենց հայերենի դասագրքերը ստանում են Հալեպի թեմից: Օգտագործում են Հալեպի թեմի հրատարակած դասագրքերը, որպես օրինակ կարող եմ նշել Քուվեյթում և ԱՄՆ–ում գործող մի շարք վարժարաններ: Միջհամայնքային կապերը մշտապես առկա են եկեղեցական, կրթական, կազմակերպչական և այլ ոլորտներում:

– Իսկ հայաստանյան կոնկրետ ո՞ր կառույցների հետ եք աշխատում՝ Սփյուռքի նախարարություն, հիմնադրամներ, կուսակցություններ, մշակութային կենտրոններ:

– Մինչ օրս Հայաստանում բազմաթիվ հաստատություններ կան, որոնք Սփյուռքի քույր կամ մասնավոր հաստատությունների հետ կապ ունեն: Օրինակ՝ Բարեգործականն այստեղ կենտրոն ունի, Համազգայինը՝ նույնպես: Գործում է Սփյուռքի նախարարությունը: Այսինքն՝ կապ գոյություն ունի Հայաստանի և սիրիահայ կառույցների միջև: Հայրենիք–Սիրիայի հայ համայնքային կապերի տեսանկյունից կարևոր դեր են կատարում Դամասկոսում Հայաստանի դեսպանությունն ու Հալեպում Հայաստանի հյուպատոսությունը: Հայաստանի հետ կապը բազմաբնույթ է և բազմատեսակ, որոնք ներառում են և՛ պետական շփումները, և՛ հասարակական կառույցները, և, ամենակարևորն ինձ համար՝ ժողովրդային ամենօրյա շփումները՝ հարազատների և ուսանողների հետ:

– Հայաստանի մասին տեղեկատվություն հիմնականում ի՞նչ աղբյուրներից եք ստանում:

– Առաջին հերթին կցանկանայի նշել հայկական հեռուստաընկերությունների (Հ1, Արմենիա, Երկիր մեդիա) հեռարձակման փաստը Սիրիայում: Ամեն օր համայնքում դիտում են հայկական հաղորդումները, հատկապես լուրերը, ինչն, իհարկե, արդեն մեր տներում հայաստանյան ներկայություն է: Սա շատ կարևոր գործոն է: Հալեպահայերի շրջանում երբեմն արդարացի դժգոհություններ կան տարբեր հաղորդումների բարոյական կողմի, որակի, սփյուռքահայ կյանքի ոչ ճիշտ արտացոլման հետ կապված: Իհարկե, լինում են նաև Սփյուռքին վերաբերող ամբողջական, որակյալ հաղորդումներ, որոնք կարող են նպաստել նաև հայաստանցիների՝ Սփյուռքի հայկական համայնքների մասին ընդհանրական տեղեկատվություն ստանալուն, նրանց խնդիրներին տեղեկացված լինելուն: Կարևոր է, որ հայկական հեռուստաընկերություններն ունենան թղթակիցներ, որոնք հայկական համայնքների վերաբերյալ կպատրաստեն ամբողջական տեսանյութեր, ու դրանք չեն ներառի միայն համայնքային որևէ կոնկրետ կառույցի մասին տեղեկատվությունը: Դա ևս կնպաստի Հայաստան–համայնքներ կապերի ընդլայնմանն ու սերտացմանը:

– Իսկ որքանո՞վ է տեղեկացված համայնքը հայաստանյան զարգացումներից:

– Մամուլը ևս շատ կարևոր դեր ունի այս գործում, նաև լիբանանյան պարբերականները՝ «Ազդակը», «Արարատը», «Ձարթոնքը», որոնք շատ կարևոր տեղ են հատկացնում հայաստանյան քա-

ղաքական, մշակութային և հասարակական լուրերին: Հետևաբար սփյուռքահայ ընթերցողը, ունկնդիրը զրկված չէ հայաստանյան իրադարձություններին հասու լինելուց և գրեթե ամեն օր տեղեկացված է Հայաստանում սպասվող զարգացումներից: Կարծում եմ, որ Սփյուռքը Հայրենիքի վերաբերյալ տեղեկացված լինելու շատ ավելի լայն հնարավորություններ ունի, քան հայաստանցիները՝ հայ համայնքների մասին:

– Ինչպիսի՞ն է համայնքի հետաքրքրությունը հայաստանյան հիմնախնդիրների, օրինակ՝ ղարաբաղյան հակամարտության նկատմամբ:

– Համայնքը շատ հետաքրքրված է: Առհասարակ Սփյուռքն էլ ունի քաղաքական կառույցներ, բարեսիրական, մշակութային կազմակերպություններ, որոնք առանձին նպատակներով հետաքրքրված են ոչ միայն Հայրենիքում տեղի ունեցող անցուդարձով, այլև Արցախի, Ձավախքի և Սփյուռքի հարցերով: Այս կառույցներն ունեն իրենց կապերը: Օրինակ՝ այս տարվա սկզբին ես նկատեցի, որ որոշ դասարաններում շատ լուրջ հանգանակություններ էին կատարվում Ձավախքի համար: Անշուշտ, դա աշակերտների նախաձեռնությունն էր, որը բնականաբար կատարվում էր դպրոցների վերին մարմինների կարգադրությամբ: Նման երևույթները գրեթե միշտ առկա են համայնքում, և քանի որ դպրոցները միջանկյալ օղակներ են ծնողներին այդ գործում ներգրավվելու համար, ապա դրանք ակտիվորեն մասնակցում են տարբեր օգնությունների հավաքմանը: Հետևաբար լինի դա հայաստանյան հուշարձանների վերականգնում, գյուղական համայնքների բարեկարգում, թե քաղաքական իրադարձություն, համայնքը տեղեկացված է:

– Արդյո՞ք համայնքը համախմբող օրը շարունակում է մնալ ապրիլի 24-ը:

– Դա ավանդական դաձած երևույթ է: Ապրիլի 24-ին մեր երեք համայնքները, ինչպես նաև նրանց հետ մեկտեղ մեր քաղաքական կազմակերպությունները՝ երեք ավանդական կուսակցությունները, համայնքային մշակութային անկախ միությունները՝ Բարեգործականը, Կրթասիրացը, համատեղ կազմակերպում են այդ հանդիսությունը՝ աշակերտական–դպրոցական, եկեղեցական կամ հանրային մակարդակում: Դա, իհարկե, համախմբող ու նաև հուզիչ երևույթ է՝ տեսնել բոլոր դպրոցների աշակերտներին միասին, կամ երեք հովվապետերին, որոնք նույն բեմի վրա են: Բայց սա տեղի է ունենում ոչ միայն ապրիլի 24-ին: Բազմաթիվ այլ առիթներ էլ են լինում, երբ համայնքային բոլոր «ճակատները» համատեղ են հանդես գալիս: Այսինքն՝ Հալեպում երբեք, համենայնդեպս վերջին եր-

կու տասնամյակներում, հայ համայնքը սուր տարածայնություններ չի ունեցել:

– Որո՞նք են, Ձեր կարծիքով, համայնքի ամենակարևոր՝ գերակա խնդիրները:

– Այդ խնդիրները բազմաշերտ և բազմատեսակ են: Դրանք կարող են լինել տնտեսական, կրթական, նաև՝ զուտ եկեղեցական, ներհամայնքային մտահոգություններ: Այդ բոլոր խնդիրներն էլ համապատասխան մարմիններում արծարծվում են, և փորձ է արվում միջոցներ գտնել դրանց լուծման համար: Նշեմ, որ համայնքի հիմնական խնդիրն ու մտահոգությունը հայկական դպրոցն է, եթե մոտենանք ազգային իմաստով: Մեր համայնքի բոլոր գերագույն մարմինները, այսինքն՝ երեք համայքները, միշտ էլ անում են առավելագույնը՝ հայկական դպրոցն այժմեական դարձնելու, հայեցի դաստիարակությունը համայնքում առողջ և արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Օրինակ՝ սիրիահայ համայնքում 1960-ական թվականներից սկսած՝ հայոց լեզուն արդեն ոչ հիմնական դասընթաց է համարվում և դասավանդվում է որպես ծիսական լեզու: Պետական ծրագրով ծիսական լեզվին տրամադրված է շաբաթական 4 ժամ: Սա իշխանությունների կողմից արտոնված էր հայկական դպրոցներին՝ հայ ավետարանական, կաթողիկ և ազգային վարժարաններում: Դպրոցների շարքում Սիրիայում գերակշռող են ազգային վարժարանները: 2002–ից հետո իրավիճակը փոխվեց Սիրիայում: Հայկական վարժարաններն իրենց կարգավիճակը բարձրացնելու հնարավորություն ունեցան: Սա մեծ իրադարձություն էր և պահանջում էր թե՛ նյութական, թե՛ կադրային համալրումներ: Այսինքն՝ պարտադիր ուսումը դարձավ ինանմյա: Հետևապես մեր վեցամյա նախակրթարանները՝ ազգային վարժարանները կարողացան վերածվել ինանմյա վարժարանների: Սա նշանակում է, որ յոթերորդ դասարանը ոչ հայկական դպրոցներ հաճախող հայ երեխաներն արդեն մինչև իններորդ դասարան կարող են հայոց լեզու սովորել: Ինչպես մեր հին ճեմարաններն էին գլխավորապես Հալեպում, Դամասկոսում էլ կային միջնակարգ դպրոցներ, որոնց թիվն այսօր ավելացել է: Մեր վարժարաները, երբ դարձան ինանմյա, անմիջապես պետությունից խնդրեցին, որ իրենց տրամադրվեր լրիվ երկրորդական վարժարան դառնալու իրավունք, ինչը նրանց շնորհվեց: Այսօր, փաստորեն, մենք, նախկինի հետ համեմատած, կրկնակի չափով ունենք երկրորդական վարժարաններ մինչև բակալորիայի դասարաններով: Մեր ուսանողության գերակշիռ մասը մինչև 18 տարեկան հաճախում է հայկական դպրոցներ, ստանում է հայեցի դաստիարակություն, ուսանում է հայոց լեզու, գրականու-

թյուն՝ շաբաթական 4 ժամով՝ գումարած կրոնին տրամադրվող շաբաթական 2 ժամը: Իհարկե, ամենակարևորը դասաժամերը չեն, այլ դպրոցի մթնոլորտը, արտադասարանային աշխատանքները, որոնք հայեցի դաստիարակության հիմնական միջոցներից են: Դպրոցականներն այս կերպ ավելի դյուրին կերպով են ներգրավվում համայնքային կյանքում, քան նախկինում էր: Օրինակ՝ շրջաններում վեցերորդ դասարանից գնում էին պետական դպրոց և կտրվում էին հայկական միջավայրից: Այսօր Քեսաբում, օրինակ, մենք ունենք ճեմարան, Կամիշլիում, Դամասկոսում ևս, նախկինում Հալեպում երեք նշանավոր ճեմարաններ ունեինք: Այսօր Հալեպում ճեմարանների թիվն ավելացել է: Բոլորն էլ նույն նպատակին ծառայող հաստատություններ են, որոնց նպատակն է՝ նպաստել հայեցի դաստիարակությանը: Կրթական քաղաքականության մեջ տարածայնություններ գոյություն ունեն: Դասավանդվում է նույն ծրագրով:

– Կա՞ն արդյոք խնդիրներ, որոնց հետ բախվում են հայ անհատները՝ ապրելով օտար միջավայրում: Արաբական միջավայրում ապրելն ազդու՞մ է Սիրիայում ապրող հայ անհատի ձևավորման վրա: Կա՞ն խնդիրներ, որոնք պայմանավորված են այն հանգամանքով, որ հայերը փոքրամասնություն են արաբական միջավայրում:

– Մենք այդպիսի սուր հարցեր երբեք չենք ունեցել: Հայ մարդը Սիրիայում մշտապես հարգված անձնավորություն է՝ վաճառական, մտավորական, թե որևէ մասնագիտության ներկայացուցիչ՝ բժիշկ, ճարտարապետ և այլն: Սիրիայի բոլոր շրջաններում հայերը հարգված են մի շարք ոլորտներում: Պիտի նշեմ, որ մի շարք ոլորտներում հայերը հաջողությունների են հասել: Հետևաբար հակահայկական որևէ դրսևորում չի եղել Սիրիայում վերջին տասնամյակներում: Հայկական եկեղեցական, դպրոցական կյանքը համայնքը կազմակերպում է՝ օգտվելով պետական համապատասխան օրենքներից: Պետական շրջանակներն էլ, իրենց հերթին, մշտապես ըմբռնումով են մոտեցել համայնքային կրթական խնդիրներին: Որևէ լուրջ բախում չի եղել իշխանությունների հետ:

– Այդ առումով, իրոք, Մերձավոր Արևելքի մեր համայնքներն առանձնանում են: Հայերն ավանդաբար եղել են մերձավորարևելյան հասարակության մասը:

– Օրինակ, եթե գիրք պետք է տպագրել, և դա արվում է հայկական շրջանակներում, երբեք Սիրիայում չեն հետաքրքրվում, թե որ համայնքում է արվում: Սիրիայում արտոնվում են հրատարակությունները, դպրոցական օրացույցները, հայրենակցական միու-

թյունների գործունեությունը, բայց ընդհանրապես այդ ամենն իրականացվում է հայ եկեղեցու հովանու ներքո: Ի վերջո Սիրիայում հայկական համայնքը կապված է հայ եկեղեցու հետ: Այն ունի համայնքային կարգավիճակ, այլ ոչ թե ազգային փոքրամասնության: Դա բխում է երկրի սահմանադրությունից: Մենք ոչ թե ազգային հավաքականություն ենք, այլ համայնքային, և մեր երեք համայնքներին էլ տրված են արտոնություններ իրենց ծիսական լեզվով իրենց բարքերը, սովորությունները պահելու, պահպանելու համար՝ պետության համապատասխան օրենքների շրջանակներում:

– Մեր համայնքի ներսում փոխօգնության ի՞նչ մեխանիզմներ են գործում: Ենթադրենք, համայնքում ինչ որ մեկն ունի խնդիրներ, ասենք, ֆինանսական, կամ այլ բնույթի: Կա՞ն նրան օգնելու մեխանիզմներ:

– Եկեղեցիներից անկախ կան հաստատություններ, ինչպես, օրինակ՝ Բարեգործական ընդհանուր միությունը, ՍՕԽ–ը /Սիրիահայ օգնության խաչը/, որոնք առանց խտրականության, առանց գաղափարական որևէ բաժանման՝ պատրաստ են օժանդակություն ցույց տալ բոլոր դիմողներին: Այդպիսի օգնություն տրամադրվում է գրեթե ամեն շաբաթ: Օրինակ՝ մեր դպրոցները կարիք ունեն հսկայական միջոցների, և մեր համայնքի բոլոր ընտանիքներն օժանդակում են այդ գործին, քանի որ իրենց զավակներն էլ ունեն կրթաթոշակների կարիք: Սիրիայի հայկական համայնքում չեք գտնի որևէ մեկին, ով հաճախում է օտար վարժարաններ պարզապես այն պատճառով, որ չի կարող վճարել հայկական վարժարաններում ուսանելու համար: Միշտ էլ հայկական կրթություն ստանալու համար տարբեր կառույցներ և բարերարներ միջոցներ են ներդնում՝ նպաստելով հայ երեխաների հայեցի դաստիարակությանը: Մեր հայրենակցական միությունները, բարեսիրական կազմակերպությունները, Օգնության խաչը, Բարեգործականը, Գյուլպենկյան հիմնադրամը և այլն, բազմաթիվ մեխանիզմներով տարաբնույթ օգնություն են տրամադրում՝ համայնքում կարիքավորներ չունենալու նպատակով: Այս բոլոր կառույցները գործում են շատ ներդաշնակ՝ մեկը մյուսին լրացնելով: Նշեմ, որ նրանցից և ոչ մեկը մյուսի վրա չի գցում գործը: Օրինակ՝ երբեք չեն ասում, որ ինչ–որ մեկի խնդիրն իրենց չի վերաբերում և պետք է դիմել այլ համայնքի կառույցներին: Ասենք, ավետարանական համայնքի երեխան եկել է Ազգային վարժարան և ֆինանսական խնդիր չպետք է ունենա: Համերաշխ, ներհամայնքային լավ կազմակերպված կյանքով ապրող համայնք է սիրիահայ համայնքը: Անշուշտ, կան որոշ հարցեր, խնդիրներ տարբեր մակարդակնե-

ռում, ինչպես ամենուրեք, սակայն համայնքում կան մեխանիզմներ դրանք լավագույն կերպով լուծելու համար:

– Անդրադառնանք նաև այնպիսի կարևոր ոլորտին, ինչպիսին հայապահպանությունն է: Ո՞րն է դրսում հայ մնալու իմաստը:

– Ազգային ինքնությունը ժառանգություն է և դրանից հրաժարվելը երևի անհնար է: Այսինքն՝ «ինչու՞ մնալ հայ» հարցը պատասխան չունի: Մարդը պարզապես հայ է: Սա է հայի մեջ ամուր նստած: Հիմա թերևս մտավորական մարդը կարող է «կրակի շապիկի» մեջ իրեն զգալ և ցանկանա թոթափել այդ «շապիկը»՝ հայկական ինքնությունը: Եվ կարող է որոշել հրաժարվել հայկական ինքնությունից, բայց դա գիտակցական է և կարող է որոշ ժամանակով ինքն իրեն հեռու պահել հայկական շրջանակից՝ ավելի ուշ վերադառնալով դրան: Դա գիտակցական խնդիր է: Չեմ կարծում, որ այդ հարցին կարելի է հստակ պատասխան տալ: Հայությունը պահում է այդ ժառանգությունը, և ինչպես ամեն ժառանգություն, այն իր համար սրբություն է՝ իր խոհանոցը, իր նիստուկացը, իր դպրոցը:

– Իսկ ինչպե՞ս մնալ հայ, ո՞րն է հայ մնալու բանալին: Դուք նշեցիք լեզուն, դպրոցը և այլն:

– Սիրիահայ համայնքի համար ամենակարևոր նախապայմանն իր համատարած հայախոսությունն է՝ հատկապես Հալեպի հայ համայնքի համար: Դուք շատ հազվադեպ կհանդիպեք մարդկանց, որոնք հայ են և օտարախոս: Հին համայնքի ներկայացուցիչներ կան, որոնք արաբախոս էին և մնացել են այդպիսին մինչ օրս: Նրանք դարավոր կեցությամբ հալեպցի են, այդ երկրի զավակներ են, բայց հայ են: Իրենք իրենց ամբողջական հայ են զգում, բայց արաբախոս: Իսկ համայնքի մնացյալ մեծ հատվածն այսօր լրիվ հայախոս է: Արևմտյան, նույնիսկ արաբական մի շարք հայկական համայնքներում տարածված է օտարախոսությունը, ինչը չի կարելի ասել սիրիահայ համայնքի մասին: Լեզուն է հայ մնալու հիմնական նախապայմանը: Սիրիահայ համայնքի ներկայացուցիչները գրեթե ամենօրյա շփման մեջ են միմյանց հետ: Աշխատանքի վայրում շատ անգամ խոսում են հայերեն: Արհեստավորներն ապրում են համատեղ. նույն թաղամասում, նույն շուկայում են աշխատում: Համայնքում ընտանեկան հարաբերությունները շատ հայկական են: Իհարկե, այսօր լրիվ հայկական թաղամասեր չեն մնացել, հայկական թաղամասերում կա օտար տարր, սակայն ամենօրյա ընտանեկան շփումները, հայկական հավաքավայրերը, ակումբը, ճաշարանը, ընդհանրապես ամենօրյա շփումը շատ կարևոր են հայապահպանության համար: Օտար միջավայրում հայկականը

փնտրելու տրամադրություն կա համայնքում: Սիրիահայ համայնքն ինչ–որ չափով, կարելի է ասել, ապրում է փակ կյանքով:

– Ինչպիսի՞ն է կապը եկեղեցու հետ:

– Ամենօրյա հարաբերություններ են: Եկեղեցին այն հիմնական հաստատությունն է, որ հային /տվյալ դեպքում սիրիահային/ ինքնություն է տալիս: Սա շատ կարևոր է, քանի որ հայը համայնքի զավակ է: Պետական մարմիններում էլ նա այդպես է գրանցված: Համայնքի զավակը լինելով՝ նա կապված է իր եկեղեցու և դպրոցի, իր հայկական միջավայրի, իր միության, նույնիսկ ավանդական կերպով իր կուսակցության հետ: Այդ պատճառով էլ սիրիահայ համայնքում հայ ավանդական կուսակցություններն ավարտական բնույթ ունեն. փոքր երեխան ի ծնե դաշնակցական է, ի ծնե հնչակյան է, ի ծնե ռամկավար է, ի ծնե բարեգործական է, ի ծնե բողոքական է, թեպետ երբեք բողոքական դպրոց չի հաճախել, այլ առաքելական: Սա ավանդություն է, որ շարունակվում է: Այս երևույթն ընդունելի է և՛ մտավորականության, և՛ հասարակ շրջանակներում:

– Համայնքում եկեղեցին առաջնահերթ ազգային կառույց է և նոր միայն հոգևոր: Խոսենք երրորդ հիմնասյունի՝ հայկական ընտանիքի մասին: Ինչպիսի՞ն է սիրիահայ համայնքում ընտանիքը: Արդյո՞ք շատ են խառնամուսնությունները:

– Նշեմ, որ խառնամուսնությունները միշտ էլ եղել են հնուց ի վեր: Օրինակ՝ վերջերս, երբ խոսվում է լիբանանահայ համայնքի մասին, նշվում է խառնամուսնությունների թվաքանակի հսկայական աճի մասին: Ես եկեղեցու պաշտոնյա չեմ, որ վիճակագրական տվյալներ ունենամ սիրիահայ համայնքում խառնամուսնությունների վերաբերյալ, բայց ամեն տարի հսկայական թվով աշակերտներ ունեմ, և բնական է, որ հենց առաջին օրվանից զգում եմ, թե ովքեր են խառնամուսնական ընտանիքների զավակներ: Որոշակի քանակությամբ երեխաներ կան, իհարկե, որոնց ծնողներից մեկն օտար է: Թերևս խառնամուսնությունների թվաքանակն այսօր ավելացել է՝ համեմատած 1970-ականների, երբ ես նոր էի մտել կրթական համակարգ: Սակայն այդ խառնամուսնությունների մեջ, քանի որ ես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ եմ, ինձ համար շատ կարևոր է, թե դիմացինս ինչպես է ընկալում լեզուն: Ես նկատել եմ, որ հայ մայրերի զավակները շատ ավելի լավ են հայերեն խոսում, ավելի մոտ են հայեցիությանը, հայկականին, որևէ հայ արժեքին, քան սովորական հայ ընտանիքի զավակները: Խառնամուսնությունների պարագայում մտահոգություն կա, որ հակասական հոգեվիճակ են ունենում ոչ թե խառնամուսնական զույգը, այլ

սերունդները: Ի վերջո, այդ ընտանիքներում ծնված զավակը մի օր հարցնելու է, թե ինքն ո՞վ է՝ արաբ, հույն ուղղափառ, թե՞ հայ առաքելական: Ինքը փաստաթղթով հույն ուղղափառ է, կամ լատին է, կամ ասորի, բայց իր կյանքով, իր ամենօրյա շփումով հայ է: Կյանքում նա մի օր լուրջ հակադրություն պիտի ապրի, ինչն անփուսափելի է, և դրանից կարող են ճակատագրեր փոխվել: Վերջին հաշվով համայնքում չեն քաջալերվում խառնամուսնությունները:

Ես հայկական հեռուստատեսությամբ մի քանի անգամ տեսել եմ հաղորդումներ, որոնցում քաջալերվում են խառնամուսնությունները: Դրանք մեզ համար շատ խորթ են: Երևի պետականություն ունեցող, հայրենի հողի վրա ապրող ժողովուրդը չի կարող ընկալել այդպիսի մտահոգությունը: Սակայն ես կարծում եմ, որ ամեն դեպքում սերունդները ծանր են վճարում խառնամուսնությունների դեպքում՝ հետագայում ինքնության հետ կապված խնդիրների առջև կանգնելով: Հոգեբանական, սոցիալական հարթության վրա այն անպայման, մի օր անդրադառնալու է: Մենք համամարդկային մոտեցումներ ունենալով հանդերձ՝ չենք քաջալերում խառնամուսնությունները, մանավանդ՝ Սփյուռքի պայմաններում, ինչու չէ նաև Հայրենիքում: Օրինակ, ողբերգական է, երբ Հայաստանում հայ աղջիկն ամուսնանում է մուսուլմանի հետ: Մեկնում է Հայաստանից և հայտնվում է այդ օտար, իսլամական միջավայրում, որտեղ շատ օտար իրողություններ կան, ու հենց այդտեղից էլ սկսվում է ողբերգությունն իր համար: Սա զուտ հոգեբանական, սոցիալական հարց է, բայց նաև ազգային մտահոգություն է:

– Հայաստանում հայ մնալը հեշտ է: Դու ջանք չես գործադրում, իսկ դրսում պիտի ջանք գործադրես հայ մնալու համար: Այդ առումով արդյո՞ք Հայաստանն օգնում է: Ի՞նչ սպասելիքներ ունեք Հայաստանից, ի՞նչ գործոններ կարող են օգտակար լինել Սփյուռքի համայնքների հայապահպանմանը:

– Հայաստանը մեզ համար նախ պետականություն է: Մենք այստեղ ունենք հարստություն, որն անգնահատելի է և դա հայրենի ժողովուրդն է, որն այս հողին շունչ տվողն է: Մենք Սփյուռքում սնվում ենք հենց այդ շնչով: Հետևաբար հայրենի ժողովրդի ամենօրյա կյանքը Սփյուռքում մեզ համար ավիշ է: Ամեն անգամ, երբ մենք դրական բան ենք լսում Հայրենիքում կատարված՝ Երևանում կամ Երևանից դուրս, հեռավոր սահմաններում, շրջաններում, Արցախում, թե Ձավախքում, այդ դրականը ոգևորություն է առաջացնում համայնքում, և մեր գոյատևման պայքարում էլ մենք մեզ ավելի վստահ ենք զգում և լցվում ենք հույսով: Բայց կա նաև հակա-

ռակ կողմը. մենք այսօր ունենք պետականություն և մեզ համար Սփյուռքում հայության պետությունն է՝ մանավանդ, որ ստեղծված է Սփյուռքի նախարարություն, ինչը նշանակում է Սփյուռքի հետ արդեն պետական մակարդակով շփում, այլ ոչ թե զգացական, ժողովրդային: Հետևաբար Սփյուռքի նախարարությունն ինքը՝ որպես պետական կառույց, Սփյուռքի բոլոր կառույցների հետ, բնականորեն, իր կապերն է հաստատել /համենայնդեպս ես ակնկալում եմ և դա կուզեի տեսնել/ և նախարարության ու Սփյուռքի կառույցների հետ ներդաշնակ համագործակցությամբ կարելի է իրականացնել փոխադարձ օգտակար աշխատանք: Այսինքն՝ այդ համերաշխ գործակցությամբ՝ Սփյուռքի նախարարություն և սփյուռքահայ համայնքներ՝ եկեղեցիներ, կառույցներ, կազմակերպություններ, համայնքների ներկայացուցչական մարմիններ, շատ ավելի դրական և արդյունավետ կապ կարելի է ստեղծել: Այդ ժամանակ արդեն մենք կարող ենք տեսնել, թե Հայրենիքն ինչո՞վ կարող է օգտակար լինել: Օրինակ՝ համայնքի դպրոցների համար դասագրքեր պատրաստելու գործը կարող է ավելի արդյունավետ իրականացվել Սփյուռքի մարմինների և վերոնշյալ նախարարության համատեղ գործակցությամբ:

– Հետաքրքիր է ձեր կարծիքը ՀՀ արտաքին քաղաքականության վերաբերյալ: Եվ որպես ենթահարց. Սիրիահայ համայնքի տեսանկյունից ովքե՞ր են Հայաստանի դաշնակիցներն ու թշնամիներն այսօր:

– Կարող եմ ասել, որ հետևում եմ մամուլին, սոցիալական ցանցերին, Սփյուռքի տարբեր մարմինների, Հայաստանի ընդդիմադիր պարբերականների հրապարակումներին: Տեղեկացված եմ տարբեր տեսակետներին, սակայն քաղաքական գնահատականներ չեմ կարող տալ: Ես հեռու եմ այդ ոլորտից: Մենք պետականություն ունենք, և ես հավատում եմ ժողովրդավարությանը և ցանկանում եմ, որ մեր ժողովուրդը, ով ինքն է կերտել իր պետականությունը, հավատք ունենա նաև իր պետության նկատմամբ: Մենք միշտ անհավատք ենք ու միշտ քննադատաբար ենք տրամադրված, ինչը ևս դրական երևույթ չէ: Ուզում եմ, որ և՛ մեր պետությունը վստահություն ստեղծի իր գործունեության նկատմամբ, և՛ ժողովուրդն էլ հավատա, որ իր արտաքին քաղաքականությունը, իր պետությունը ճիշտ ուղիով են ընթանում: Անշու՛շտ կարող են սխալներ լինել...

– Ձեր կարծիքով ովքե՞ր են իրավասու քննարկել հայության շրջանում առկա խնդիրները. Հայաստանի իշխանությունները դա կարող են անել առանձի՞ն, թե՞ Սփյուռքի հետ համատեղ: Կար-

Եվ՞ր է արդյոք միասնականությունը հանգուցային խնդիրների լուծման հարցում:

– Կարծում եմ, որ համատեղ պետք է որոշումները կայացվեն համահայկական ջանքերով: Եթե Հայրենիքը սփյուռքահայ մեծ զանգվածները հաշվի չառնի մի շարք կարևորագույն խնդիրների լուծման հարցում, կարող է, իհարկե, որոշակի հաջողությունների հասնել, բայց անպայման այդ լուծումները կլինեն մասնակի և ոչ ամբողջական: Մեր մտահոգությունները բազմաթիվ են ու բազմազան և՛ Հայրենիքում, և՛ Սփյուռքում՝ լեզվի, կրթության և այլ ոլորտներում: Լավ է, որ սփյուռքահայություն–Հայրենիք կապեր կան, գիտական համաժողովներ են անցկացվում, պատկան մարմիններ են հրավիրվում Հայրենիք, ամենօրյա կապ գոյություն ունի մի շարք ոլորտներում: Ես կուզեի, որ ջանքերը համատեղ լինեն, իհարկե, պետությունը պետք է լինի հիմնական խոսնակը: Երբ որ Սփյուռքի պատկան մարմինները, որոնք կառավարում են Սփյուռքը, դուրս մնան այդ գործունեության դաշտից, որոշումները կարող են ամբողջական չլինել:

– *Ի՞նչ մեխանիզմներով եք պատկերացնում համատեղ որոշումների ընդունման գործընթացը:*

– Կխոսեմ արդեն տեղի ունեցած իրողությունների մասին: Հայաստանում լինում են կրթական գիտաժողովներ՝ նվիրված դպրոցներին, Սփյուռքում հայեցի դաստիարակությանը և այդ ուղղությամբ այն քայլերին, որոք պետք է անի Հայաստանը, մասնավորապես՝ դասագրքեր, մասնագետներ և այլն: Ես խորհուրդ եմ տվել, որ պետք է նկատի ունենալ սփյուռքահայ մտավորականին: Նա և՛ ասելիք ունի և՛ կարող է ինքն էլ օգտակար լինել համապատասխան մարմիններին, բայց այդ գործում միայն մտավորականների ներգրավումը, որոնց շարքում նաև ես եմ, ամբողջական արդյունք չի կարող տալ, քանի որ Սփյուռքն ավանդական կառույց է, որում իշխանություն են մեր համայնքները, ի վերջո կաթողիկոսությունը, թեմական իշխանությունները և այլն: Հայրենի պետությունը շատ լավ տեղեկացված է այդ մասին: Հետևաբար իր աշխատանքը պետք է տանի այդ խողովակով և դրանց հետ խորհրդակցելով: Սա չի նշանակում, որ նրանք փակ ամբիոն են: Վերջիններս էլ իրենց հերթին պիտի հաշվի նստեն սփյուռքահայ մտավորականի, քաղաքական և հոգևոր գործիչների կարծիքների հետ: Տեղի են ունենում գիտաժողովներ, խորհրդակցություններ, դաշտային ուսումնասիրություններ, դրանց արդյունքները հասնում են համապատասխան մարմինների: Հետևաբար Սփյուռքի այդ վերին հաստատությունները ներկայացնում են այն, ինչ իրական է, և շրջանցել

դրանք, այդ հաստատություններից անկախ գործունեություն ծավալել թերևս կարող է Հայաստանն իր հյուպատոսությունների միջոցով, բայց շատ կասկածում եմ, որ դա արդյունավետ լինի: Այսինքն՝ սփյուռքահայ մարմինների, գերագույն հաստատությունների հետ գործակցությունն անհրաժեշտ է: Իսկ մեխանիզմների մասին պետք է իրենք մտածեն: Այդ օղակներն իրենք ավելի լավ գիտեն՝ նկատի ունեմ և՛ Սփյուռքի հաստատությունները և՛ հայաստանյան մարմինները:

– Մի հարց, որ շատերը միանշանակ չեն ընդունում: Ո՞րն է ձեր հայրենիքը:

– Այս հարցը երկու պատասխան չի կարող ունենալ՝ հայրենիքը մեկն է, ժողովուրդը մեկն է: Ես անձամբ չեմ կարող ինձ ավելի լավ զգալ որևէ այլ տեղ, քան իմ դասարանում, իմ աշակերտների մոտ, իմ ընտանիքի հետ: Ես առանձին չեմ, այլ իմ տղաների հետ, հայկական մշակույթի, հայ գրականության հետ: Ինձ համար հայրենիքը մեկն է՝ այսօր Հայաստանի Հանրապետություն, նախկինում Խորհրդային Հայաստան, իսկ վաղը կարող է այլ անունով անվանվել, չեմ կարող ասել: Եվ դա է հայրենիքը: Մենք, սակայն, բազմաթիվ խնդիրներ՝ այդ թվում նաև ներքին, ունեցող ժողովուրդ ենք և դեռևս կան մարդիկ /և՛ Սփյուռքում, և՛ Հայրենիքում/, որոնք որոշ գաղափարներ համարում են առաջնահերթ: Նրանք նշում են, որ հայ ենք, բայց երկու տարբեր ազգ ենք, տարբեր ժողովուրդներ ենք, տարբեր պատմություն ունենք, մշակույթով սկսել ենք տարբերվել, մեր կենցաղով ամբողջությամբ տարբեր ենք: Ես ցավով եմ լսում այդ ամենը, քանի որ նախ իրականություն է, որ շատ բաներով տարբեր ենք: Այդ պատճառով էլ հավատում եմ, որ մեր պետությունը կարող է քայլեր ձեռնարկել այդ տարբերությունները նվազագույնի հասցնելու համար: Եվ Սփյուռքի մեջ էլ, կարծում եմ, գիտակից զանգվածն այնքան մեծ է, որ պատրաստ է հայրենիքի հետ ամենօրյա աշխատանք տանել վերոնշյալ տարբերությունները նվազեցնելու ուղղությամբ: Այս տարբերությունը կա, բայց այն պետք է հաղթահարել. պետք է գտնել հաղթահարելու ձևերը: Ժամանակը շատ հարցեր է լուծում: Կարող են լինել հակադրություններ, նույնիսկ միևնույն տարածքի վրա են հակադրություններ լինում, քաղաքն ու գյուղն իրար չեն հասկանում: էլ ուր մնաց դարերով բաժանված հայ զանգվածը տարբերություններ չունենա, հատկապես երբ այսօր սփյուռքահայն էլ տարադեմք ու տարաբնույթ է: Նույնիսկ տարբերություններ կան Սփյուռքի տարբեր համայնքների միջև: Օրինակ, Լոս Անջելոսում կարող ես լսել, որ ոմանք բեյրութցի են, ոմանք՝ հալեպցի, ոմանք՝ հայաստանցի....

Ի՞նչ է նշանակում համազգային նպատակ: Ազգային ինքնությունը, երբ նպատակ չունի, սառչում է և մահանում: Մեր ազգային ինքնության գլխավոր նպատակներից են համախմբումը, տարբերությունների՝ լեզվական, ուղղագրական, սովորույթային վերացումը: Մենք այդ ուղղությամբ շատ անելիքներ ունենք: Այդ պատճառով էլ ես հավատում եմ, որ հայրենիքն ու ժողովուրդը մեկն են: Եվ այս խնդիրները պահանջում են ոչ միայն քաղաքական լուծում, այլև դրանք նաև կենսակերպ են: Ես մի խոստովանություն էլ անեմ. մինչև 1989թ. դասարանում ունենում էի տանջող մի մտահոգություն. «Ինչու՞ չարչարել այս փոքրիկներին, ինչու՞ ծանրաբեռնել հայկական նյութով, եթե այն ոչ պետական քննության մաս է կազմում, ոչ էլ կարող է օգնել դասարանի փոփոխման հարցում»: Եվ զգում էի, որ փոքրիկներն ու նրանց ծնողներն էլ ունեին այդ մտահոգությունը: Մտածում էի. «Արդյո՞ք պետք էր այդ «կրակե շապիկը» հագցնել այդ փոքրիկներին: Մինչև ե՞րբ, ո՞վ եմ ես և ո՞վ են իրենք»: Ես Խորհրդային Հայաստանի քաղաքացի չէի կարող լինել, իմ տանը ես չէի կարող այն զգալ, որովհետև իրականում այն ռուսադեմ էր: Ի վերջո, երբ սկսվեց արցախյան շարժումը, կազմավորվեց անկախ Հայաստանի Հանրապետությունը, ես ամեն օր կամաց–կամաց զգացի, որ դասարանում իմ դիմաց նստողները փոխվում են: Նույնիսկ երեխաների մայրեր են գալիս՝ իմ նախկին աշակերտներից, և ես ասում եմ, որ դուք տարբեր էիք, իսկ ձեր զավակներն միանգամայն այլ մտածողություն ունեն: Այն մտահոգությունը, որ ես ունեի այդ մայրերի ուսանելու տարիներին, իրենց երեխաների դասարանում գոյություն չունի, քանի որ մերօրյա սիրիահայ երեխաները զգում են, որ իրենք պետականություն ունեցող ժողովրդի զավակներ են: Այս երեխաների համար մայրենի լեզուն արդեն ծիսական, սովորական հաղորդակցության լեզու չէ, այլ պետական լեզու: Այս պարագայում ստեղծվում է այլ հարթություն, որտեղ փոքրիկն արդեն չի մտածում: Դա մեր խնդիրն է՝ արևմտահայերենը կամ արևելահայերենը, դասական ուղղագրությունը կամ մեսրոպյան ուղղագրությունը... Ժամանակն այդ բոլոր խնդիրները կլուծի:

Երբ 1920-ական թվականներին Հալեպ եկանք, ո՞վ էր մեզանից գրական արևմտահայերեն խոսում: Ոմանք խոսում էին Սասունի բարբառով, մյուսները՝ թուրքերեն, մյուսները՝ քրդերեն. նույնիսկ միմյանց չէին հասկանում: Մենք այսօր Երևանում լսում ենք այնպիսի հայերեն, որ պարզապես սարսափելի է՝ բազմաթիվ ռուսերեն բառերով: Սակայն այս բոլոր խնդիրներն ի վերջո մանրուքներ են, և առօրյա կյանքում գիտակցված պայքարով կարելի է լուծել այս

բոլոր խնդիրները: Մեր հիմնական նպատակը մեկ հայրենիքն է և մեկ ժողովուրդը:

– Վերջին հարցը տամ: Միգուցե մի քիչ պրովոկացիոն: Անձամբ Ձեր կամ Ձեր երեխաների հայրենիք՝ Հայաստան, վերադարձի հնարավորությունները որքա՞ն եք գնահատում: Ինչպիսի՞ պայմաններ պետք է լինեն, որ որոշեք վերադառնալ:

– Գիտեք, Սփյուռքի մեր բոլոր ընտանիքներն արմատավորված ընտանիքներ են: Սա միայն հայկական իրողություն չէ, այն ամեն տեղ էլ կա: Այսօր թուրքերն էլ համայնքներ ունեն Գերմանիայում, արաբներն ունեն ԱՄՆ–ում և եվրոպական մի շարք երկրներում: Որևէ ընտանիքի իր բնակության վայրից հանելուց և տեղափոխելուց շատ խնդիրներ են առաջանում: Դա հայրենասիրության կամ ազգասիրության հետ կապ չունի: Այն զուտ կեցության խնդիր է: Մարդն ապրում և արմատավորված է իր բնակության վայրում, և նրան այդտեղից պոկելը հսկայական ռիսկի հետ է կապված: Նման օրինակներ շատ կան. Իրաքի հայ համայնքի օրինակը, խորհրդային իշխանության տարիներին Կիպրոսում տեղի ունեցածը, Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում հայերի հոսքը, կամ եգիպտահայ համայնքում, երբ ստիպված էին հաստատվել Արևմուտքում: Այսօր սփյուռքահայը երկընտրանքի առջև չէ: Երբ որ խնդիր կա, Սփյուռքում մտածում են Հայրենիք վերադառնալու մասին: Անշուշտ, հոսք կա դեպի ԱՄՆ, բայց առհասարակ մարդիկ մտածում են, թե արդյո՞ք կկարողանան արմատավորվել, գոյատևել Հայրենիքում, թե՝ ոչ, թեկուզ հենց նյութական առումով: Եթե այդ հարցի պատասխանը հեշտությամբ ունենում են, ապա ճանապարհը բերում է դեպի Հայաստան: Շատերը գտնում են, որ եթե նույնիսկ Արևմուտքում ես հաստատվում, ապա վաղ թե ուշ ճանապարհը բերելու է դեպի Հայաստան: Գիտակից հայը մտածում է այս տեսանկյունից:

Շատ գովելի է, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է երկրորդ քաղաքացիություն շնորհելու ուղեգիծը: Հարյուր հազարավոր մարդիկ դիմում են՝ ստանալու այդ օրինակ փաստաթուղթ: Օրինակ, Հալեպում ես անձամբ եմ տեսել այդ նպատակով հյուպատոսությունում գոյացող հերթերը: Սա հանգրվանային է: Չեն կարող մարդուն միանգամից իր տնից պոկել և այլ տեղում պահել: Եվ սա հայրենասիրական կամ այդ կարգի հարց էլ չէ: Ահազանգային որևէ վիճակ չէ, ինչպես արցախյան ազատամարտի տարիներին, երբ Սփյուռքից գալիս էին կռվելու Արցախի համար: Սա ընտանիքով տեղափոխվելու հարց է, որը կապված է նյութական, բարոյական, հոգևոր և այլ հարթությունների հետ: Ինչպես դա ե-

ղավ 1946թ. և այլ տարիներին շատ ռիսկային է և ապագայում ստեղծում է սոցիալական շատ բարդություններ, որին մենք ականատես եղանք: Վերջին շրջանում ես նկատում եմ, որ հանգրվանային տարբերակով Սփյուռքից հաստատվում են Հայրենիքում: Բարեկամ ունեմ, որ 1990-ական թվականներին նյութապես շատ լավ վիճակում էր և Կանադայից իր ընտանիքով հաստատվեց Հայաստանում: Եվ նշում է, որ ինքը դեռ որոշ անհարմարություններ զգում է, բայց իր զավակներն արդեն Կանադա չեն վերադառնա, քանի որ մեծացել են Հայաստանում: Նրա զավակներն այսօր արդեն լրիվ երևանցի են: Նույնիսկ երեխաներն այցելել են Կանադա և ասել, որ ձանձրանում են ու ցանկանում են վերադառնալ Երևան: Այսօր սփյուռքահայ մեր ժողովուրդն էլ միատարր չէ, տարբեր սոցիալական շերտերի խնդիր կա, գաղափարական դաստիարակության խնդիր կա, պատկանելության տարբեր շերտեր կան: Տարբեր մտածելակերպ ունենալով հանդերձ՝ նրանց միավորում է Հայրենիքը: Անշուշտ, Հայրենիքում մարդիկ ակնկալում են, որ մարդկային իրավունքների, կեցության հետ կապված շատ բաներ փոփոխության ենթարկվեն: Այստեղ իրենք ավելի քիչ հիասթափություն ապրեն: Կային, իհարկե, մարդիկ, որ ռիսկի դիմեցին, վաճառեցին իրենց ունեցվածքը և տեղափոխվեցին Հայաստան և «մնացին չոր քարի վրա»: Բայց երբ դա հանգրվանային հաստատում է, և կամաց–կամաց են արմատներ նետում Հայրենիքում, ավելի դյուրին է հարմարվելը և ժամանակի ընթացքում մենք տեսնում ենք, որ սփյուռքահայերի բավական հոծ զանգված է բնակություն հաստատել Հայաստանում, և իրենց զգում են այս երկրի տերը. տիրոջ զգացում ունեն: Դա է կարևորը: Կան դեպքեր, երբ հաստատվում են, և հիասթափությունները շատ են լինում:

Հայրենիքում էլ մենք շատ բան ունենք փոխելու ոչ միայն պետական, այլև հասարակական ոլորտում: Մեր տարբեր բնագավառների մասնագետները պետք է մտածեն, թե ինչպես ճիշտ կազմակերպել հայրենադարձությունը, հայրենաբնակությունը՝ նաև հաշվի առնելով նախորդ տարիների փորձը: Կարևոր է հասկանալ նաև հոգեբանական խնդիրները, ինչպիսի պայմաններ պետք է ստեղծվեն հայրենադարձվող մարդկանց համար, մանավանդ որ նրանք էլ տարբերվում են միմյանցից՝ իրաքահայերն այլ են, ադրբեջանաբնակ հայերն այլ են, Ռուսաստանից եկողներն ուրիշ են, ԱՄՆ–ից հաստատվողներն այլ են, արաբական երկրներից եկողներն ուրիշ մտածելակերպ ունեն և այլն: Չկան այս հարցերով զբաղվող հաստատություններ: Պետք է ուղիներ փնտրել, և դա պետք է անեն Հայրենիքն ու Սփյուռքը համատեղ: Հասարակական

կազմակերպություններն էլ շատ բան ունեն անելու այդ ուղղությամբ: Պետք է Հայաստանում հաստատվել ցանկացող ընտանիքների հետ առանձին–առանձին աշխատեն: Հայերնադարձությունը պետք է ճիշտ ուղղորդվի, այլապես այն կարող է անդառնալի հետևանքներ ունենալ: Նման դեպքերը, ցավոք, բավական շատ են: Պետք է հատուկ ծրագրեր մշակվեն, հայրենադարձվածների հաջողված օրինակները ցույց տան, կենտրոններ պետք է հիմնվեն: Այս հարցում պետք է Իսրայելի օրինակն ուսումնասիրել: Նրանք երկիր են զավթում վերաբնակեցնելու նպատակով, իսկ մենք չենք կանխում արտագաղթը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱԼԵՊԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՀԵՏ

– Կներկայանայի՞ք: Ծնունդով որտեղի՞ց են ձեր նախնիները:

– Միհրան Անդրանիկի Մինասյան: Հայրական կողմից պապս բուրսացի էր, իսկ մայրական պապս՝ կյուրինցի: Կյուրինցիներ էին նաև երկու տատերս:

– Ձեր ընկալմամբ, հալեպահայ համայնքի ընդհանուր նկարագիրն ինչպիսի՞ն է: Ինչպե՞ս կնկարագրեիք Հալեպի հայ համայնքը:

– Հալեպը փոքր Հայաստան է՝ իր հայաբնակ և հայահոծ թաղերով, հայկական տասնյակ վարժարաններով, մարզական կենտրոններով, բարեսիրական–մարդասիրական հաստատություններով, և այս բոլորը՝ ընդամենը մի քանի կիլոմետրի վրա ընկած թաղերում: Այստեղ խանութների ցուցափեղկերը, տեղական՝ արաբերենի հետ մեկտեղ, հաճախ ունեն նաև հայատառ պաստառներ ու անուններ, իսկ հալեպահայությունն իր համեմատաբար ավանդապահ ու հայրենաբաղձ զգացումներով դեռ պահպանում է իր հայեցիությունն ու ազգային պատկանելությունը:

– Ինչպիսի՞ն է հայ համայնքի ներգրավվածությունը երկրի հասարակական, քաղաքական, մշակութային, տնտեսական կյանքում: Օրինակ, իշխանական մարմիններում կա՞ն հայեր:

– Հայերը զգալի մասնակցություն ունեն երկրի տնտեսական, մշակութային և հասարակական կյանքում: Ապրում են որպես հավասարազոր իրավունքներ ունեցող քաղաքացիներ, սակայն պետական մարմիններում և կառույցներում նրանց մասնակցությունը սահմանափակ է, մանավանդ իշխանական քաղաքական վերնա-

խավում: Նշեմ, սակայն, որ սիրիական Խորհրդարանում հայերն ունեն մեկ ներկայացուցիչ:

– Իսկ ներհամայնքային խնդիրների շուրջ համախմբված, համաձայնեցված որոշում կայացնելու մեխանիզմներ կա՞ն արդյոք: Գոյություն ունի՞ միասնական որոշում կայացնելու ձևաչափ:

– Այո՛, կան համապատասխան ազգային պաշտոնական մարմիններ, որոնք իրավասու են որոշումներ կայացնել: Սերտ են մանավանդ միջհամայնքային՝ հայ երեք հոգևոր առաջնորդների հարաբերությունները: Մասամբ նման հարաբերություններ գոյություն ունեն նաև քաղաքական տարբեր համոզմունքներ ունեցող կազմակերպությունների միջև:

– Կան արդյո՞ք խնդիրներ, որոնց հետ բախվում են հայ անհատները՝ ապրելով օտար միջավայրում: Արաբական միջավայրում ապրելն ազդու՞մ է Սիրիայում ապրող հայ անհատի ձևավորման վրա: Կա՞ն խնդիրներ, որոնք պայմանավորված են այն հանգամանքով, որ հայերը փոքրամասնություն են արաբական միջավայրում:

– Ներազգային շրջանակներում հայությունը որևէ լուրջ խնդրի հետ չի բախվում արաբական մեծամասնություն ունեցող այս մեծ քաղաքում: Ունենք մեր եկեղեցիները, դպրոցներն ու ազգային մարմինները, որոնք բնականոն կերպով գործում են՝ մշտապես վայելելով տեղացի արաբ ժողովրդի սերն ու համակրանքը: Հայ անհատը, եթե ցանկանա, առանց պետական կամ որևէ այլ արգելքների ու դժվարությունների, ունի բոլոր հնարավորությունները պահպանելու իր ինքնությունը:

– Անդրադառնանք նաև այնպիսի կարևոր ոլորտին, ինչպիսին հայապահպանությունն է: Ո՞րն է դրսում հայ մնալու իմաստը:

– Արտասահմանում հայ մնալը դժվար գործ է, մանավանդ երկարաժամկետ: Կարծում եմ՝ սփյուռքահայ բազմաթիվ գաղթօջախների շարքում սիրիահայ համայնքն ամենալավ պահպանվածներից մեկն է:

– Իսկ ինչպե՞ս մնալ հայ, ո՞րն է հայ մնալու բանալին՝ լեզու՞ն, դպրո՞ցը և այլն:

– Հայ մնալու բանալին և՛ լեզուն է, և՛ դպրոցը, և՛ եկեղեցին: Այս բոլորն այնքան սերտորեն են կապված միմյանց հետ, որ դժվար է դրանք առանձնացնել:

– Ինչպիսի՞ն է կապը եկեղեցու հետ:

– Հայ եկեղեցուն կառչելը սիրիահայության, և, ընդհանրապես, հայության համար, ինքնաբուխ զգացում է: Այսօր մարդիկ քիչ են եկեղեցի հաճախում, բայց իրենք իրենց զգում են հայ առաքելական եկեղեցու լիիրավ անդամներ:

– Ինչպիսի՞ն է սիրիահայ համայնքում ընտանիքը: Արդյո՞ք շատ են խառնամուսնությունները:

– Սիրիայում հայ ընտանիքը մեծ դեր ունի համայնքի պահպանության և զավակների հայեցի դաստիարակության գործում: Դժբախտաբար վերջին տարիներին բավական մեծացել է խառնամուսնությունների թվաքանակը համայնքում: Դրանց մեծ մասն ամուսնություններ են արաբախոս քրիստոնյաների հետ:

– Ինչպիսի՞ն է համայնքի հետաքրքրությունը հայաստանյան հիմնախնդիրների, օրինակ՝ ղարաբաղյան հակամարտության նկատմամբ:

– Հայաստանյան զարգացումների նկատմամբ մեծ հետաքրքրություն կա համայքնի մեծ մասի շրջանում: Դրան նպաստում է նաև մամուլն ու հետուստատեսությունը, բայց կա նաև անտարբեր զանգված, որը շահագրգռված չէ ազգային հարցերով, ընդ որում նաև հայրենի մտահոգություններով:

– Ինչպիսի՞ն է համագործակցությունն այլ հայկական կառույցների հետ՝ ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ՝ ավելի լայն աշխարհագրությամբ: Արդյո՞ք կապերը սերտ են այլ հայկական համայնքների հետ:

– Այո՛, անհրաժեշտության դեպքում կան հարաբերություններ սփյուռքահայ այլ համայնքների և, մասնավորապես, լիբանանահայության հետ: Դրան նպաստում են նաև հաղորդակցության միջոցները:

– Այսօր ինչպիսի՞ն է համայնքի երիտասարդության հակվածությունը դեպի կրթությունը, նկատվում է արդյո՞ք գիտական առաջընթաց ունենալու ձգտում սիրիահայ երիտասարդների շրջանում: Եթե մենք դիտարկենք, օրինակ, Հալեպի հայ համայնքի վերնախավը, այն ավելի շատ տնտեսական ու գործարար է: Երիտասարդները ձգտում են ավելի շատ տնտեսական, գործարար ոլորտում ներգրավվել, թե՞ նաև կրթական ոլորտում են ակտիվ:

– Հալեպահայ համայնքը դարեր շարունակ հայտնի է եղել իր հմուտ արհեստավորներով, որոնք մեծ ներդրում են ունեցել երկրի տնտեսական վերելքի գործում: Այսօր, սակայն, մտայնությունները փոխված են: Երիտասարդությունը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում ուսման նկատմամբ և ձգտում է ստանալ բարձրագույն կրթություն: Սակայն ապրուստի մտահոգություններն ու երկրի տնտեսական պայմանները ստիպում են շատերին թողնել բարձրագույն կրթությունն ու աշխատանքի անցնել կա՛մ առևտրի ոլորտում, կա՛մ շարունակել ընտանեկան գործն ու արհեստները:

Իսկ հալեպահայ վերնախավն, ընդհանրապես, ձգտում է իր կազմը համալրել բարձրագույն ուսում ստացած անձանցով, որոնց կողքին կան նաև գործարար ու զարգացած անձնավորություններ:

- Ի՞նչ մարտահրավերների առջև է կանգնած այսօր սիրիահայ համայնքը: Ի՞նչ հիմնական հիմնախնդիրներ կառանձնացնեք:

– Որպես գլխավոր հիմնախնդիր՝ առկա է արտագաղթի գործոնը: Վերջին տարիներին հայ բնակչության նոսրացումն ավելի զգալի ու մտահոգիչ է դարձել: Այս հանգամանքը, մանավանդ, ազդել է դպրոցների աշակերտության թվաքանակի վրա ևս: Առկա են նաև նյութական և այլ կարգի նորօրյա դժվարություններ, որոնք սպառնում են մեր հայկական դիմագծի, սովորույթների և լեզվի պահպանմանը:

- Արդյո՞ք Բաշար Ալ–Ասադի վարչակարգի հնարավոր փոփոխությունը կարող է բացասական հետևանքներ ունենալ սիրիահայ համայնքի համար:

– Այո..... եթե տեղի ունենա:

-Ինչպե՞ս եք տեսնում Մերձավոր Արևելքում հայ համայնքների /այդ թվում Սիրիայի/ հեռանկարը 21–րդ դարին բնորոշ իրողությունների համատեքստում:

– Ոչ շատ դրական: Սփյուռք ունեցող շատ ժողովուրդների նման, ցավոք, վաղ թե ուշ դրանք կարող են դատապարտված լինել ձուլման:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱԼԵՊԱՀԱՅ ԱԶԱՏ ԼՐԱԳՐՈՂ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆ ՀԱՐՈՒԹ ԷՔՄԱՆՅԱՆԻ ՀԵՏ

- Ինչպե՞ս են հայերն ընկալում սիրիացիներին և, ընդհակառակը, սիրիացիները՝ հայերին:

- Թեև Սիրիայում, ընդհանուր առմամբ, տպավորություն կա, թե հայերը շատ առաջադիմական տարր են՝ թերևս պատրաստ առաջինը պայքարելու հանուր երկրի քաղաքական վիճակի ազատականացման, բայցևայնպես, նման մտայնություններն անտեղի են, ինչը հիմնականում պայմանավորված է պատմական, էթնիկ վարքագծի և այլ գործոնների հետ: Առաջին հերթին, հայ լայն զանգվածների մոտ դեռևս թարմ է 20-րդ դարասկզբին իրենց նախահայրերի ապրած տեղահանությունն ու Ցեղասպանությունը: Ինչքան էլ սիրիահայերը պնդեն, թե իրենք՝ որպես երկրի լիիրավ քաղաքացիներ, պատրաստ են շփվել տարբեր դավանանքների պատկանող

համաքաղաքացիների հետ, սակայն շատ դեպքերում նրանց ընկալումները դեռևս ձերբազատված չեն նախկին կարծրատիպերից: Հայերը համայնքի ներսում «օտարներին» անվանում են «այլազգի» և իրենց հավաքականությունից դուրս որևէ տարրի նկատմամբ ոչ միանշանակ մոտեցում ունեն: Փաստորեն, հայերի մեջ կա մի տեսակ անվստահություն «մյուսների» նկատմամբ, ինչը փոխանցվում է սերնդեսերունդ:

- Արդյո՞ք ներկա փուլին բնորոշ ծայրահեղական տրամադրությունները վտանգավոր չեն Սիրիայի փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի համար:

- Այսօր սիրիական ընդդիմությունը կազմված է տարբեր շերտերից, որոնցից մեկը ծայրահեղ իսլամիստներն են: Չնայած նրանք տեղ չեն գտել, այսպես կոչված, պաշտոնական ընդդիմության մեջ և ոչ էլ ներկայացնում են հասարակության ստվար մասը, սակայն նրանց գոյությունն արդեն իսկ բացասական ազդեցություն է ունենում ընդդիմադիր շարժման նկատմամբ քրիստոնեական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի դիրքորոշումների վրա: Հետևաբար պատահական չէ, որ վերջիններս պաշտպանում են հենց նախագահ Բաշար Ալ-Ասադին /որի օրոք երկրում կա հանդուրժողականություն փոքրամասնությունների նկատմամբ/՝ դրանով իսկ փորձելով հակազդել ծայրահեղականությանը:

- Ինչո՞ւ Սիրիայի հայ համայնքը պաշտպանեց Բաշար Ալ-Ասադին:

- Հայերը, լինելով փոքրամասնություն, պետությանն իրենց հավատարմությունը փաստելու նպատակով, շատ դեպքերում սիրիացիներից առավել հավատարիմ եմ եղել իշխող վարչակարգին: Չընդհատվող այդ հավատարմությունն է թերևս պատճառը, որ սիրիահայ համայնքի մեծ զանգվածն այսօր պաշտպանում է իշխող վարչակարգին և մասնավորապես նախագահ Բաշար Ալ-Ասադին: Բացի այդ, հայերը երկրի մնացած քաղաքացիների նման, տարիներ շարունակ ենթակա են եղել պետական քարոզչությանը: Ընդհանրապես, հայերի շրջանում կա մի թյուրըմբռնում, ըստ որի՝ հայերը Հաֆեզ Ալ-Ասադի շրջանից են վայելել իրենց ազգային իրավունքներն ու լիիրավ քաղաքացու կարգավիճակը: Սակայն հարկ է նշել, որ հայերն այդ ամենն արդեն ունեին Ալ-Ասադին նախորդած վարչակարգերի օրոք՝ երկրի անկախության օրերից ի վեր, ինչը, ուրեմն, ճիշտ չէ համարել ներկա վարչակարգի մենաշնորհը: Սակայն այս իրողությունը երբեք ստվեր չի գցում ներկա վարչակարգի բազմաթիվ արժանիքների և հայերի նկատմամբ վարվող հանդուրժողական քաղաքականության վրա: Իրականում

սիրիահայությունը Ցեղասպանությանը հաջորդած շրջանից մինչև օրս միշտ էլ սիրիացի ժողովրդի լավ վերաբերմունքին է արժանացել՝ անկախ գործող վարչակարգերից, քանի որ Սիրիայում ավանդաբար գերակշռող է եղել խաղաղ գոյակցության և էթնիկ ու դավանական բազմազանության նկատմամբ հանդուրժողականության գիտակցությունը:

- Ինչպե՞ս եք տեսնում սիրիահայ համայնքի հեռանկարը ներքաղաքական ճգնաժամի համատեքստում և նաև ճգնաժամի հաղթահարումից հետո:

- Նախ պետք է հասկանալ, թե ինչ է նշանակում ճգնաժամի հաղթահարում: Այն ենթադրում է ընդդիմությանը ճնշե՞լը, թե՞ իշխանափոխություն /խաղաղ թե բռնի/: Սիրիահայ համայնքի հեռանկարը կապված է, թե ինչ սցենարով կզարգանան դեպքերը: Եթե ընդդիմադիրներն իշխանության գան, հայերը կունենան ավելի նվազ կշիռ ու նշանակություն: Շատ բան կախված է այն հանգամանքից, թե ընդդիմադիր ինչ վարչակարգ կհաստատվի: Եթե վարչակարգը լինի կրոնաքաղաքական /իսլամիստական/, բնականաբար, դա նպաստավոր չի կարող լինել հայերի համար: Եթե իշխանության գա ժողովրդավարական վարչակարգ, դա կարող է ավելի հուսադրող լինել: Եթե ներկա վարչակարգին հաջողվի պահպանել իշխանությունը, ապա, բնականաբար, շատ մեծ փոփոխություններ հայերի հետ կապված չեն լինի և նրանք նախկին պես կշարունակեն իրենց բնականոն կյանքը: Սակայն, ամեն պարագայում, երկրի տնտեսական վիճակի վատթարացումը, որն, ըստ ամենայնի, սպառնում է երկրին, բնականաբար կվատթարացնի ողջ երկրի, այդ թվում՝ հայերի վիճակը: Եթե տնտեսական վիճակը չշտկվի և շարունակվի նման ընթացքով, ապա դա անխուսափելիորեն հանգեցնելու է հայերի արտագաղթին, ինչպես պատահեց պարսկահայերի հետ, և մեկ-երկու տասնամյակի ընթացքում սիրիահայերի թիվը կարող է աննախադեպ նվազել: Նրանք, հնարավոր է, մաս կազմեն Արևմուտքի հայ համայնքներին, իսկ մի չնչին մասն էլ կհաստատվի Հայաստանում:

- Արդյո՞ք հայ համայնքը կամ նրա մի հատվածը կարող էր, ասենք, չեզոքություն պահպանել հակաիշխանական ցույցերի ընթացքում:

- Ոչ միայն հայ համայնքի, այլ նույնիսկ նրա մի հատվածի, առավել ևս նրա մեկ անդամի համար ծայրահեղ դժվար է վարչակարգի դիրքորոշումից տարբեր կարծիք ունենալ: Ամեն դեպքում, ավելի վատ է, երբ համայնքներն իրենք են կիրառում այն նույն մեթոդները, ինչ վարչակարգը, երբ նույնիսկ ավելի վատ ճնշումներ

են կիրառում իրենց անդամների վրա, երբ նկատում են, որ մեկը երամից դուրս է թռել:

- Արտագաղթի դեպքում ո՞ր երկրներ կցանկանան մեկնել սիրիահայերը: Ինչքանո՞վ կարող է Հայաստանն օգտակար լինել Սիրիայի հայ համայնքին:

- Արտագաղթի դեպքում, եթե ֆիզիկական վտանգ առաջանա, ամենայն հավանականությամբ, առաջին կայանները Լիբանանն ու Հայաստանը կարող են դառնալ: Լիբանանը թերևս ավելի հաստատուն վայր կարող է լինել սիրիահայերի համար, քան Հայաստանը, որը հավանաբար կծառայի որպես ժամանակավոր բնակավայր արևմտյան երկրներ անցնելու համար: Ամեն դեպքում, կա իրաքահայության օրինակը, որի անդամներն այդպես էլ չկարողացան Հայաստանում հատատվել: Բայց գուցե Հայաստանում իրավիճակն այն չէ, ինչ 2003-ին էր: Գուցե Հայաստանն ավելի գրավիչ լինի սիրիահայ գաղթականների համար, քան իրաքահայերի համար էր այն ժամանակ: Այս դեպքում Հայաստանն էլ պետք է մտածի, թե ինչպես կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել իր հայրենակիցների համար:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՍԻՐԻԱՅԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ, ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ «ԱԶԱՏ-ՀԱՅ» ԿԱՅՔԷՋԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀՐԱՉ ՔԱԼՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ

- Տարիներ ի վեր ղեկավարում եք «Ազատ-հայ» կայքէջի գործունեությունը: Ի՞նչ նպատակ է հետապնդում այն:

- Հիմնական նպատակը Միջին Արևելքի հայկական գաղութների մասին տեղեկություն տալն է, նրանց մասին խոսելը: Ցանկանում ենք, որպեսզի Սփյուռքում հայկական գործունեություն լինի: Կայքէջն իր բնույթով անկողմնակալ է, Սփյուռքում գործող որևէ գաղափարական հոսանքի կամ կառույցի խոսափող չէ, այլ հայկական շահերի արտահայտիչ: Նյութերը ներկայացնում են Միջին Արևելքի բոլոր հայ համայնքների և դրանց գործունեության ամենատարբեր ասպեկտները: Բացի այդ, տեղ են գտնում նաև արաբական աշխարհում հայության մասին արձագանքները, ի վերջո, Հայաստանին առնչվող նյութեր: Կայքէջի գլխավոր էջն անգլերեն է, սակայն հայերեն բաժիններ էլ կան: Նյութական հնարավորությունների դեպքում անգլերեն բոլոր նյութերը կարող են համապատասխանաբար թարգմանվել հայերեն: Կայքէջի անգլերեն տարբերա-

կը, կարելի է ասել, տեղեկատվական միջոց է դարձել հատկապես Միջին Արևելքի սահմաններից դուրս բնակվող հայերի համար, ովքեր հայերեն չգիտեն: Բացի այդ, դրանից օգտվում են նաև օտարները:

- Ինչպե՞ս եք գնահատում Սփյուռքում հայկական միտքը:

- Սփյուռքում հայկական միտքը զարգանալու դեռ շատ տեղ ունի: Այստեղ հայկական հետազոտությունների մի զգալի մասը շարունակում է նվիրված մնալ Հայոց ցեղասպանությանը, հայապահպանմանը, արաբական աշխարհում հայերի հաստատվելու պատմությանը և այլն: Կարծում եմ, որ նոր մտքեր էլ են պետք արդեն բոլորովին նոր իրողությունների մասին:

- Ինչպե՞ս եք գնահատում սիրիահայ համայնքի հեռանկարը մանավանդ ներքաղաքական առկա ճգնաժամի պայմաններում:

- Լինելով միշտ ապաքաղաքականացված և հայտնվելով ստիպողաբար ապաքաղաքականացված արաբական լայն զանգվածի մեջ՝ հայության համար անսպասելի էին սիրիական քաղաքական իրավիճակի ներկա զարգացումներն այն աստիճան, որ ութ ամիս անց սիրիահայությունը շատ դեպքերում դեռևս չի գիտակցում իրավիճակի ողջ լրջությունը: Հեռանկարն, իմ կարծիքով, չի կարող վատ լինել հայերի համար: Նախ պետք է նշել, որ հայերն այնքան աննշան փոքրամասնություն են 23 միլիոն բնակչություն ունեցող Սիրիայի համար, որ նրանց դեմ կանխամտածված հավաքական վնաս չի կարող տեղի ունենալ: Նրանք դեռ վայելում են աշխատասեր քաղաքացու համբավը, սակայն բարոյական առումով կարժեզրկվեն, եթե չկարողանան, թեկուզ ուշացած, համասիրիական ժողովրդավարական տեսլականի մաս կազմել: Կարծում եմ, սիրիահայության մեծ մասը կշարունակի իր կյանքը սովորականի նման ցանկացած վարչակարգի դեպքում, քանի որ ապագա Սիրիան այլևս չի կարող թույլ տալ իրեն՝ կրկնելու անցյալի սխալները, իսկ երկրի տնտեսական առաջընթացն ու զարգացումը պիտի կարևորվեն, որտեղ հայերը էական ներդրում կարող են ունենալ:

- Արդյո՞ք հայ համայնքը կամ նրա մի հատվածը կարող էր այլ դիրքորոշում, ասենք՝ չեզոքություն որդեգրել հակակառավարական շարժումների նկատմամբ:

- Տարիների ընթացքում հայ գաղութի մեջ ձևավորվեց մի ղեկավար խավ, որը ներկա սիրիական իրականության մանրապատկերն է ներկայացնում: Օսմանյան վարչակարգից ժառանգած և պաշտոնապես ամրագրված իրավունքներով օժտված՝ նրանք վարեցին համայնքային գործերը՝ զարկ տալով մշակութային, սոցիալական, կրոնական և շինարարական աշխատանքներին: Հա-

մայնքի հայախոս լինելը դարձավ կարևորագույն ձեռքբերում ու գերխնդիր: Բայց փաստն այն է, որ գաղութի ներքին ազգային կառույցներն արդիականանալու կարիք ունեն, այնտեղ կուտակված բազմաթիվ խնդիրներ կան, որոնք վկայում են առկա լճացածության մասին: Մարդկային ռեսուրս կա, սակայն շատերն այդպես էլ չեն կարողանում հայկական կառույցների մեջ տեղ գտնել և հետագայում էլ գուցե չեն կարողանալու, քանի որ դա, հնարավոր է, նրանց թույլ չտրվի հենց վերնախավի կողմից:

Հայ ղեկավարությունը վերջին դեպքերի կապակցությամբ կարող էր ավելի հավասարակշռված մոտենալ, մանավանդ որ կա նախկին փորձառությունը, երբ Սիրիայի և Թուրքիայի չափազանց սերտացումը սիրիահայերին ստիպում էր զուսպ կեցվածք որդեգրել Հայ դատի նկատմամբ:

Տասնամյակներ շարունակ ապրելով Սիրիայում՝ հայերն ինչ-որ իմաստով իրենց հեռու պահեցին սիրիական հասարակությունից և անցուդարձերից: Պատճառը, կարծում եմ, զգուշավորությունն ու գուցե կասկածամտություն էր մշակութային և կրոնական այն միջավայրի նկատմամբ, որում նրանք հայտնվել էին: Բայց մի՞թե նույն այդ իսլամադավան սիրիացիները չէին, որ հարյուր տարի առաջ՝ Ցեղասպանությունից հետո, ընդունեցին հայերին, և որոնց հետ վերջիններս համագործակցության մեծ փորձ կուտակեցին: Արդյոք պետք չէ՞ մտածել, որ նման կեցվածքն այնքան էլ ճիշտ չէր, և հնարավոր կլիներ վերանայել, եթե հայերը փորձեին հետամուտ լինել այդ խնդրին:

Ամեն պարագայում սիրիական ընդդիմությունն իր օրակարգում փոքրամասնությունների իրավունքները սահմանափակելու մասին չի հայտարարել: Կարծում եմ, որ հայերը կարող էին և չեզոքություն պահպանել: Այսքան տարի սիրիական քաղաքական կյանքում մասնակցություն չունենալուց հետո կարելի էր նույն աննկատ կեցվածքն ունենալ:

- Արտագաղթի դեպքում ո՞ր երկրներ կցանկանան մեկնել սիրիահայերը, եթե երկրում անկայունություն սկսվի: Արդյո՞ք սիրիահայերը կցանկանային հաստատվել Հայաստանում:

- Ինչպես արդեն նշել եմ, սիրիահայերը վերջին հիսուն տարիներիների ընթացքում շարունակական արտագաղթի մեջ են, որի հետևանքով գաղութի թվաքանակը հասել է վաթսուն հազարի սահմանները, իսկ հայախոսության տոկոսը գնալով նվազում է: Արտագաղթն ընդունված երևույթ է սիրիահայ ընտանիքների համար, որոնք այլևս ազգականներ ունեն շատ երկրներում: Չեմ կարծում, որ արտագաղթն այժմ կտրուկ կարող է աճել: Արևմուտքի

երկրները կարող են անշուշտ այդ հոսանքն աշխուժացնել շնորհելով մուտքի և ապրելու արտոնագրեր: Սիրիահայերն առաջին հերթին կարող են Բեյրութ գաղթել՝ դրանից հետո այլ երկրներ անցնելու հեռանկարով:

Անհատական առումով Հայաստանում հաստատվելու ծրագրեր չկան /կամ քիչ են/, իսկ հավաքական առումով դեռևս չեն մոռացվել 1940-ականների ներգաղթի բացասական հետևանքները, բացի այդ կա նաև ներկա իրականությունը: Սիրիահայերից շատերը համոզված չեն, որ Հայաստանի կառավարությունն ի զորու է ընդունելու և տեղավորելու իրենց: Կարծում եմ, միայն ֆիզիկական վտանգի պարագայում նրանք պիտի փորձեն Հայաստան գաղթել՝ դրանից առաջ, սակայն, նախապատվությունը տալով Լիբանանին: Ամեն պարագայում, Հայաստանը կարող է ծառայել որպես ժամանակավոր հանգրվան հնարավոր ֆիզիկական վտանգից ազատվելուց հետո:

- Ինչքանո՞վ կարող է օգտակար լինել Հայաստանը Սիրիայի հայ համայնքին:

- Հայաստանը կարող է օգտակար լինել նախևառաջ տարածաշրջանում ինքնավստահ և հեռանկարային քաղաքականություն վարելով՝ օգնելով հայությանը՝ ընկալելու ներկա ժամանակների զարգացումները և փորձելով դրանցից շահեկան դուրս գալ:

Երկարաժամկետ առումով Հայաստանը կարող է տարածաշրջանի հայությանն օգտակար լինել միայն, երբ տնտեսապես և քաղաքականապես հզորանա: Սակայն ներկա իրավիճակը հույս չի ներշնչում նման կտրուկ փոփոխության համար: Մինչև Հայաստանն այդպիսի կարգավիճակ ձեռք բերի, Միջին Արևելքի հայերը կարող է պատմության գիրկն անցած լինեն կամ այնքան հարմարված լինեն իրենց նոր միջավայրերին, որ Հայաստանը նրանց համար միայն զգացական կամ խիստ վերացական արժեք ունենա:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԻՋԻԳԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԴԻՐԲՈՌՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՐԻՉ, ԱՐԵՎԵԼԱԳԵՏ, ՊՐՈՖ. ԱՐԱ ՍԱՆՃՅԱՆԻ ՀԵՏ

- Ի՞նչ մարտահրավերների առջև է կանգնած այսօր սիրիահայ համայնքը: Ի՞նչ հիմնական հիմնախնդիրներ կառանձնացնեք:

- Նախքան 2011թ. արաբական աշխարհում այսպես կոչված «արաբական գարնան» ալիքի ծավալումը, Սիրիայի հայ գաղութը

համարվում էր Մերձավոր Արևելքի ամենակայուն հայկական համայնքներից մեկը, եթե ոչ ամենակայունը: Ի տարբերություն հարևան Լիբանանի, հայ գաղութի, որը երկրի սահմանադրության և քաղաքական ավանդույթների շնորհիվ գործուն մասնակցություն ունի հյուրընկալ պետության քաղաքական գործընթացներում և փորձում է ամեն գնով պահել իր դիրքերը, սիրիահայությունը գրեթե անմասն է մնացել հյուրընկալ երկրի համապետական խնդիրներին:

1946թ. Սիրիայի անկախացումից երկրի ազգաբնակչությունը շատ քիչ անգամներ է մասնակից դարձել իսկապես մրցակցային հիմքի վրա կազմակերպված խորհրդարանական ընտրություններին: Չնայած այդ հանգամանքին՝ Սիրիայի ներկայումս 250 անդամ ունեցող Խորհրդարանում հայերը գրեթե մշտապես հնարավորություն են ունեցել ներկայանալու մեկ պատգամավորով /սովորաբար՝ Հալեպից/: Խորհրդարանը, սակայն, մեծ դեր չի խաղում Սիրիայի քաղաքական կյանքում: Վերջին տասնամյակներում երկրում քաղաքական հիմնական լծակները գտնվում են հանրապետության նախագահի, նրա անմիջական շրջապատի, ուր կարևոր տեղ են զբաղեցնում վերջինիս մոտիկ ազգականները, և երկրի անվտանգության մարմինների ձեռքին:

Իր հերթին, գործադիրը նույնպես ուշադիր է, որպեսզի հայերը ներկայացված լինեն հայաբնակ շրջանների տեղական ներկայացուցչական մարմիններում: Սակայն Սիրիայի պետական համակարգի և բանակի սպայական կազմի մեջ միայն հազվագյուտ սիրիահայերի կարելի է հանդիպել:

Սփյուռքահայության մեջ տարածված քաղաքական կուսակցություններն ու այլևայլ հոսանքները Սիրիայի հայկական շրջաններում նույնպես իրենց անդամներն ու համակիրներն ունեն: Այսուհանդերձ, սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների սիրիական մասնաճյուղերը պաշտոնապես գործելու իրավունք չունեն: Վերջիններս գործում են միայն իրենց կից մարզական, բարեգործական, կրթական ու մշակութային միությունների անվան տակ: Այս կազմակերպությունների, հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական համայնքների, ինչպես նաև հայրենակցական միությունների ամենօրյա գործունեության գլխավոր նպատակը հայերենը և հայ մշակույթը կենսունակ պահելն է իրարահաջորդ հայ սերունդների շրջանում՝ եկեղեցիների ու դպրոցների, ինչպես նաև մշակութային ու մարզական գործունեության միջոցով: Հայաստանի հետ պաշտոնական հարաբերություններն էլ սովորաբար սահմանափակվում են այս համատեքստում:

Ի տարբերություն հարևան Լիբանանի՝ սիրիահայերը որևէ լուրջ քայլ չեն կատարել Սիրիայի Խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման նախագիծ առաջ քաշելու ուղղությամբ՝ գիտակցելով, որ երկրի կառավարությունը կընդդիմանա սահմանակից Թուրքիային ոչ ցանկալի այդ քայլից և հաշվի առնելով նաև, որ երկրի օրենսդիրները բավարար անկախ չեն գործադիր իշխանությունից: 1990-ականներին, երբ Սիրիայի և Թուրքիայի հարաբերությունները լարված էին, հնարավոր եղավ Սիրիայում Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի մասին հրատարակել գիտագործնական արաբալեզու գրականություն: Սակայն երբ երկկողմ հարաբերությունները 1999-ի Ադանայի պայմանագրով կարգավորվեցին, արաբերենով հակաթուրքական գրականության լույսընծայումը համարյա անհնար դարձավ: Դրանից հետո Սիրիայում այս հարցերի շուրջ քարոզչական աշխատանքներն իրականացվում են բացառապես հայերենով և միայն հայ համայնքի համեմատաբար նեղ շրջանակներում:

Անկախությունից ի վեր Սիրիայի իրարահաջորդ իշխանություններից ոմանք մի քանի առիթներով միջամտել են ոչ պետական /ներառյալ՝ հայկական/ ուսումնական հաստատությունների ծրագրերին՝ փորձելով դրանց ավելի ազգային, արաբական բնույթ տալ՝ այդ ընթացքում սահմանափակելով հայերենի ու հայագիտական նյութերի դասավանդման ժամերը: Այդպիսի նշանակալից վերջին միջամտությունը տեղի ունեցավ 1967թ. արաբ-իսրայելական հերթական պատերազմից հետո: Սակայն 1970-ականներից ի վեր նախագահ Հաֆեզ և Բաշար Ալ-Ասադների օրոք հավելյալ լուրջ սահմանափակումներ չեն արձանագրվել: Այսուհանդերձ, Սիրիայի հայկական վարժարաններում հայերենը ներկայումս շարունակվում է դասավանդվել սոսկ հայ քրիստոնյաների ծիսական լեզու լինելու արդյունքում, իսկ նշված դպրոցների հայ աշակերտները հայ ժողովրդի պատմությանը ծանոթանում են միայն կրոնի դասերի շրջանակներում: Պետք է ընդգծել սակայն, որ նույնիսկ այս պայմաններում սիրիահայ դպրոցները բավական հաջող են կատարում իրենց հայապահպանական առաքելությունը: Հարևան Լիբանանում, ուր պետական միջամտությունն ավելի քիչ է եղել, հայերենի ու հայագիտական դասերի ժամաքանակը նույնպես աստիճանաբար նվազել է, քանի որ հայկական դպրոցների ղեկավարները ստիպված են եղել համահունչ գնալ երկրի համընդհանուր կրթական ծրագրի ավելացող պահանջներին, ինչպես նաև իրենց զավակներին հայկական վարժարան ուղարկող, բայց հյուրընկալ հասարակության հետ ինտեգրվել ցանկացող ծնողների ցանկությունների հետ: Առավել ևս,

մինչ Լիբանանի հայկական վարժարանների աշակերտության թվաքանակն անշեղորեն նվազել է 1975-ից ի վեր, սիրիահայ ծնողները շարունակել և շարունակում են ավելի ինտենսիվ կերպով իրենց երեխաներին հայկական դպրոցներ ուղարկել: Հալեպ քաղաքը վերջին տարիներին դարձել է Սփյուռքում հայերենի դպրոցական դասագրքեր պատրաստելու թերևս կարևորագույն կենտրոնը, իսկ այնտեղ կազմված առանձին դասագրքեր օգտագործվում են նույնիսկ Լիբանանում և այլուր: Որոշակի վերաաշխուժացում է նկատվում նաև հայկական հրատարակչության ոլորտում, հատկապես՝ Հալեպում: Այսօր ձևավորված է սիրիահայ գրողների մի նոր սերունդ, որի չափածո, թատերական և արձակ գործերը հրատարակվում են Հալեպում կամ Լիբանանում:

Այնպես որ, որքան ժամանակ Բաշար Ալ-Ասադի գլխավորած կառավարությունը կվերահսկի իրադրությունը Դամասկոսի, Հալեպի և Սիրիայի հայաբնակ այլ շրջաններում, վերոնշյալ իրավական ու փաստական իրավիճակը հավանաբար կմնա անփոփոխ:

- Արդյո՞ք Բաշար Ալ–Ասադի վարչակարգի հնարավոր փոփոխությունը կարող է բացասական հետևանքներ ունենալ սիրիահայ համայնքի համար:

- Սիրիայում քաղաքական և անվտանգության ոլորտներում տիրող անհանգիստ իրավիճակը մի քանի ամիս է, ինչ շարունակվում է, և դեռևս դժվար է կանխագուշակել, թե ինչպես կհանգուցալուծվեն դեպքերը: Համենայնդեպս, մտավախություն ունեմ, որ զարգացումների բոլոր հնարավոր տարբերակները՝ թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ, անդառնալի հետևանքներ ունենան սիրիահայության համար:

2011-ի մարտ ամսից ի վեր Սիրիայի քաղաքական խճանկարը բաժանված է երկու հակամարտ ճամբարների: Արձագանքելով «արաբական գարնան» համատեքստում ժողովրդական պահանջներին՝ ավելի քան 40 տարի իշխանության մեջ գտնվող Ալ-Ասադ ընտանիքի գլխավորած Բաաս կուսակցության վարչակարգն իր հրապարակային հայտարարություններում ընդունեց քաղաքական բարեփոխումների անհրաժեշտությունը: Արդյունքում, նախ, վերացվեց 1963-ից ի վեր անընդմեջ գործող արտակարգ դրությունը, ապա սահմանադրության, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների մասին օրենքում և ընտրական օրենքում փոփոխություններ մտցվեցին: Սակայն նշված բարեփոխումները կյանքի են կոչվում շատ դանդաղ, և դեռևս հստակ չէ, թե դրանք, ի վերջո, որևէ որակական փոփոխություն մտցնելու՞ են Սիրիայի քաղաքական համակարգում, թե՞ ոչ:

Միաժամանակ, Սիրիայի իշխանությունները շարունակում են պնդել, թե իրենց երկրում տեղի ունեցածը միջազգային դավադրության հետևանք է՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, արևմտաեվրոպական մի շարք պետությունների, Արաբական կամ Պարսից Ծոցի միապետական վարչակարգերի և Թուրքիայի հովանավորությամբ: Ըստ Սիրիայի կառավարության և Մերձավոր Արևելքում նրա համակիրների՝ այդ երկրները ձգտում են տապալել նախագահ Ալ-Ասադի վարչակարգը, որովհետև վերջինս արմատական կեցվածք ունի Իսրայելի հանդեպ և դաշնակցում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Այս մեկնակետից ելնելով՝ սիրիական իշխանությունները կանոնավորաբար ուժ են կիրառում հակակառավարական շարժման մասնակիցների նկատմամբ: Իսկ նման կոշտ դիրքորոշում հնարավոր եղավ հետապնդել, որովհետև սիրիական բանակի ղեկավարությունն ու զինվորականության ջախջախիչ մեծամասնությունը հավատարիմ մնացին նախագահ Ալ-Ասադին և նրա անմիջական շրջապատին՝ ի տարբերություն Թունիսի և Եգիպտոսի: Այդ երկրներում բանակի հրամանատարական կազմերը, չեզոք դիրք բռնելով կառավարության ու ցուցարարների միջև, գործնականում արագացրեցին նախագահներ Զեյն Ալ-Աբիդին Բեն Ալիի ու Հոսնի Մուբարաքի քաղաքական մեկուսացումն ու նրանց հրաժարականները:

Սիրիական ընդդիմությունը, որի հիմնական մասն արտասահմանում է, բարեփոխումների հարցում թերահավատ է: Ընդդիմադիրները Բաշար Ալ-Ասադին հանցավոր են համարում մարտ ամսից Սիրիայում թափված արյան համար, իսկ իշխանությունից նրա հեռանալը համարում են կարևոր նախապայման՝ երկրում ժողովրդավարական կարգեր հաստատելու ճանապարհին:

Այսուհանդերձ, Սիրիայի ընդհանուր բնակչության կես տոկոսից էլ պակաս թվաքանակ ունեցող հայության ջախջախիչ մեծամասնությունը, ինչպես նաև համեմատաբար ավելի մեծաթիվ արաբախոս քրիստոնյաներն ու իսլամադավան, բայց ոչ սուննի փոքրամասնությունները, չեն հավատում սիրիական ընդդիմության քաղաքական լոզունգներին ու խոստումներին: Նրանք դեռևս նախընտրում են հավատալ նախագահ Ալ-Ասադի վարչակարգի վերջնական հաղթանակին: Հետաքրքրական է նաև, որ նույնիսկ սիրիահայության կառավարամետ ընթացքը քննադատող սակավաթիվ հայ ձայները (սոցիալական ցանցերում գրառումներ կատարող սիրիահայ առանձին երիտասարդներ, այլևս երկրից հեռացած նախկին սիրիահայեր և Երևանում մի քանի երիտասարդ արաբագետներ) իրենց մեկնաբանություններում շեշտը դնում են ո՛չ թե ընդդի-

մադիր հոսանքների ժողովրդավարական ներուժի, որքան այն վտանգների վրա, որին սիրիահայությունը կարող է բախվել ընդդիմության հնարավոր հաղթանակի դեպքում, եթե վերջիններս ձգտեն վրեժխնդիր լինել Ալ-Ասադի վարչակարգի համակիրներից:

Սիրիական ընդդիմության նկատմամբ հայության տարբեր հատվածների այս վերապահ կեցվածքը կարելի է բացատրել այն մտավախությամբ, որ գոյություն ունի սիրիական խայտաբղետ ընդդիմության կարևոր բաղադրիչ համարվող «Մուսուլման եղբայրներ» սուննիական քաղաքական հոսանքի նկատմամբ: Վերջինիս իշխանության գալու դեպքում հնարավոր է սահմանափակվեն Սիրիայի ոչ սուննի փոքրամասնությունների կրոնական ու մշակութային ազատությունները:

Հատկանշական է, որ Թունիսում և Եգիպտոսում վարչակարգերի տապալումից հետո խորհրդարանական առաջին ընտրությունների արդյունքում հաղթանակ տարան հենց իսլամիստական քաղաքական կուսակցությունները: Այս իրողությունն, ի դեպ, մտավախություն առաջացրեց թե՛ սիրիահայության և թե՛ Մերձավոր Արևելքի այլ քրիստոնյաների շրջանում: Վատ նախադեպ է նաև Իրաքի պարագան, ուր Սադդամ Հուսեյնի բաասական վարչակարգի տապալումից հետո շեշտակիորեն ավելացան քրիստոնեական հաստատությունների, ինչպես նաև քրիստոնյա հոգևորականների և անհատների դեմ բռնարարքները՝ խթանելով Իրաքից քրիստոնյաների (ներառյալ՝ հայերի) մեծածավալ արտահոսքը:

Այսուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ սիրիահայերը որևէ լուրջ լծակ չունեն իրենց երկրում քաղաքական զարգացումների վրա ազդելու համար: Նրանք, ի վերջո, պիտի դառնան այդ զարգացումների դրական կամ բացասական արդյունքների կրողները:

Ներկա դրությամբ, անհնար է պատկերացնել Սիրիայի իշխանությունների և արմատական ընդդիմության միջև փոխզիջումային որևէ համաձայնության ձևավորում: Երկու ճամբարներն էլ նպատակադրված են կործանելու իրենց հակառակորդին: Փոխզիջումային լուծում սիրիացիներին կարող են պարտադրել միջազգային մակարդակում ազդեցիկ պետությունները (առաջին հերթին՝ ԱՄՆ-ը և Ռուսաստանը)՝ նախ իրենց միջև համաձայնության գալով և ապա այն պարտադրելով սիրիական հակամարտ կողմերին: Նույնիսկ այս դեպքում շատ սիրիահայեր փոխհամաձայնությունը պիտի դիտարկեն որպես փխրուն կամ ժամանակավոր և ցանկանան երկրից հեռանալ՝ նախքան հնարավոր արյունահեղության նոր հանգրվանի սկիզբը:

Սիրիայում քաղաքական ու ռազմական զարգացումները մեծ մասամբ կախված են օտարերկրյա միջամտության հավանականությունից: Դժվար թե ընդդիմադիրները կարողանան տապալել նախագահ Ալ-Ասադի վարչակարգը՝ առանց արտերկրից ռազմական օժանդակության: Այն, ինչ կատարվեց Լիբիայում, որտեղ ապստամբները պարտության մատնեցին Մուամար Քադաֆիին միայն ՆԱՏՕ-ի ռազմական աջակցության շնորհիվ, առայժմ բացառվում է Սիրիայում, քանի որ Ռուսաստանը դեռ աջակցում է Ալ-Ասադին և շարունակում է ՄԱԿ-ում օգտագործել վետոյի իր իրավունքը՝ արգելելու համար օտարերկրյա միջամտության օրինականացումը: Սակայն Ռուսաստանը կարող է ապագայում, կամա թե ակամա, նախագահ Ալ-Ասադի հաշվին գործարքի մեջ մտնել ԱՄՆ-ի հետ, կամ ԱՄՆ-ը կարող է շրջանցել ՄԱԿ-ը և Սիրիա ներխուժել ՆԱՏՕ-ի կամ միջազգային որևէ՝ թեկուզ ժամանակավոր դաշինքի անվան տակ: Այդ պարագայում, Ալ-Ասադի վարչակարգը, ի վերջո, ուժերի անհավասարության հետևանքով կարող է ընկրկել: Նրան հաջորդող սիրիական իշխանությունները՝ գոնե սկզբնական շրջանում, իրենց շատ պարտավորված պիտի զգան Թուրքիայի հանդեպ, որ ներկայումս օթևան է տրամադրել արտասահմանում գտնվող սիրիական ընդդիմադիր ղեկավարությանը և տարբեր ձևերով սատարում է նրանց: Սիրիայում Թուրքիայի ազդեցության թեկուզև ժամանակավոր, բայց շեշտակի աճը բացասական ազդեցություն պիտի ունենա սիրիահայ համայնքի ունեցած ազատությունների, ինչպես նաև Հայաստան-Սիրիա երկկողմ հարաբերությունների վրա:

Առանց օտար միջամտության՝ նախագահ Ալ-Ասադի հավատարիմ ուժերը ըստ ամենայնի պարտության կմատնեն ընդդիմությանը, ինչպես ներկայիս նախագահի հորը՝ Հաֆեզ Ալ-Ասադին հաջողվեց ճնշել «Մուսուլման եղբայրներին» 1980-ական թվականների սկզբին: Չկարողանալով հաղթահարել Ռուսաստանի հակազդեցությունը՝ Վաշինգտոնը, Անկարան և նրանց արաբ համախոհները, հնարավոր է, հրաժարվեն նախագահ Ալ-Ասադին անմիջականորեն տապալելու մտքից՝ փոխարենը Սիրիային ենթարկելով երկարաժամկետ քաղաքական և տնտեսական մեկուսացման՝ նման այն իրավիճակին, որի մեջ գտնվում էր Իրաքը 1990-ական թվականներին: Այսպիսի տարբերակը ծանր ազդեցություն կունենա Սիրիայի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ու կխթանի երկրից դանդաղ, բայց անդառնալի արտագաղթի՝ այդ արտահոսքի մեջ ընդգրկելով նաև սիրիահայության ստվար մի հատվածի:

Ըստ իս՝ ավելի հավանական է մեկ այլ տարբերակ, երբ ԱՄՆ-ը և իր դաշնակիցները, ի վերջո, հրաժարվեն Սիրիայում լիբիական փորձի նման ուղղակի ռազմական միջամտությունից, բայց դրա փոխարեն շարունակեն սիրիական ընդդիմությանը տարատեսակ ռազմատեխնիկական, անուղղակի և մասամբ քողարկված օժանդակություն ցուցաբերել: Փաստ է, որ սիրիական ընդդիմությունը վերջին ամիսներին կարողացավ գոյատևել՝ հակառակ կառավարության կոշտ քաղաքականության: Իսկ սիրիական բանակից հեռացած ընդդիմության համակիր զինվորականները կարողացան կազմել իրենց զորամիավորումները: Եթե վերջիններս շարունակեն դրսից անհրաժեշտ ռազմամթերք և տեխնիկական օժանդակություն ստանալ, Սիրիան կարող է կամաց-կամաց գլորվել դեպի քաղաքացիական պատերազմ, ինչպես դա տեղի ունեցավ Լիբանանում 1975 թվականին: Քանի որ Սիրիայի աշխարհագրական դիրքը ռազմավարական մեծ նշանակություն ունի եվրասիական ցամաքամասի համար, բազմաթիվ ազդեցիկ և տարածաշրջանային պետություններ այդ պարագայում ուղղակիորեն կամ անուղղակիորեն կմիջամտեն քաղաքացիական պատերազմին՝ աջակցելով հակամարտող կողմերից որևէ մեկին:

Դժվար է կանխատեսել, թե ինչպիսի հետագա ընթացք կարող է ունենալ այս ճգնաժամը: Բացառված չէ, որ հարևան Լիբանանի 1975-1990 թվականների փորձը մասամբ կրկնվի, և ժամանակի ընթացքում կենտրոնական կառավարությունը թուլանա, ներկայումս կուռ թվացող սիրիական երկու հակամարտ ճամբարները կամաց-կամաց տարրալուծվեն, դրանցում գտնվող տարբեր հոսանքները դառնան ավելի ինքնուրույն և Սիրիայի ամբողջ տարածքը վերածվի այլազան, «փոքր պատերազմների» թատերաբեմի: Այդ պարագայում ևս սիրիահայության նշանակալից արտագաղթ տեղի կունենա, ինչպես ժամանակին տեղի ունեցավ Լիբանանում:

- Ինչպե՞ս եք տեսնում Մերձավոր Արևելքում հայ համայնքների /այդ թվում Սիրիայի/ հեռանկարը 21–րդ դարին բնորոշ իրողությունների համատեքստում:

- Արաբական աշխարհի հայ գաղութները մեր այսօրվա ընկալումներին համապատասխան՝ կերպարանք ստացան 1915 թվականի Ցեղասպանության և 1921-22-ին Կիլիկիայի հայաթափման արդյունքում: Չնայած սկզբնական շրջանի բազմաթիվ դժվարություններին՝ հայ գաղթականները համեմատաբար հեշտությամբ համակերպվեցին հյուրընկալ միջավայրին և շուտով արաբական աշխարհը նախընտրեցին տարածաշրջանի այլ երկիրներից՝ որ-

պես հայապահպանության համար հարմարավետ տեղ: Ասվածի լավագույն ապացույցը Ալեքսանդրետի սանջակի և 1948-ի սահմաններով Իսրայելի հայության ճակատագիրն էր: Երբ այս երկրամասերը դադարեցին արաբական լինել, այնտեղ բնակվող շատ հայեր լքեցին իրենց տները և տեղափոխվեցին մոտակա շրջաններ, որոնք սահմանային փոփոխություններից հետո պիտի շարունակեին արաբական գերիշխանության տակ մնալ: Այս մթնոլորտում երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակաշրջանում և դրանից անմիջապես հետո արաբական աշխարհի հայության ընդհանուր թվաքանակը շարունակաբար աճ էր արձանագրում:

Իրադրությունը փոխվեց 1950-ական թվականներից սկսած: 1948-49թթ. Իսրայելի դեմ պատերազմում արաբների կրած պարտությունից հետո արաբական աշխարհում ծավալվեց հեղաշրջումների ալիք, որ սկսվեց Սիրիայից 1949-ին և իր վերջնակետին հասավ Լիբիայում և Հարավային Եմենում 1969-ին: Հասարակության միջին ու ցած խավերից սերած բանակային սպաների կազմակերպած այս հեղաշրջումներն արմատական փոփոխության ենթարկեցին տվյալ պետությունների իշխող վերնախավերի սոցիալ-դասակարգային դիմագիծը: Միաժամանակ, վերջիններիս իրականացրած սոցիալ-տնտեսական բարեփոխումները կրեցին հեղափոխական բնույթ: Սակայն այս հեղաշրջումները իրականում ճանապարհ հարթեցին կենտրոնացված ու ավտորիտար քաղաքական համակարգերի արմատավորմանը, ուր համարյա տեղ չկար բազմակարծության, ժողովրդավարության և ազատ ընտրությունների համար: Արդյունքում քաղաքական իշխանությունը բացառապես կենտրոնացավ երկրի նախագահի, նրա անմիջական շրջապատի, ուժային նախարարությունների և անվտանգության մարմինների ձեռքին:

Հեղաշրջումների այս շղթան իր ազդեցությունն ունեցավ Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի և Սուդանի հայ գաղութների վրա: Հեղափոխական նոր վարչակարգերի իրագործած բարեփոխումների շրջանակից դուրս մնաց պետության ու կրոնի իրավական փոխհարաբերության հարցը, և նշված երկրներում հայությունը շարունակեց պահպանել Օսմանյան կայսրությունից ժառանգված իր կրոնական ու համայնքային կառույցներն ու հավաքական իրավունքները: Սակայն պետական գաղափարախոսություն դարձած արաբական ազգայնականության ոգով կատարված վարչական, կրթական ու մշակութային նորամուծությունները, ինչպես նաև պետական կապիտալիզմին ու մասամբ սոցիալիզմին բնորոշ վերափո-

խումները տնտեսության ոլորտում պատճառ դարձան Եգիպտոսում, Իրաքում և ավելի քիչ չափով՝ Սիրիայում, հայության կրթական, հրատարակչական ու մշակութային ազատությունների սահմանափակմանն ու արտագաղթի նոր ալիքի ձևավորմանը /փոքր ծավալներով՝ դեպի Խորհրդային Հայաստան, բայց ավելի շատ՝ դեպի արևմտյան երկիրներ (հատկապես՝ ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա), իսկ Սիրիայի պարագայում՝ նաև դեպի հարևան Լիբանան/:

1950-ականները դարձան անկյունադարձային, քանի որ բնակչության այս տեղաշարժերը սկիզբ դրեցին մի նոր իրողության, որի արդյունքում արաբական երկրները դադարեցին սփյուռքահայերին համախմբող աշխարհագրական միջավայր հանդիսանալուց և, ընդհակառակը, վերածվեցին երկրագնդի տարբեր շրջաններ հայություն արտահանող մի երկրամասի: 1960-ականներից հետո վերաաշխուժացած ԱՄՆ-ի, Կանադայի և մասամբ՝ Ֆրանսիայի և Անգլիայի հայ գաղութները, ինչպես նաև Ավստրալիայի նորաստեղծ հայ համայնքը շատ բան պարտական են Եգիպտոսից, Սիրիայից և արաբական այլ երկրներից այնտեղ հանգրվանած հայության: Ավելի ուշ, Լիբանանի հայ գաղութն էլ նոսրացավ երկրում 15 տարի տևած քաղաքացիական պատերազմի հետևանքով, և արտագաղթած լիբանանահայության մեծ մասը նույնպես հանգրվանեց Հյուսիսային Ամերիկայում, Ֆրանսիայում և Ավստրալիայում: Առավել ևս, ի տարբերություն նախապես հիշատակված Ալեքսանդրետի ու Պաղեստինի նախադեպերի, Թուրքիայից, Իրանից և վերջապես հետխորհրդային Հայաստանից արտագաղթը, շատ չնչին բացառություններով, շրջանցեց արաբական աշխարհը: Արտագաղթողների համար արաբական աշխարհի անհրապուրիչ վայր դառնալու գլխավոր պատճառը վերջին տասնամյակներին այս տարածաշրջանի ավելի տնտեսական լճացումն է, քան արդեն հիշատակված արաբական ազգայնականության և իսլամական հոսանքների աճը կամ քաղաքական սահմանափակումները:

2010 թվականի վերջից ծավալված, այսպես կոչված, «արաբական գարունը» իր տարողությամբ կարող է համարժեք դառնալ 1950-60-ականների հեղաշրջումների թողած հավաքական ազդեցությանը: Արաբական շատ երկրներում այս հեղաշրջումների հետևանքով երկար տասնամյակներ նախագահական աթոռին բազմած ղեկավարները՝ մեկը մյուսին հետևելով նախապատրաստվում էին երկրի առաջնորդի աթոռը «կտակել» իրենց որդիներին, երբ ավել քան մեկ տարի առաջ թափ առավ ստեղծված իրավիճակի դեմ բողոքների ալիքը: Մինչ այդ, 2000 թվականին Բաշար Ալ-Ա-

սադն իր մահացած հոր՝ Հաֆեզին փոխարինելով՝ դարձավ այս յուրահատուկ «սերնդափոխության» միակ ավարտված հաջող օրինակ, ինչն արաբ սոցիոլոգներն սկսեցին անվանել «հանրաթագավորություն» (արաբերեն՝ «գումալաքիյյա», ստեղծված՝ «գումհուրիյյա»=«հանրապետություն» և «մալաքիյյա»=«թագավորություն» տերմինների համադրումից):

Դեռևս շարունակվող նորագույն այս ճգնաժամի հետևանքով սիրիահայության գլխին կանգնած վտանգը, հնարավոր է, դառնա արաբական աշխարհի հայության շարունակական հայաթափման հերթական, բայց, դժբախտաբար, կարևոր մի նոր օղակը: Եթե իրականանա նախորդ հարցմանն ի պատասխան թվարկված տարբերակներից որևէ մեկը, Հայաստանի տնտեսությունն այսօր ի վիճակի չի լինելու ընդունելու և տեղ տալու Սիրիայից մեծ թվով ներգաղթողների՝ մանավանդ միջին և ցած խավերից: Նույնիսկ նրանք, ովքեր Հայաստան կգան, այնտեղից ի վերջո կփորձեն մշտական բնակության տեղափոխվել հյուսիսամերիկյան կամ արևմտաեվրոպական որևէ երկիր կամ Ավստրալիա:

Հատկապես Հալեպի հայ գաղութի նոսրացումը կարող է դեպի արևմտյան երկիրներ արտագաղթի նոր ալիք խթանել նաև հարևան Լիբանանում, քանի որ Բեյրութի, Դամասկոսի և Հալեպի հայ համայնքներն իրար հետ կապված են բազմաթիվ՝ մշակութային և նույնիսկ ազգակցական կապերով: Այս դեպքում, Սիրիայից քրիստոնյա տարբեր համայնքների արտագաղթը բացասական ազդեցություն կարող է ունենալ Լիբանանի քրիստոնյա բնակչության (ներառյալ՝ հայերի) վրա՝ թուլացնելով նրա ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ և կապվածությունը իր երկրին:

Սիրիահայ գաղութի նոսրացումը կարող է միաժամանակ թուլացնել վերջին մի քանի տասնամյակներում Քուվեյթի, Արաբական Միացյալ էմիրությունների, Քաթարի և Ծոցի արաբական այլ միապետությունների մեջ նորաստեղծ հայ գաղութներին: Այս համայնքները ստեղծվել են առավելապես Լիբանանից, Սիրիայից և Իրանից աշխատանքի ավելի լայն հնարավորություններ փնտրող հայերի մեկտեղումով, և քանի որ քրիստոնյաների համար գրեթե անհնար է այս երկրներում քաղաքացիություն ստանալ և վերջնականապես այնտեղ արմատավորվել, Ծոցի երկրներում հաստատված հայերը կանոնավոր կապ են պահում իրենց ծննդավայրերի հետ: Իսկ եթե հայաթափվի ծննդավայրը, ներկայումս Ծոցի շրջանում բնակվող և աշխատող հայերը ևս կարող են լրջորեն մտածել արաբական աշխարհը վերջնականապես լքելու մասին:

Ի վերջո, Սիրիայի հայության նոսրացումն ավելի պիտի ծանրացնի արևմտահայերենի գոյատևման և արևմտահայ մշակույթի հետագա զարգացման հարցը: Հալեպը վաղուց և իրավամբ համարվել է ավանդական (այսինքն՝ գլխավորաբար արևմտահայ) Սփյուռքի թթխմորը, իսկ Սիրիայից հեռացողները և հատկապես նրանց զավակներն ու թոռներն աստիճանաբար պիտի դադարեն արևմտահայերենով խոսելուց և արևմտահայերենով ստեղծագործելուց՝ որդեգրելով իրենց հյուրընկալ երկրների լեզուները՝ անգլերենը կամ ֆրանսերենը և նույնիսկ Հայաստանի պարագայում՝ արևելահայերենը...: Արաբական աշխարհի հայաթափումով աշխարհի երեսին պիտի մնան շատ քիչ աշխարհագրական միջավայրեր, ուր հայերն ավանդաբար ու միասնաբար խոսում են արևմտահայերեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայերը Սիրիայի լիիրավ քաղաքացիներն են, վայելում են թե՛ իշխանության, թե՛ հասարակության համակրանքը: Թե՛ հայերը և թե՛ սիրացիները միմյանց համարժեք են ընկալում: Հայերը ներգրավված են Սիրիայի սոցիալ-տնտեսական և մշակութային համակարգում: Նրանք Սիրիան համարում են իրենց հայրենիքը:
- Սիրիահայ համայնքը Հայկական սփյուռքի ավանդական և կայացած, համայնքներից մեկն է: Ունի զգալի մարդկային և ֆինանսական ներուժ ու տարաբնույթ կառույցներ և ներառում է գաղափարական ու սոցիալական տարբեր շերտեր:
- Սիրիահայ համայնքը կազմված է սոցիալական և դավանական տարբեր շերտերից: Հիմնական հատվածը հայ առաքելականներն են, կան նաև հայ կաթոլիկներ և հայ ավետարանականներ:
- Սիրիահայ համայնքը տիրապետում է ինքնակազմակերպման բազմաթիվ արդյունավետ, սակայն ավանդական մեխանիզմների և կարիք ունի արդիականացնելու ազգային կազմակերպման ավանդական գործառույթները, իրականացնելու սերնդափոխություն: Խնդիրն այն է, որ Սիրիայում հայկական ազգային կառույցը շատ դեպքերում իր վրա կրում է սիրիական պետության ազդեցությունը:
- Սիրիահայ համայնքը կարելի է համարել նաև ցանցային կառույց. յուրաքանչյուր միություն ունի իր մասնաճյուղը Սիրիայի տարբեր քաղաքներում: Այսպիսով, բոլոր շրջանակները կապված են միմյանց հետ:
- Ի տարբերություն 1950-ականների, երբ սիրիահայ համայնքը ներքաշված էր գաղափարախոսական տարբեր վեճերի ու հակասությունների մեջ, ներկա փուլում սիրիահայ համայնքը կարելի է համարել միասնական կառույց, որի տարբեր շերտեր ու շրջանակներ երկխոսում ու համագործակցում են միմյանց հետ: Բացառություն են կազմում ներհամայնքային առանձին խնդիրներ /ինչպես, օրինակ՝ թեմական հարցը Դամասկոսում/, որոնք չնայած չեն կարգավորվում, բայց և ստվեր չեն գցում ընդհանուր դրական մթոնոլորտի վրա:
- Սիրիայի հայ համայնքը Սփյուռքի այն բացառիկ համայնքներից է, որը մեծ տեղ է տալիս հայապահպանությանը: Հայկական ինքնության պահպանման համար կարևոր գործոն է Սիրիայում հայկական կրթական, մշակութային ու մարզական միություններ-

րի ակտիվ գործունեությունը, հայերենի օգտագործումը, Հայրենիքի գաղափարը, կապը Հայաստանի հետ:

- Սիրիահայերը, ինտեգրված լինելով սիրիական հասարակությանը, միշտ ձգտել են պահպանել իրենց ազգային դիմագիծը:
- Հարկ է նշել նաև, որ Սիրիայի հայ համայնքի օրակարգն անքակտելիորեն կապված է Սփյուռքի օրակարգի հետ, որտեղ կարևոր տեղ ունեն Հայ դատի և Հայոց ցեղասպանության հարցերը: Սիրիահայերն այս հարցում զգալի ազատություններ ունեն՝ նշված հարցերին անդրադառնալու առումով: Սակայն այդ օրակարգի նկատմամբ պետության մոտեցումն առանձին դեպքերում պայմանավորված է եղել թուրք-սիրիական հարաբերություններում նկատվող զիգզագներով :
- Հարկ է նշել նաև, որ Սիրիայի հայ համայնքի օրակարգն անքակտելիորեն կապված է Սփյուռքի օրակարգի հետ, որտեղ կարևոր տեղ ունեն Հայ դատի և Հայոց Ցեղասպանության հարցերը: Սիրիահայերն այս հարցում զգալի ազատություններ ունեն՝ նշված հարցերին անդրադառնալու առումով: Սակայն այդ օրակարգի նկատմամբ պետության մոտեցումն առանձին դեպքերում պայմանավորված է եղել թուրք-սիրիական հարաբերություններում նկատվող զիգզագներով:
- Սիրիահայ համայնքում վերջին շրջանում հայապահպանության ուղղված ջանքերը որոշակիորեն դժվարացել են: Գլոբալիզացիան, խառնամուսնությունները, ամուսնությունների փոքր թիվը և ժողովրդագրական աճի նվազումը, արաբերենի ավելի լայն օգտագործումը, անտարբերությունը էթնիկ ինքնության պահպանման հարցում, ինչպես նաև տարածաշրջանում ստեղծված լարված իրավիճակը, երկրում կրոնականացվածության մակարդակի աճը, բացասաբար են անդրադառնում համայնքի ազգային դիմագծի վրա, սակայն ամենամեծ մարտահրավերը քաղաքական և տնտեսական անկայունությամբ պայմանավորված արտագաղթն է:
- Սիրիահայ համայնքում շատ քիչ են այն ընտանիքները, որոնց անդամներից գոնե մեկը արտերկրում չապրի: Մեծ տարածում է ստացել հայ երիտասարդների՝ դրսում ուսանելու պրակտիկան: Նրանք հեռանում են Սիրիայից և, կարելի է ասել, այլևս հետ չեն վերադառնում: Բացի այդ, ընդլայնվել է նաև Սիրիայի հարևան, մասնավորապես Ծոցի երկրներ արտագնա աշխատանքի մեկնելու միտումը:
- Սիրիայում ներկա փուլի սոցիալ-քաղաքական ճգնաժամը հայերի համար ավելի մտահոգիչ է ոչ այնքան հնարավոր իշխանա-

փոխության, այլ երկրում սկսված տնտեսական ճգնաժամի պատճառով: Մտավախություն կա, որ այն դեռևս երկար ժամանակ կշարունակվի: Այս իրողությունն առաջիկա տարիներին լրջագույն վնաս կարող է հասցնել համայնքի թվաքանակին՝ վնասելով նաև Սիրիայում հայերի հեռանկարը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով այն փաստը, որ սիրիահայ համայնքի ազգային կյանքի աշխուժացումը շատ բաներով պայմանավորված է Հայաստանից եկող ազդակներով, առաջարկում ենք հետևյալը.

- Կարիք կա, որպեսզի Հայաստանն աջակցի սիրիահայությանը՝ ժամանակակից տեխնոլոգիաների տեսանկյունից արդիականացնելու ազգային կրթական համակարգը: Խոսքն առաջին հերթին մեթոդաբանական օգնության, Հայաստանում ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման, նոր դասագրքերի կազմման մասին է, որի փորձը ձևավորվել է դեռևս խորհրդային շրջանում:
- Անհրաժեշտ է, որ մշակվեն տարբեր ծրագրեր /այդ թվում՝ ինտերնետային ցանցային կամ ուսուցման հեռավար ծրագրեր/ հատուկ սփյուռքահայերի համար՝ արևմտահայերենով, նաև Հայաստանի, հայության և այլ իրողությունների վերաբերյալ հանրագիտարանային էլեկտրոնային ռեսուրսներ, ինչը հրապուրիչ է հատկապես երիտասարդության համար: Թե՛ ֆինանսական, թե՛ մարդկային ռեսուրսի առումով այս խնդրին կարող են աջակցել նաև սիրիահայերը:
- Շահեկան կլինի, որ Հայաստանում պարբերաբար կազմակերպվեն տարբեր ոլորտներին առնչվող միջոցառումներ, սկաուտների բանակումներ, կազմակերպվեն ուսանողների հանդիպումներ, ստեղծվեն նույն մասնագիտությունները ներկայացնող մարդկանց միություններ ու շրջանակներ:
- Արդյունավետ կլինի հարցադրումների համատեղ ճշգրտումներից հետո անցկացնել Միջին Արևելքի հայ համայնքների վերաբերյալ գիտագործնական հանդիպումներ ու քննարկումներ՝ դրանց հրավիրելով սփյուռքահայերի: Այդ ճանապարհով կապերը Հայաստանի և Սփյուռքի միջև կաշխուժանան:
- Շահեկան կլինի, եթե Հայաստանի հեռուստատեսային ալիքները հանգամանորեն լուսաբանեն Հայկական սփյուռքի, այդ թվում՝ սիրիահայ համայնքի ազգային կյանքի տարբեր ոլորտները: Այդ իրողությունը նոր լիքցեր կհաղորդի հայ համայնքերին, ինչպես նաև կնպաստի Հայաստանում սփյուռքի հիմնախնդիրների ավելի ճիշտ ընկալմանը:
- Հայաստանում սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի ներգաղթը աշխուժացնելու և քաջալերելու համար անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի կառավարությունը վերջիններիս կեցու-

թյունը դյուրացնող օրենքներ մշակի, այդ թվում՝ նրանց որոշ ժամանակ ազատելով հարկերից:

- Հայաստանը, տարածաշրջանային զարգացումներում լուրջ ու հավասարակշռված քաղաքականություն վարելով, կարող է օգտակար լինել Սփյուռքի, այդ թվում՝ Սիրիայի հայությանը՝ ընկալելու ներկա ժամանակների իրողությունները: Երկարաժամկետ առումով Հայաստանը կարող է տարածաշրջանի հայությանը լիարժեք օգտակար լինել միայն այն ժամանակ, երբ տնտեսապես և քաղաքականապես հզորանա:

ՎԵՐՋԱԲԱՆ

2011թ. մարտից Սիրիայում սկսված հակահիշխանական շարժումները, ստանալով արտաքին աշխարհի քարոզչական, ռազմական և ֆինանսական աջակցությունը, երկիրը ներկա փուլում կանգնեցրել են սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի առաջ: Դամասկոսը հայտնվել է միջազգային ճնշումների ներքո, իսկ Սիրիայի ներքաղաքական գործընթացներին ակտիվորեն շարունակում են միջամտել հատկապես ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Թուրքիան, Սաուդյան Արաբիան և Կատարը: Սիրիայում և նրա շուրջ ծավալվող իրադարձությունները Հայաստանի համար մտահոգիչ են ոչ միայն այն պատճառով, որ Սիրիան Հայաստանի բարեկամ և հարևան երկիրն է, այլև Սիրիայում հայ համայնքի գոյության պատճառով:

Սիրիական հասարակության, այդ թվում՝ հայերի համար, նման զարգացումներն ինչ-որ իմաստով անսպասելի էին: Ապաքաղաքականացված լինելով հանդերձ՝ նրանք որոշեցին իրենց աջակցությունը հայտնել իշխող վարչակարգին՝ նրա մեջ տեսնելով իրենց ազգային գոյության և անվտանգության երաշխիքները: Սիրիայի շատ ու շատ քաղաքացիների նման հայերը համոզված են, որ նախագահի հեռացումը երկիրը կարող է կանգնեցնել տևական անկայունության առաջ՝ խարխլելով էթնիկ և դավանական հանդուրժողականության այն կայուն մթնոլորտը, որ ձևավորվել էր Սիրիայում Ալ-Ասադների իշխանության օրոք:

Արդյո՞ք հայերը կարող էին չեզոքություն պահպանել՝ բացահայտորեն չպաշտպանելով Բաշար Ալ–Ասադի վարչակարգին, դժվար է ասել: Ի վերջո, իշխող վարչակարգին աջակցելը նույնպես քաղաքացիական դիրքորոշում է, ինչը, ըստ էության, ի ցույց է դնում հարգանքը սիրիական պետականության նկատմամբ: Սիրիայում իշխանություն-ընդդիմություն առճակատման համատեքստում, խոսելով հայերի դիրքորոշման մասին, պետք է նկատի ունենալ նաև, որ վերջիններս վարչակարգին աջակցելուց բացի այլ դիրքորոշում չէին կարող որդեգրել, եթե հաշվի առնենք նաև, որ ընդդիմադիրներին աջակցում է Թուրքիան: Այդ երկիրը խորապես շահագրգռված է ոչ միայն Սիրիայում հայերի դիրքերի թուլացմամբ, այլև գործում է միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության հարցի միջազգային ճանաչման դեմ, որը Սփյուռքի կարևորագույն օրակարգերից մեկն է:

Աստիճանաբար Սիրիայում՝ իրավիճակի վատթարացմանը զուգահեռ, այդ երկրում հայերի հեռանկարի շուրջ քննարկումնե-

րում տեղ են գտնում նաև հոռետեսական տրամադրություններ: Նկատի է առնվում այն թեզը, թե Մերձավոր Արևելքում ցանկացած անկայունության ժամանակ թիրախ են դառնում հենց փոքրամասնությունները: Նշենք, որ Եգիպտոսի 1952թ. հեղափոխությունից, 1975-1990թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմից, նաև՝ 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությունից հետո հայերի մի զգալի մասը լքեց Մերձավոր Արևելքը և արտագաղթեց Արևմուտք: Եթե 1970-ականներին «Մեծ Մերձավոր Արևելքում» /ներառյալ՝ Թուրքիայում և Իրանում/ ապրում էր մոտ մեկ միլիոն հայ, ապա այժմ՝ մոտ 300. 000: Եգիպտոսի երբեմնի ծաղկուն հայ համայնքն այսօր վերացման շեմին է: Նույնը վերաբերում է Իրաքի, Հորդանանի կամ Պաղեստինի հայ համայնքներին: Էականորեն տուժել է նաև Լիբանանի հայությունը թե՛ թվաքանակի, թե՛ հայապահպանության տեսանկյունից:

Վերադառնալով սիրիական զարգացումներին՝ նշենք, որ հնարավոր իշխանափոխության դեպքում ընդհանուր առմամբ փոքրամասնությունների վերաբերյալ մտահոգությունն ամենևին պատահական չէր և կապված էր ցույցերի սկզբնական շրջանում ծայրահեղական շրջանակների կողմից հնչեցված «Ալավիներին՝ գերեզման, քրիստոնյաներին՝ Լիբանան» կարգախոսի հետ[69]:

Խնդիրն այն է, որ ներկայիս ընդդիմադիր շարժումները որոշակի կապ ունեն նաև Սիրիայի բնակչության մոտ 12 տոկոսը կազմող, սակայն իշխանության լծակները տասնյակ տարիներ իրենց ձեռքը պահող ալավիական վերնախավի նկատմամբ երկրի բնակչության մեծամասնությունը կազմող սուննի բնակչության դժգոհության հետ:

Ինչ վերաբերում է քրիստոնյաներին, պետք է նշել, որ թե՛ Իրաքի և թե՛ «արաբական գարնան» իրադարձություններն ավելի խոցելի են դարձրել նրանց դիրքերը Մերձավոր Արևելքում: Ասվածի ապացույցն է նաև վերջին շրջանում Եգիպտոսում ղպտիների նկատմամբ իրականացված բռնությունները[70]: Հետաքրքրական է նաև, որ Անգլիական եկեղեցու առաջնորդ Քենթերբերիի արքեպիսկոպոս Ռոուեն Ուիլյամսը, վերջերս ելույթ ունենալով բրիտանական Խորհրդարանի Լորդերի պալատում, նշեց, որ տարածաշրջա-

---

[69] Nothing simple about causes of unrest in Syria, http://www.irishtimes.com/newspaper/opinion/2011/0702/1224299933137.html

[70] USCIRF Annual Report 2011 - Countries of Particular Concern: Egypt, http://www.unhcr.org/refworld/docid/4dbe90c4c.html

նում քրիստոնյաների դիրքերն ավելի խոցելի են, քան երբևէ վերջին հարյուրամյակի ընթացքում[71]:

Սակայն Սիրիայի պարագայում կրոնական ծայրահեղականությունն այնքան էլ լայն տարածում չունի: Սիրիական ընդդիմությունը կազմված է հիմնականում երկու հատվածից՝ լիբերալ և կրոնաքաղաքական, որոնցից ոչ մեկը Սիրիայում հակաքրիստոնեական կոչերով հանդես չի եկել: Այս տեսանկյունից հետաքրքրական է Սիրիայի ընդդիմադիր «Ազգային խորհրդի» ժամանակավոր նախագահ Բուրհան Ղալյունի հարցազրույցը «The Wall Street Journal»-ում, որում՝ ի պատասխան Սիրիայի դավանական փոքրամասնություններին առնչվող հարցին, նա նշել է, թե Սիրիայի բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առաջ, և կրոնական գործոնով պայմանավորված որևէ խտրականություն մեծամասնության և փոքրամասնության միջև լինել չի կարող: Վերջիններս պետք է դիտարկվեն ոչ թե որպես փոքրամասնություններ, այլ պարզապես քաղաքացիներ[72]: Նման դիտարկումն, իհարկե, լավատեսություն է ներշնչում, սակայն որևէ մեկը չի կարող ասել, թե Բաշար Ալ-Ասադի հնարավոր հեռացումից հետո երկրում ինչ իրավիճակ կարող է ստեղծվել:

Հատկանշական է, որ Սիրիայի հայ համայնքի հեռանկարին առնչվող հարցերն այսօր քննարկվում են թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Կարծիքներն, իհարկե, շատ դեպքերում հակոտնյա են: Առանձին տեսակետի համաձայն՝ Բաշար Ալ-Ասադի հնարավոր իշխանափոխությունը մեծագույն վնաս կհասցնի հայերին՝ կասկածի տակ դնելով Սիրիայում նրանց հետագա ազգային գոյությունը՝ խնդիրներ ստեղծելով նույնիսկ ֆիզիկական անվտանգության ոլորտում[73]: Ըստ մեկ այլ տեսակետի՝ Սիրիայում ներկայումս պայքար է ծավալվում հանուն ժողովրդավարության: Հետևաբար չի բացառվում, որ ապագա բարեփոխված Սիրիայում հայերը՝ երկրի մյուս քաղաքացիների նման, օգտվեն ժողովրդավարական ազատություններից, ինչպես, օրինակ՝ Լիբանանում: Այդ դեպքում

---

[71] House of Lords Debate on Christians in the Middle East, http://www.archbishopofcanterbury.org/articles.php/2277/house-of-lords-debate-on-christians-in-the-middle-east

[72] Syria Opposition Leader Interview, 'Stop the Killing Machine', http://online.wsj.com/article/SB10001424052970203833104577071960384240668.html

[73] Տե՛ս՝ http://www.168.am/am/articles/29996

սիրիահայ համայնքն էլ հնարավորություն կունենա դառնալ երկրի հասարակական-քաղաքական կյանքի լիարժեք մասնակիցը:

Հայերը Սիրիայի մնացած քաղաքացիների նման մտահոգված են երկրում իրավիճակի վատթարացմամբ: Անկայունությունը, տնտեսական ծանր իրավիճակը, գործազրկությունը, բարոյահոգեբանական մթնոլորտի աղճատումը, բնականաբար, բացասաբար են անդրադառնում սիրիական հասարակության, այդ թվում՝ հայերի վրա: Այս իրավիճակը ոչ դրականորեն է ազդում հայկական կրթական, մշակութային և մարզական հաստատությունների գործունեության վրա, որոնք հիմնականում գոյատևում են հայերի նվիրատվությունների հաշվին: Սակայն համայնքի կյանքը շարունակվում է նախկին հունով և նրա անվտանգությունը ներկայումս վտանգված չէ: Երկրի մյուս քաղաքացիների նման հայերը ստիպված են դիմակայել ներկա փուլի դժվարությունները:

Հնարավոր իշխանափոխության դեպքում հազիվ թե կանխամտված որևէ դավադրություն հայերի նկատմամբ տեղի ունենա, քանի որ ներքին հակասությունների շղթայում նրանք ամենևին ներգրավված չեն և մինչ օրս վայելել են հասարակության գրեթե բոլոր շերտերի համակրանքը: Հիմնական լարվածությունը, ըստ ամենայնի, կարող է ծավալվել սուննիների և ալավիների միջև:

Ամեն պարագայում, թե՛ երկարաժամկետ, թե՛ կարճաժամկետ առումով Սիրիայում ծավալվող ներկա զարգացումները հնարավոր բացասական հետևանքներ կունենան հայ համայնքի համար՝ էլ ավելի խթանելով արտագաղթը:

ЗАКЛЮЧЕНИЕ

- Армяне являются полноправными гражданами Сирии, которые пользуются симпатией, как правительства, так и общества. Армяне и сирийцы воспринимают друг друга равноценными членами общества. Армяне вовлечены в социально-экономическую и культурную систему Сирии. Они считают Сирию своей родиной.
- Армянская община Сирии одна из традиционных и устоявшихся общин армянской диаспоры. Община обладает существенным человеческим и финансовым потенциалом, подразделениями и различными структурами, а также включает в себя различные идеологические и социальные слои.
- Армянская община Сирии состоит из различных социальных и религиозных слоев. Ее основная часть это приверженцы апостолической церкви, однако имеются также армянские католики и евангелисты. На сегодняшний день численность сиро-армянской общины составляет 60.000 – 80.000 человек.
- Армянская община Сирии обладает многочисленными достаточно успешными, но в тоже время традиционными механизмами самосохранения. Вместе с тем, она нуждается в модернизации традиционных процессов национального единения, осуществлении смены поколений. Проблема заключается в том, что армянская национальная структура в Сирии зачастую испытывает на себе влияние сирийского государства.
- Армянскую общину Сирии можно также считать сетевой организацией, где каждое объединение имеет свое ответвление в разных городах Сирии. Таким образом, все звенья связаны друг с другом.
- В отличие от 1950-ых гг., когда сиро-армянская община была втянута в различные идейные диспуты и противоречия, сегодня сиро-армянскую общину можно воспринимать как более сплоченную структуру, различные слои и звенья которой находятся по отношению друг к другу в состоянии диалога и сотрудничества. Исключением являются отдельные внутриобщинные проблемы (к примеру, вопрос епархий Дамаска), которые хотя и не могут быть

урегулированы окончательно, но в тоже время и не бросают тень на общую позитивную атмосферу внутри общины.

- Армянская община Сирии одна из тех уникальных общин диаспоры, которая уделяет особое место самосохранению армян. Для сохранения идентичности армян важным фактором служит активная деятельность в Сирии армянских образовательных, культурных и спортивных объединений, использование армянского языка, идея родины, связь с Арменией.
- Сирийские армяне, будучи вовлечены в сирийское общество, постоянно стремились сохранить свой национальный облик. Сегодня также продолжают существовать традиционные отношения, а деятельность армян обусловливается их принадлежностью к данной общине.
- Необходимо заметить, что повседневная деятельность армянской общины Сирии нераздельно связана с повседневной деятельностью диаспоры, где важное место занимают Армянский Вопрос и феномен Геноцида Армян. В этом смысле, сирийские армяне всегда пользовались значительными свободами при обсуждении указанных вопросов. Однако, подход государства относительно указанной деятельности, в отдельных случаях обусловливается турецко-сирийскими отношениями.
- В последнее время старания, направленные на сохранение армянской идентичности в сиро-армянской общине, сталкиваются с новыми сложностями. Та же глобализация, смешанные браки, сокращение количества браков, демографический упадок, широкое использование арабского языка, сложившаяся тяжелая политическая ситуация в регионе, рост уровня религиозности, негативно сказываются на национальном облике армянской общины, однако наибольшим вызовом является, вызванная экономическими причинами, миграция.
- В армянской общине Сирии практически нет семей, в которой хоть кто-нибудь не находился бы в другой стране. Среди армянской молодежи большое распространение получила практика получения образования заграницей. Такие люди покидают Сирию, и можно сказать, более не возвращаются. Кроме этого, все больший оборот набирает также стремление людей уехать на заработки в соседние страны, в частности, страны Персидского залива.

- Нынешний социально-политический кризис в Сирии все больше беспокоит армян, и это вызвано не столько возможной сменой власти, сколько все большим углублением экономического кризиса в самой стране. Имеется опасение, что он продлится еще долгое время. В ближайшей перспективе такая ситуация может пагубным образом отразиться на численности общины, а также нанести серьезный вред перспективам существования армян в Сирии в целом.

Принимая во внимание факт, что активизация национальной деятельности дамасской общины сирийских армян во многом обусловливается происходящими из Армении факторами, мы предлагаем следующее:

- Необходимо, чтобы Армения способствовала сиро-армянской общине в вопросе технологической оптимизации национальной системы образования. Речь в первую очередь идет о методологической помощи, подготовке и повышении квалификации учителей в Армении, составлении и приобретении новых учебников, необходимая мера, практиковавшаяся еще в советское время.
- Специально для армян диаспоры необходимо разработать различные программы (в том числе программы с использованием сети интернет) на западно-армянском языке. Для армян необходимо создать электронные энциклопедические ресурсы, которые должны вызвать особый интерес молодежи. Для обеспечения финансового и человеческого ресурса сиро-армянская община обладает необходимым потенциалом и может содействовать выполнению поставленной задачи.
- Было бы также целесообразным, если бы в Армении периодически организовывались, посвященные различным областям мероприятия, скаутские лагеря, встречи студенчества, создавались бы союзы и клубы, объединявшие бы людей одной специальности.
- Было бы полезным, после совместного выяснения ряда вопросов, проводить научно-практические встречи и дискуссии с привлечением армянской диаспоры и посвященные армянской общине Среднего Востока. Это привело бы к интенсификации отношений между Арменией и диаспорой.

- Было бы также целесообразным, если бы телевизионные каналы Армении детально освещали различные сферы армянской диаспоры, в особенности деятельность сиро-армянской общины. Это явление предало бы новый стимул армянским общинам Сирии, а также способствовало более полноценному восприятию в Армении общих проблем диаспоры.
- С целью поощрения и стимуляции возвращения на родину представителей диаспоры, и в частности сирийских армян, необходимо, чтобы правительство Армении выработало законы, направленные на облегчение проживания последних в Армении, а также их временное освобождение от налогов.
- Армения, проводящая в регионе серьезную сбалансированную политику, может оказать содействие диаспоре, в частности сирийским армянам, для восприятия с выгодой для себя нынешних событий.
- В долгой перспективе Армения может оказать армянам региона полноценную поддержку только в том случае, когда она усилится как экономически, так и политически.

SUMMARY

- The Armenians are rigorous citizens of Syria, where they enjoy both governmental and social sympathy. The Syrians accept Armenians as full-right citizens. The Armenians are involved in to both social-economic and cultural system of Syria. They consider Syria as their motherland.
- The Armenian community of Syria is one of the traditional and established communities in Diaspora. The community has its strong both human and financial potential, subdivisions and various organizations. It also includes various ideological and social stratums.
- The Armenian community of Syria includes various social and religious stratums. The major part of the community consists of adherents of the apostolic church, though there are also Armenian Catholics and Evangelists in it. In present day, the number of the community is fluctuating between 60.000 and 80.000 people.
- The Armenian community in Syria possesses many successful, but also traditional mechanisms, though it still has to modernize the traditional methods of its national self-identity, as well as to promote the process of alternation of generations. The problem is that the Armenian community in Syria is often influenced by the Syrian governmental policy.
- The Armenian community in Syria can be also considered as a network. Every unit has its own branch in other cities of Syria. In this sense, all of the links within one chain are connected with each other.
- Unlike the 1950s, when Armenian community in Syria was engaged in to different ideological disputes and conflicts, the Armenian community in Syria can be currently regarded as a more cohesive unit, the different links of which are ready for a dialog and cooperation with each other. Only some problems inside the community, such as the question of Damascene diocese, can be considered as a rare exclusion in this regard. Although the latter issue can never be regulated, it would not cast a shadow on a general positive atmosphere inside the community.
- The Armenian community in Syria belongs to those rare communities inside the Diaspora that pays a big attention to the

self-identity of Armenians abroad. As an important circumstance for maintaining of Armenians` identity in Syria, serves a crucial activity of Armenian building, cultural and sport organizations, the use of Armenian language, the idea of motherland, as well as strong connection with Armenia.

- While being strongly integrated into Syrian society, the Syrian Armenians have been aspiring to preserve their national image. Today, the traditional ways of communication are still in use. The activities of the Armenians can be explained by their self-identification within a certain community.
- It is worth of noting, that the activities of the Armenian community in Syria is strongly connected with those ones of the entire Diaspora, where both Armenian Question and Armenian Genocide are still of a great importance. In this sense, the Syrian Armenians enjoy certain freedom while discussing the aforementioned topics. However, the governmental approach towards the mentioned activities sometimes depends on Turkish-Syrian relationship as well.
- In the last period, however, one has to be admitted that the efforts of the Armenian community in Syria to maintain the Armenian self-identity has faced certain problems. The same globalization, mixed marriages, a descending number of marriages in general, decay in demography, a broad use of Arabic language, as well as current political and social situation in the region do strongly affect the national image of the community. But the most oppressive challenge must be a migration process caused by social circumstances.
- There is nearly no family inside the community where at least one person would not go abroad for a better life. Moreover, it became very popular among the Armenian young people to leave Syria for abroad with purpose of getting education in developed countries. They leave Syria and normally never come back again. One should also be added that there is big number of those people who try to find a job in neighboring countries, particularly those located in the Persian Gulf region.
- The social-political crisis of nowadays Syria brings huge troubles to Armenians. And this is not because of a possible transition of power that may take place in Syria, but much more because of a crucial social-economic crisis in their country. The crisis may take rather long time until it is over. Within a few next years this reality

may seriously harm the population within the community, but also destroy the perspectives of the Armenians in general.

Taking into account the fact, that the intensity of the national life of the Damascene Armenian community is in many cases influenced by the factors that derive from Armenia, we can offer the following points:

- It could be useful, if Armenia would support the Armenian community in Syria by means of lifting the national buildings system on a new level, and this is especially from the technological point of view. First of all the question is about to support the community with methodological tools, preparation of teachers in Armenia, edition of new books for schools, something what was in practice still in the Soviet times.
- It could be also useful, if both special programs written in western Armenian language for the Diaspora, and those based on internet and other networks are worked out and developed in future. Another point could be a creation of electronic encyclopedias dealing with various aspects of Armenia and Armenians, what would certainly awake an interest among the young people. For implementation of these goals the Syrian Armenians can provide both financial and human resources too.
- It could be profitable, if time to time a point events devoted to various topics of every day life were organized in Armenia. In this sense, the scouting, meetings of teachers, as well as creation of unions and alliances, that would bring together the people having the same specialization and qualification, could be undoubtedly very useful.
- It is important to organize scientific meetings and discussions devoted to various aspects of the Middle East, and which would result from the work conducted in cooperation with Armenians living abroad. This will facilitate the enhancement of relationship between Armenia and Diaspora.
- It could be of some use if the TV channels of Armenia would illuminate in details certain aspects of Armenian Diaspora, particularly an every-day life of the Armenian community in Syria. This would give a new motivation to the Armenian communities, as well as facilitate an adequate and full perception in Armenia of general problems of the Diaspora.

- With a purpose of encouraging and stimulation of the return to their motherland of Diaspora`s members, and especially the Syrian Armenians, the government of Armenia should work out a number of laws that will facilitate the process of integration of such Armenians into community, as well as release them from fiscal obligations for a while.
- Armenia, while running in the region stabile and balanced policy, can support the Diaspora, particularly the Armenians of Syria, to understand the realities of the time for getting its own profits.
- In long-term perspective Armenia can support the Armenians of the region, once it achieves both economical and political power.

ՀԱՎԵԼՎԱԾ I

Հայկական տպագիր մամուլը Սիրիայում ֆրանսիական մանդատի շրջանում[74]

Պարբերական մամուլի անվանումը	Քաղաք	Տեղեկություններ	Գործունեության տարիները
Հայ ձայն	Հալեպ	Հիմնադիրն էր Սեդրակ Կեպենյանը	1918-1919
Սեբաթ	Հալեպ	Հիմնադիրն էր Հովսեփ Աջամյանը:	1918-1965
Սուրիական մամուլ	Հալեպ	ՍԴՀԿ տպարան: Հալեպ է տեղափոխվել Ադանայից:	1922-1926
Քոլեջ	Հալեպ	Ամերիկյան քոլեջի տպագրատուն: Հալեպ է տեղափոխվել Այնթապից:	1922-1945
Մարանաթա	Հալեպ	Հոգևոր եղբայրության կրոնական հրատարակություն:	1922-1963
Արաքս	Հալեպ	Հիմնադիրն էր Բյուզանդ Թափալյանն ու նրա եղբայրը: Տպագրում էին հոգևոր գրականություն, պատմական գրքեր:	1924-1930

[74] Ըստ Պարիկեան Հ., Վարժապետեան Հ., Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու, Հալէպ, 1973:

Արարատ	Հալեպ	Հրատարակում էր «Եփրատ »-պարբերականը և պատմվածքներ:	1924-1942
Անի	Հալեպ	Հիմնադիրն էր Ավետիս Էկմեկջյանը: Տպագրում էր գրքեր, թերթեր, օրացույցներ և այլն:	1929
Տեր- Սահակյան	Հալեպ	Շարունակում է «Արաքս պրեսի» գործունեությունը: Տպագրում էր հայատառ թուրքերենով նովելներ:	1930-1949
Ռոդոս	Հալեպ	Հիմնադիրն էր Թորոս Թերջանյանը	1934
Բոզոկլյան	Հալեպ	Հիմնադիրն էր Մինաս Բոզոկլյանը:	1936-1941
Տիգրիս	Հալեպ		1937
Արծագանք	Հալեպ		1938-1939
Ձիզմեդջյան	Հալեպ	Հիմնադիրն էր Դանիել Ձիզմեդջյանը	1941
Եփրատ	Հալեպ	Տպագրում էր ՌԱԿ–ը:	1942-1949
Սևան	Հալեպ	Հիմնադրել էին մի խումբ ուսուցիչներ, որոնց շարքում էր նաև Սիմոն Սիմոնյանը:	1944-1946
Նաիրի	Հալեպ	Հիմնադրել է Անդրանիկ Ծառուկյանը:	1945-1955

ՀԱՎԵԼՎԱԾ II

Սիրիայում 53 հայկական դպրոցների հիմնադրման ժամանակագրությունը՝ ըստ Ա. Բեդյանի[75]

Տարեթիվը	Քաղաքային դպրոցներ	Գյուղական դպրոցներ	Ընդամենը
Մինչև 1920թ.	3	4	7
1920–1929	14	6	20
1930–1939	10	8	18
1940–1949	3	–	3
1950–1960	1	4	5

ՀԱՎԵԼՎԱԾ III

Սիրիայում հայկական դպրոցների և դրանցում ուսանող աշակերտության թվաքանակը՝ 1929 թ. տվյալների համաձայն[76]

Թիվ	Դպրոցի անվանումը	Վայրը	Իգական սեռի աշակերտներ	Արական սեռի աշակերտներ	Ընդամենը
1	Աղջիկների և տղաների ազգային Հայկազյան վարժարան	Հալեպ	390	350	740

[75] Bedian A.N., A Study of Elementary Schools in Syria, Related to their History, Background and Teacher's Belief's, MA Thesis, Beirut: American University of Beirut, 1961, p. 17.

[76] Աղյուսակը վերցված է Հայ առաքելական տարեգրքից, որ տպագրվել է Սիրիայում մոտավորապես 1929թ., էջ 112-114: Ըստ Migliorino Nicola, նշվ. աշխ., էջ 71:

2	Աղջիկների և տղաների ազգային Մեսրոպյան վարժարան	Հալեպ	247	190	437
3	Ազգային Սահակյան վարժարան	Հալեպ	60	50	110
4	Կրթասիրաց վարժարան	Հալեպ	329	221	550
5	Կիլիկյան ճեմարան	Հալեպ	328	224	552
6	Չերսանջակ	Հալեպ	100	90	190
7	Աղջիկների և տղաների Արմենյան վարժարան	Հալեպ	60	40	100
8	Աղջիկների և տղաների Ազգային վարժարան	Ալեքսանդրետի սանջակ	85	95	180
9	Ազգային Նուպարյան վարժարան	Ռաքքա	156	159	315
10	Պետական հայկական վարժարան	Սողուք Օլուք	33	22	55
11	Ազգային վարժարան	Բեյլան	35	28	63
12	Ազգային վարժարան	Կերեկ խան	110	90	200
13	Ազգային վարժարան	Ձարաբ-լուս	120	30	150
14	Ազգային վարժարան	Հոմս	55	40	95
15	Ազգային վարժարան	Անտիոք	23	22	45
16	Ազգային վարժարան	Ազազ	65	95	160

17	Սահակյան ազգային վարժարան	Քեսաբ	70	42	112*
18	Ազգային Ուսումնասիրաց միացյալ վարժարան	Քեսաբ	40	-	40
19	Քարադուրանի Ազգային Մեսրոպ Մաշտոց վարժարան	Քեսաբ	60	28	88
20	Քարադուրանի վարժարան	Քեսաբ	18	10	28
21	Միացյալ Կերկեն վարժարան	Քեսաբ	28	24	52
22	Բելջղալի միացյալ վարժարան	Քեսաբ	10	8	18
23	Դուկ Աղաչ ազգային վարժարան	Քեսաբ	12	12	24*
24	Բիթիաս հայկական ազգային վարժարան	Ալեքսանդրետի սանջակ	39	26	65
25	Հաջի Հաբիբլի ազգային մանկապարտեզ	Ալեքսանդրետի սանջակ	45	20	65
26	Յողուն Օլուք ազգային վարժարան	Ալեքսանդրետի սանջակ	59	36	95
27	Խըդր Բեկ ազգային վարժարան	Ալեքսանդրետի սանջակ	15	10	25

28	Վակըֆ ազ-գային վար-ժարան	Ալեք-սանդ-րետի սանջակ	24	12	36*
29	Քաբուսիեի վարժարան	Ալեք-սանդ-րետի սանջակ	20	-	20
30	Ազգային վար-ժարան	Բաբ	25	20	45
31	Ազգային վար-ժարան	Մենբիջ	35	30	65
32	Ազգային վար-ժարան	Ռաս Ալ–Այն	27	24	51
33	Ազգային վար-ժարան	Ռաքքա	28	32	70
34	Համայի ազ-գային վար-ժարան	Համա			40
35	Ներսիսյան վարժարան	Հալեպ			230
36	Ազգային դպ-րոց	Արաբ Բունար			78
37	Ազգային դպ-րոց	Դամաս-կոս			375
38	Մանկապար-տեզ	Դամաս-կոս			70
39	Մանկապար-տեզ	Դամաս-կոս			60
40	Հայ առաքե-լական վար-ժարան	Դամաս-կոս			150
41	Հայ կաթոլիկ վարժարան	Դամաս-կոս			80
42	Ֆրանս–հայ-կական վար-ժարան	Դամաս-կոս			60

* Ընդհանուր թիվը ճշտված է բնագրում առկա թվերի գումար-մամբ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ., Եր., 1964:
2. Ազէզեան Հ., Հայերի հնագույն ներկայութիւնը Սուրիոյ մէջ, Տաթեւ հայագիտական տարեգիրք, 1, Հալէպ, 2008:
3. Ազէզյան Հ., Դամասկոսի հայ գաղութի մասին, «Հասկ» հայագիտական տարեգիրք 2002-2006, Լիբանան:
4. Արիսյան Ն., Հայ պատգամավորները Սիրիայի Ազգային ժողովում 1928-2011, Դամասկոս, 2011 /արաբերեն/:
5. «Գեղարդ», Սուրիահայ տերեգիրք, Ա գիրք, Հալեպ:
6. Դամասկոսի հայ կաթողիկե բարեսիրական միության տարեկան տեղեկագրեր, 2006:
7. Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947:
8. Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Եր., 1986:
9. Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը. անցեալին եւ ներակայիս, Պէյրութ, 1964:
10. Հայ դատի նվիրյալը. Ֆրիտյոֆ Նանսեն, Փաստաթղթերի ժողովածու, Եր., 2005:
11. Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:
12. Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002
13. Հովյան Վ., Սիրիայի հայ ավետարանական համայնքը, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5027
14. Մարգարյան Ն., Հայ տարագիրները Սիրիայում և հայ-արաբական հարաբերությունները 1915-1922թթ. /ատենախոսություն/, Եր., 2011:
15. Մելքոնյան է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:
16. Նաջարյան Ե., Արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ Նահդան, Եր., 1988:
17. Պարիկեան Հ., Վարժապետեան Հ., Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու, Հալէպ, 1973:
18. Սարգսյան Ա., Հայ երիտասարդաց ընկերակցություն, Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:
19. Սարգսյան Ա., Թեքեյան մշակութային միություն, Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:
20. Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Անթիլիաս, 1954:

21. Гриншилдс Х., Т., Поселение армяснких беженцев в Сирии и Ливана в 1915-1939гг., Ереван, 1982/2.
22. Дятлов В., Мелконян Э., Очерки социокультурной типологии. Армянская диаспора, Ер., Институт Кавказа, 2009.
23. Косач Г., Красный флаг над Ближним Востоком?, М., 2001.
24. AGBU, A Brief Overview of AGBU in Lebanon, 2001.
25. Atamian P., Histoire de la communauté Arménienne catholique de Damas, Beyrouth 1964.
26. Bedian A.N., A Study of Elementary Schools in Syria, Related to their History, Background and Teacher's Belief's, MA Thesis, Beirut: American University of Beirut, 1961.
27. Hinnebusch R., Syria: Revolution from Above, London, New York, 2001.
28. House of Lords Debate on Christians in the Middle East, http://www.archbishopofcanterbury.org/articles.php/2277/house-of-lords-debate-on-christians-in-the-middle-east
29. Migliorino N., (Re) constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, New York, Oxford, 2008.
30. Middle East Journal, Chronology, Syrian Arab Republic, 22 (1), Winter, 1968, 1969.
31. Minassian G., Guerre et Terrorisme Arméniens, Paris, 2002.
32. Nothing simple about causes of unrest in Syria, http://www.irishtimes.com/newspaper/opinion/2011/0702/1224299933137.html
33. Ragland J.K, The Free Educational System of the Republic of Lebanon, PhD. Dissertation, University of Oklahoma, 1969.
34. Petran T., Syria: A Modern History, London and Tonbridge, 1972.
35. Sanjian A., "The Armenian Minority Experience in the Modern Arab World", Bulletin of the Royal Institute for Inter-Faith Studies, 3 (1), 2001.
36. Seale P., The Struggle for Syria: A Study of Post-War Arab Politics, Oxford, New York, Toronto, 1965.
37. Seale P., Asad of Syria: The Struggle for the Middle East, London, 1988.
38. Syria Opposition Leader Interview, 'Stop the Killing Machine, http://online.wsj.com/article/SB10001424052970203833104577071960384240668.html
39. USCIRF Annual Report 2011 - Countries of Particular Concern: Egypt, http://www.unhcr.org/refworld/docid/4dbe90c4c.html

40. Valter S., La Construction Nationale Syrienne: Légitimation de la Nature Communautaire du Pouvoir par le Discours Historique, Paris, 2002.

Հարցազրույցներ

1. Հարցազրույց իրավաբան Գրիգոր Էպլիղաթյանի հետ, Հալեպ, 12 նոյեմբերի, 2003, ըստ՝ Migliorino N., (Re) constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, New York, Oxford, 2008
2. Հարցազրույց Ս. Սումբուլյանի հետ, Հալեպ, 14 նոյեմբերի, 2003, ըստ՝ Migliorino N., (Re) constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, New York, Oxford, 2008
3. Հարցազրույց Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Փոլադյանի հետ
4. Հարցազրույց Հայ Առաքելական եկեղեցու Դամասկոսի թեմի առաջնորդ Արմաշ եպս. Նալբանդյանի հետ
5. Հարցազրույց Դամասկոսի Հայ կաթողիկե համայնքի պատասխանատու Ս. Քեշիշյանի հետ
6. Հարցազրույց 2005-2010թթ. Հայ ավետարանական եկեղեցու Դամասկոսի հովիվ պատվելի Տ. Բասմաճյանի հետ
7. Հարցազրույց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչության անդամ, Դամասկոսի Հայ երիտասարդաց ընկերակցության ատենապետ Վ. Յակուբյանի հետ
8. Հարցազրույց Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) ներկայացուցչի հետ
9. Հարցազրույց Հայ մարմնամարզական միության (ՀՄՄ) Սարգիս Տխրունի ուսանողական միության վարչության անդամ Ն. Էլմաջյանի հետ
10. Հարցազրույց Թեքեյան մշակութային միության, ՌԱԿ և ՀԲԸՄ անդամ դր. Ձ. Բարսեղյանի հետ
11. Հարցազրույց Դամասկոսի համալսարանի դասախոս Սիրիայի գրողների միության անդամ դր. Ն. Արիսյանի հետ
12. Հարցազրույց հալեպահայ մտավորական, Քարեն Եփիսե ճեմարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ դր. Հ. Չոլաքյանի հետ

13. Հարցազրույց հալեպահայ մտավորական Միհրան Մինասյանի հետ
14. Հարցազրույց հալեպահայ ազատ լրագրող և իրավաբան Հ. Էքմանյանի հետ
15. Հարցազրույց Սիրիայի գրողների միության անդամ, հրապարակախոս Հ. Քալսահակյանի հետ
16. Հարցազրույց Միչիգանի համալսարան-Դիրբոռնի հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ, արևելագետ, պրոֆ. Ա. Սանճյանի հետ

Կայքէջեր

1. http:// www.online.wsj.com.
2. http://www.168.am.
3. http://www.irishtimes.com.
4. http://www.unhcr.org.
5. http://www.archbishopofcanterbury.org.
6. http://www.kantsasar.com/
7. http://www.hamazkasyr.com /

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ
ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ.
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ARAKS PASHAYAN
LILIT HARUTYUNYAN

THE ARMENIAN COMMUNITY OF SYRIA.
ACTUAL ISSUES

Գիտական խմբագիր՝ Արամ Գասպարյան

Տեխնիկական խմբագիր՝ Անի Փաշայան / բ.գ.թ./

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, 24 Գ
Կայք՝ http://orient.sci.am/
էլ.-փոստ՝ info@orient.sci.am
Հեռախոս՝+ (374 10) 58 33 82

Ստորագրված է տպագրության՝ 10.01.2012: Չափսը՝ 60 x 84 1/32:
Թուղթը՝ օֆսեթ № 1: Տպագրությունը՝ օֆսեթ: 9,625 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ
հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ lusakn@rambler.ru